ԳԻՐՔ LXIV



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1910 № 5—6 ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ

ԹԻՖԼԻՍ

ԵԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՊՕԼԻՍ. 7.

1910

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կար. Վ. Շահնազարեանց. պատկեր.

Կարապետ վարդ. Շահնազարեանց. կենսագրական ակնարկ. Կ. Կոստանեան 3

Դարդ ու վարդ } բանաստ. Ցար. Պետրոսեան 39
* * *

Պատմութիւն Սասանեանց. պրոֆ. Կրիմսկու. Մ. Շովրեան 40

Մի օր. վէպ. Արսէն 46

Տ. Կոստանդին Զ. Վահկացի. Մաղաքիա արքեպս. Օրմանեան 61

Էդգար Ալլէն Պօ. Մարզօ 70

Նորադոյն պատմագիտութիւն, Կարլ Լամպրեխտի. գերմ. թարգմ. Pessimist 77

Աքսորականները. մի պատկեր. ԲօճՔor 87

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

1. 606 կամ Հատա. 2. դր. Դուայէնի հրաշագործ էլիքսիրը։ Օր. Նուարդ Աղանեան 94

Սատացուած գրքեր 96

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ուսուցչական խնդիր։—Հայոց եկեղեցին Թիւրքիայում և միտինգներ։—Դարձեալ Օրմանեան սրբազան։—Լուրեր. 97

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԻՐՔ LXIV



ՄԵՂՈՒ

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1910 № 5-6 ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ

ԹԻՖԼԻՍ
ԵԼԵՔՏՐԱՅԱՐԺ ՏՊ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՊՕԼԻՑ. 7.
1910

ԿԱՐԱՊԵՏ Վ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

ՀՐԱՏ. „ԼՈՒՄԱՅ"-Ի

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Ա.

Մեր հոյակապ հայրապետներից մէկը, տ. Ներսէս Աշտարակեցին, սովոր էր միշտ գանգատել, թէ վանական դասի մէջ մարդ չունի եկեղեցու վարչական պաշտօնների համար։

Ասենք այդ սովորութիւնը գրէթէ ԺԹ. դարու բոլոր կաթողիկոսներին էր յատուկ, որոնք այդ անում էին մեծ մասով իրենց անգործութիւնը վարագուրելու համար։

Սակայն տ. Ներսէս Ե. իւր տրտունջներն յայտնելու ժամանակ, անշուշտ, ուզում էր իւր նախորդի, տ. Յովհաննէս Ը. Կարբեցու հայրապետութեան ապարդիւն լինելն ապացուցանել։

Փայլուն չէր արդարև Կարբեցու հայրապետութիւնը և նայելով այն պայմաններին, որոնց մէջ նա ժառանգեց հայրապետական աթոռը, չէր էլ կարող փայլուն լինել։ Սակայն մի բան հաւաստի է, որ տ. Յովհաննէս Ը. հետամուտ եղաւ վանական դասի հեղինակութիւնը բարձր պահելու, և այդ նպատակի համար բարեկարգելով Մայր աթոռի ժառանգաւորաց դպրոցը, տպարանն ու գրանոցը, սկիզբն դրեց վանական նոր սերունդ պատրաստելու գործին։ Այդ գիտենք մենք նորա սկզբնական գործունէութիւնից, որին նա ձեռնարկեց գրէթէ իւր օծումից անմիջապէս յետոյ (օծուեցաւ 1831 նոյ. 8 ին)։

Այսպէս, օրինակ, 1832 փետր. 6-ին նա գրում է

Տփխիս Մինաս եպիսկոպոսին, որ «Հալլաբարցի տպագործ Յովակիմին» որն յառաջ Ներսիսեան դպրոցի տպարանումն էր ծառայում, վարձէ և ուղարկէ Էջմիածին, որովհետև արդէն տպարանի պիտոյքները պատրաստել է և կարելի է գործն սկսել։ Նոյն փետր. 27-ին կաթողիկոսը գրում է Մոսկով Սալլանթեան Միքայէլ վարդապետին (յետոյ արքեպիսկոպոս) որ ս. Էջմիածնի և Վաղարշապատի ուսումնարաններում հայկաբանութեան ուսուցիչ է կարգել Թաղիադեան Մեսրոպին, որն ասում է, ընդունակութիւն ունի և տպարանի գործադրութեան, և նորա միջոցով ինքը բերել է տուել Հնդկաստանից նոր պարագաներ. միևնոյն ժամանակ կաթողիկոսը պատուիրում է Սալլանթեանին իրեն հետ Մոսկովից բերել «երկու լաւագոյն ձուլիչ»։ Նոյն տարուայ մարտ ամսին կաթողիկոսը գրում է Ս. Պետերբուրգ Լազարեան իշխաններին, թէ արդէն չորս ամիս է ինչ սկսուել է ուսումը վանքի և գիւղի ուսումնարաններում, իսկ յունիսի 29-ին նշանակելով Շահխաթունեան Յովհաննէս վարդապետին (յետոյ եպիսկոպոս) Սինոդի անդամ, կաթողիկոսը միևնոյն ժամանակ կարգում է նորան «առանձին վերահայեաց հոգաբարձու ի վերայ գործարանի տպագրութեան, եւ զրանոցի Մայր Աթոռոյս» և այդ պարտաւորութիւնների համար յանձնում է Շահխաթունեանին յատուկ գրաւոր հրահանգներ։ Այդ իսկ ժամանակներում տ. Յովհաննէս Ը. ունեցաւ յատուկ թղթակցութիւն Լազարեան Խաչատուր աղայի հետ, որը խոստացաւ ուղարկել Մոսկովից տպարանի համար լաւ վարպետներ, դպրոցի համար մատնացոյց արաւ ձեռնհաս ուսուցիչների, և յանձն առաւ երեք աշակերտ ընդունել Լազարեան Ճեմարանն ըստ ընտրութեան կաթողիկոսի։

1832 յունիսի 23-ին տ. Յովհաննէս Ը. պատուիրում է Յովսէփ արքեպիսկոպոսին ամէն միջոց գործ դնել գնելու կամ մի կերպ ձեռք բերելու Ալլահշիւքրեան Մարտիրոսից այն հազուագիւտ ձեռագիրը, որ «Յայսմաւուրքից էլ ա-

ւելի մեծ» դիրք ունի։ Տեղը չէ Կարբեցու այսպիսի ձեռնարկութիւնները միառմի թուել և բացատրել նոցա ընթացքը. այսքանն յիշելն էլ կարևոր էր ցոյց տալու համար, թէ տ. Յովհաննէս Ը. իւր հայրապետութեան սկզբից ս. Էջմիածնի անշքութիւնը փարատելու համար դպրոց, տպարան, գրանոց բարեկարգելու հետևեցաւ և իւր վանականներին այդ հաստատութիւնների շուրջը ժողովելու և զարգացնելու մեծ հակումներ ցոյց տուեց։ Թէպէտև խիստ անյաջող պայմանների մէջ գոլով, նա հետզհետէ աւելի ևս շփոթուեցաւ նոր աննպաստ հոսանքների մէջ, սակայն իւր ձգտումներից չշեղուեցաւ երբէք։ Սորա պերճախօս յայտարարն է Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոսի նման միաբանի ներկայութիւնն և նորա կրկնահատոր պատկառելի հրատարակութիւնն «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի» որի նմանը Մայր Աթոռի միաբանութիւնն ու մամուլն այլևս պատեհութիւն ունեցած չեն լոյս ընծայելու։

Տ. Ներսէս Ե, որ յաջորդեց Կարբեցի հայրապետին, եկաւ սակայն երկաթէ գաւազանով ուղղութեան բերելու իրեն աչքին անպէտք երևցած միաբանութիւնն և վանելու ցրուելու առհասարակ վանական դասը։ Այդ և եղաւ պատճառ, որ նորա օրով վանքերն սկսեցին անշքանալ և վանականներն, ով ինչպէս կարողացաւ, թողին հեռացան և փախան դէպի Տաճկաստան և այլ տեղեր [1]։ Այդպիսի փախստականներից մէկն էր և հռչակաւոր Կարապետ վարդապետն Շահնազարեանց։

Տեսնենք նախ թէ ինչպէս անցաւ այս վարդապետի կեանքը մինչև այդ պատահմունքը։ Եթէ կան ժամանակակիցների յիշատակարաններ և պաշտօնական թղթեր, որոնք տալիս են մանրամասն տեղեկութիւններ նորա

1. Ծանօթ են Մխիթարեան Աբէլ, Արշարունի Յովհաննէս, Օձնեցի Վարդան, Մժէժեան Մարտիրոս, Արարատեան Սերովբէ վարդապետները, որոնք տ. Ներսէսի մահից յետոյ վերադարձան Մայր աթոռ և շատերն հասան արքեպիսկոպոսական պատուի։

կեանքի և գործունէութեան մասին, դժբաղդաբար, որքան մեզ յայտնի է, նոքա հրատարակութեան տրուած չեն։ Մեզ մնում է միայն համախմբել և դասաւորել այստեղ այն ինչոր յայտնի է մեզ մինչ ցայս լոյս տեսած հրատարակութիւններից [1]։

Բ.

Կարապետ վարդապետ Շահնազարեանց ծնաւ 1814 թուին մայիսի 14-ին [2]. Պարսկաստանի Համադան քաղաքում։ Նա, անշուշտ, սերուած է ազնուական տանից, որովհետև ինքն իւր պապին անուանում է [3]. Մելիք Շահնազար։ Նորա հայրը, Մելքում, վաճառականութիւն էր անում Պարսկաստանում։ Թէ ինչ հանգամանքների մէջ անցաւ նորա սկզբնական դաստիարակութիւնը, մեզ անյայտ է։ Արարատեան երկրի Ռուսաց տիրապետութեան տակ անցնելուց յետոյ, թուի թէ նորա ծնողք նախադասեցին գէթ իրենց զաւակին քրիստոնեայ աշխարհում կրթել։ 1828 թուին մենք տեսնում ենք Շահնազարեանցին Մայր Աթոռում իբրև ժառանգաւորաց դպրոցի աշակերտ։ Նա ինքը գրում է [4] իւր մասին թէ «յամի 1834 ի վարդապետարանին սրբոյ Էջմիածնի ի մարզս դեղերէի հռետորական և աստուածաբանական ուսմանց»։

---

1. Արևելեան Մամուլ 1875. Արաքս, Բ. տարի։

2. Արաքս, Բ. տարի, եր. 71. Արևել. Մամուլ 1875 Սեպտ.— Ոմանք Շահնազարեանի ծնունդը դնում են 1810-ին (տ. Ընդարձ. Օրացոյց ազգ. Հիւանդանոցի 1901, եր. 61.—Այս թուականին է յարմարւում և այն տեղեկութիւնը թէ Շ. վախճ. 54 տարեկան հասակում (տ. Արաքս, Բ. տ. 60)։

3. «Ի յիշատակ հոգևոր ծնողին իմոյ և բարերարի Ցովսէփայ արքեպիսկոպոսի Վեհապետեան, հաւուն իմոյ, Մելիք Շահնազարի, հօրս, Մելքումի, մօրս, Սանամի, եղբօրս, Ղազարու, և քեռս, Նապաթի, ի Քրիստոս ննջեցելոց». տ. Մովս. Կաղանկատուացի, հատոր Բ. Փարիզ, 1860.

4. Ղևոնդ պատմագիր, Փարիզ, 1857, Ազդ։

Ժառանգաւորաց դպրոցի աշակերտութիւնն այսպիսով տեսեց 5—6 տարի և նորա կրթութիւնն այն էր, ինչոր յատուկ էր այն ժամանակուայ վանականներին, ուսանում էին գլխաւորապէս Ս. Գիրք, հայկաբանութիւն, ճարտասանութիւն, եկեղեցական պաշտամունք և վայելչագրութիւն։ Սակայն դպրոցական այդ շրջանում արդէն ձևակերպւում էր Շահնազարեանի բուռն հակումը նախնեաց յիշատակարաններն ուսումնասիրելու. «ի փառս գրէի անձինս, ասում է [1], եթէ հնարէի զկենդանագործութիւն կիսամեռ յիշատակարանաց իմոց նախնեաց, զորս տգիտութիւն և անփութութիւն թողին ցարդ 'ի խաւարի անտես ի ժողովրդենէ»։

Նորա այդ հակումը դեռ դպրոցի մէջ արտայայտութիւն գտաւ այն եռանդուն ընդօրինակութիւնների մէջ, որ կատարում էր հնադարեան վանքի գրանոցի գրչեայ մատեաններից, որոնցից հանում էր գլխաւորապէս նախնի հայ պատմիչների գործերը։

Որքան և հաւաստին չգիտենք, իրերի ընթացքից երևում է սակայն, որ Շահնազարեանի այդ հայկական պարապմունքներին ուղղութիւն տուողն եղած պէտք է լինի յաւէրժացեալն Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեան, ս. Էջմիածնի այն ժամանակուայ լուրջ հայկաբանն և հնագէտը, որ դեռ նոր էր սկսել իւր ուսումնասիրական գործունէութիւնը Մ. Աթոռի միաբանութեան մէջ [2]։

---

1. տ. Ղևոնդ պատմ. Ազդ.

2. Շահխաթունեան ծն. 1799 մայ. 20-ին. յանձնուեցաւ Մ. Աթոռի դպրոցն 1814 թ. երկու տարի յետոյ Աստուածատուր արքեպիսկոպոսը նուիրակութեան գնալիս ուրիշների հետ միասին Շահխաթունեանին էլ տարաւ հետը Կ. Պոլիս, ուր և յանձնեց նորան հմուտ ուսուցիչների դաստիարակութեանը։ Աստուածատուր առանձին իմն խնամք ունեցաւ իւր սաների վերայ և յատուկ ծախքեր արաւ նոցա համար ուսուցիչներ վարձելու. բացի հայերէնից Շահխաթունեան ուսաւ նաև յունարէն ու թուրքերէն։ 1820 մարտի 25-ին Աստուածատուր ա. եպիսկ. ձեռնադրեց Շահխաթունեանին սարկաւագ Փիլիպպուպոլսի եկեղեցում. հինգ

Շահխաթունեանից զատ կային Մ. Աթոռում և ուրիշ գիտուններ, որոնք ժամանակի սովորութեան համեմատ իրենց սեպուհ պարտականութիւն էին համարում վանքի համար ժառանգաւորներ պատրաստել դպրոցի ընդունակ աշակերտներից։ Անձնական զրկանքների գնով նոքա ոչ միայն պահպանում էին վանքն իբրև իրենց հարազատ տուն և օթևան, գերազանց քան իրենց բուն ծննդավայրը, այլև ոգևորուած էին անհուն սիրով դէպի ազգային նուիրական աւանդները, սիրում էին գիր գրականութիւն, պատմական հնութիւններ, լեզուի մշակութիւն և այլն։ Ինչ և լինէր այդ մարտիկների բարոյական նկարագիրը, նոցա ոգին և ուղղութիւնը, մի բան հաւաստի է, որ Մայր Աթոռի այդ հին միաբանները ջերմագինս փարած էին հոգևորականի բուն կոչման յատուկ գործունէութեան, ընդգրկած էին ազգի վշտերն իբրև իրենց անձնական վիշտ և գործում էին ամենայն անկեղծութեամբ և անձնուիրութեամբ։ Նոցա այդպիսի տրամադրութեամբ միայն կարելի է բացատրել այն, որ չնայելով Դաւիթ-Դանիէլեան ժամանակի վշտալի տնաւեր դէպքերին, այնուամենայնիւ Աթոռի մէջ չպակասեցան Շահխաթունեանի նը-

---

տարի յետոյ նա իւր սարկաւագի հետ միասին վերադարձաւ Մ. Աթոռ և 1826 մարտի 21-ին ձեռնադրեց նորան աբեղայ, շուտով նա վախճանեցաւ և նորա թողած ժառանգութեան մասին Շահխաթունեան բաւականին հաւածանք կրեց, մինչև որ 1828 փետր. 18-ին տ. Եփրեմ կաթողիկոս նորան մխիթարելու համար հրամայեց տալ նորան վարդապետական գաւազան։ Այդ ժամանակից սկսուեցաւ նորա բեղմնաւոր գործունէութիւնը Մ. Աթոռի դպրոցի, գրանոցի և այլ հաստատութիւնների օգտին։ 1841 յունիսի 22 տ. Յովհաննէս Ը. ձեռնադրեց նորան եպիսկոպոս, 1846-ին տ. Ներսէս Ե. նշանակեց նորան ժառանգաւորաց դպրոցի տեսուչ. վախճ. 1849 թուին և թաղուեցաւ իւր հայրենական Շահրիար գիւղում։ Շահխ. ուրիշ ընկերների հետ միասին միտք ունէր Սեւանայ վանքում մի ուսումնական միաբանութիւն հաստատել. այդ բարի խորհուրդը չիրագործուեցաւ իրենից անկախ պատճառներով։ Ար. եպ. Սեդրակեան Յովհ. եպս. Շահխաթունեանի կենսագրութիւնը, Ս. Պետերբ. 1898.

ման գիտուն, ուսումնասէր և աւանդապահ միաբաններ, որոնք իրենց ոգին հաղորդեցին և նոր ժառանգաւորներին։ Այդպիսի գիտուն միաբաններից են Գուլասպեանց Զաքարիա վարդապետ «վարժապետն ճարտասանութեան», Ղրիմեցի Յովհաննէս վարդապետ ընտիր գրիչն, հմուտ դիւանական գործերի և քաջ ռուսագէտ, Գրիգոր վարդապետ Աշտարակեցի «շարադիրն կոնդակաց» և այլն։

Գ.

Ս. Էջմիածնում Շահնազարեանին յատկապէս հովանաւորում էր Յովսէփ արքեպիսկոպոս Վեհապետեան, որին նա անուանում է հոգևոր ծնող և բարերար։ Բարձր նըկարագրի տէր մարդ չէր Յովսէփ, սակայն ժամանակի միաբանութեան մէջ ամենից ճարպիկ, ժիր և գործունեայ վանականն էր, իսկապէս ասպարէզի մարդ, փառասէր, և ոչ զերծ շահասիրութիւնից։ Տ. Յովհաննէս Ը. Կարբեցու ազգականն ու որդեգիրն էր նա, ինքն էլ Կարբեցի, տէր Մարուգեանց Մատթէոսի որդի, որ սկզբում տ. Եփրեմ Ա. կաթողիկոսի սպասաւորն էր և Աշտարակեցի Ներսէս արքեպիսկոպոսի մտերիմն և անձնուէր բարեկամը. վերջինիս Բեսարաբիա հեռանալուց յետոյ տ. Եփրեմ նշանակեց Յովսէփին Սինոդի անդամ և Մայր Աթոռի կառավարիչ. գրաւելով Աթոռում Աշտարակեցու տեղը, նա այդ ժամանակ և երևի յորջորջուեցաւ «պստլիկ Ներսէս» առանց ունենալու նորա բարեմասնութիւնները։ Քաջ բնորոշել է Յովսէփին Սերովբէ եպիսկոպոսը, որ 1830-ին գրում է[1] կոմս Պասկևիչին «Յովսէփ վարդապետը... Ներսէս արքեպիսկոպոսից աւելի խորամանկ է և խաբեբայ, բայց չունի, ասում է, ոչ նորա միջոցներն և ոչ նորա կրթութիւնը»։

Իբրև պստլիկ Ներսէս Յովսէփ ազդեցիկ տեղ ունէր վանքում Աշտարակեցու կուսակցութեան մէջ, որն այն

1. Երիցեան Ա. Ամ. Հ. կաթ. և Կովկասի Հայք, Ա. 380.

ժամանակ կոմս Պասկևիչին հաճոյական չէր. այդ պատճառով կառավարութիւնն ուշադրութիւն դարձուց Յովսէփի ընթացքի վերայ. իշխան Վ. Բէհբուդեանը, որ այն միջոցին կառավարում էր Հայկական Աշխարհը, հրահանգ ստացաւ հեռացնել ասպարէզից Յովսէփին, եթէ վերջինս չուրանայ իւր բարեկամ և բարերար Ներսէսին. 1830 մայիսի 24-ին իշխանն հաղորդում է Պասկևիչին, որ իրեն յաջողել է բոլորովին գրաւել Յովսէփին և հեռացնել Ներսէսից, միևնոյն ժամանակ նա վկայում է, որ Մայր Աթոռում «խելացի և ճարպիկ» Յովսէփը մեծ ազդեցութիւն ունի կաթողիկոսի, սինոդականների և միաբանութեան վերայ։ Իշխանն Յովսէփի հաղորդած տեղեկութիւններով և համոզուեցաւ, որ տ. Եփրեմ կաթողիկոսի «իշխանութեան գրէթէ բոլորովին ոչնչանալու» և Հայոց եկեղեցական գործերի անկարգութեան պատճառը Ներսէս Աշտարակեցու կամքն ու կարգադրութիւններն են [1]։ Յայտնի է, որ այնուհետև շատ չքաշեց և տ. Եփրեմի հրաժարականն ընդունուեցաւ ու տ. Յովհաննէս Ը. գրաւեց հայրապետական աթոռն 1831 նոյ. 8-ին։ Այդ ժամանակից տ. Յովհաննէսի հայրապետութեան զօրեղ նեցուկներից մէկն եղաւ Յովսէփ, որին վեհն 1832 մայիսի 12-ին եպիսկոպոս ձեռնադրեց։ Տեղը չէ տալ Յովսէփի լիակատար նկարագիրը, որին արժէ նուիրել մի առանձին ուսումնասիրութիւն։

Պէտք է ասենք սակայն, որ այդ արհին տ. Յովհաննէս Ը. կաթողիկոսի մշտական և անփոփոխ գործակատարն էր ամեն բանի մէջ և իբրև հայրապետական սուրհանդակ նորան յաճախ կարելի էր տեսնել և ս. Էջմիածնի պատերից դուրս ևս այնպիսի տեղերում, ուր հարկ էր կամ մի խռովութիւն դադարեցնել, կամ անհրապարակելի մի գործ ծածկել քօղարկել, կամ վերջապէս դրամական հաշիւներ մաքրել և կաթողիկոսի գանձը զօրացնել և այլն։ Եւ պէտք է իրաւունք տալ այդ արքեպիսկոպոսին, որ ինչ-

1. Երից. Ա. անդ, 581 և 586։

պէս նորա անթիւ նամակագրութիւններից[1] երևում է, ամեն տեղ էլ յաջողում էր նրան միջին ճանապարհը գտնել։

Դ.

Յովսէփ արքեպիսկոպոս առանձին իմն խնամք ունէր իւր սանի ուսման և դաստիարակութեան վերայ։ Նա իւր կողմից աշխատում էր նորան տալ գործնական ուղղու-

---

1. Թէպէտ և անկիրթ մարդ չէր Յովսէփը, նորա նամակներից երևում է սակայն, որ նա իւր ժամանակի այլ վանականների չափ հմուտ չէր շարադրութեան, և տառասխալներով գրելը նորան սովորական էր և գրում էր գրաբառ ու աշխարհաբառ խառն։ Իբրև նմուշ նոյնութեամբ դնում ենք այստեղ մի հատուած այն նամակից, որ գրում է նա կաթողիկոսին 1836 մարտի 24 Գանձակից,—«Ամենայն կերպ վերջացուցի Գանձակու խոովութիւնն և լաւ եղանակաւ խաղաղացուցի, և տեսի գ. եկեղեցւոյ հաշիւսն և տիրեցի ամենեցունց արդիւնքն նաղտ ինչ որ գոյեացաւ. եղեալ տումարաւ մի սանտկի մէջ կնքեցի և անցնեցի հայր Յարութիւն վարդապետ յաջորդին պահէ մինչև վերադառնալս և այնժամ արարից դասաւորութիւն որն թողից և որքանն առից յանուն Աթոռոյ։ Կարգադրեցի ամենայն եկեղեցիս նոր ի նորոյ ամենայն անօթքսն տումար արարել երկու. մի օրինակ մինն մնասցէ իւրեանց մօտ և միւսն մնասցէ առ Սինօթոսն մեր. հրաժարեցուցի ամենայն իշխանքն միուսանգամ չի խառնին ի գործս եկեղեցայց որպէս մինչև ցայսօր արարեալ են և փոդերն եկեղեցայց ընդ իշխանութեամբ իւրեանց, որպէս կամեցեալ են արարեալ են այնպէս. այսուհետև մնայ ի ձեռս երեցփոխանին և ընդ իշխանութեամբ յաջորդ վարդապետին։ Ի 22 ամսոյս օր ծաղկազարդի ձեռնադրեցաք քահանայք ըստ հրամանի վեհապատիւ Տեառնդ և ամենայն աջահամբոյրսն ստացայ կնքեցի և պահ ետու յաջորդին մինչև ցվերադարձն մեր. իսկ եթէ մահ պատահի պատուիրեալ եմ իմով գրով որ կա դուքու մէջն թէ իմ անձնական քանի մի մանէթ թէ առնուն տէրութեանդ և թէ դրամք եկեղեցայց յղեսցէ տէրութեանդ որպէս կարգադրեալ եմ. պատճառ այս կողմի ճանապարքն կարի վտանկաւորք են. աստուած ողորմի. ես այնպէս աւարտեցի գործս որ աւագ ուրբաթ օրն այդր 'ի սպաս տեառնդ լինէի. բայց էհաս կրկին հրամանագիրն վասնորոյ ուղղեցի գնալն այնկոյս. աղօթք տեառնդ լիցի ինձ զօրաւիք»։

թիւն, իւր հետ տանում էր հեռաւոր տեղեր, դիւրութիւններ էր տալիս նորան ճառեր և քարոզներ ասելու։ Դեռ 1830-ին մարտ ամսի 9-ին, 22-ին և 26-ին Շահնազարեան, թէև տակաւին համբակ, քարոզներ է ասում Քիշնեւում. 1835-ին յունուարին կաթողիկոսի տօնի առթիւ կարդում է ճառ միաբանութեան առաջ, ինչպէս սովորական է Ս. Էջմիածնում, և այլն։

1835 հոկտեմբերին տ. Յովհաննէս Ը. առաջին անգամ իբրև կաթողիկոս ուղևորուեցաւ Ս. Էջմիածնից Թիֆլիս, ուր շատ շքեղ ընդունելութիւն գտաւ։ Նորա շքախմբի անհրաժեշտ անդամներից մէկն էր Յովսէփ արքեպիսկոպոսը, որ իրեն հետ տարաւ և իւր սանին, Շահնազարեանին։ Այստեղ վերջինս յանձնուեցաւ Յ և Դ. Արզանեանների մասնաւոր վարժարանն ռուսերէնի և թուաբանութեան գիտութիւնը կատարելագործելու։ Արզանեաններից մէկն, Յակոբ, որ 1832 թուին վարեց Ներսիսեան դպրոցում տեսչի և բարձր դասարանների ռուսերէնի ուսուցչութեան պաշտօնները, ժամանակի ձեռնհաս ուսումնականներից մէկն էր. նա ուսումն առել էր Լազարեան ճեմարանում և ապա, Մոսկովի համալսարանում կատարելագործուելով, աւարտել էր կանդիդատի աստիճանով։ Արզանեաններն իրենց ժամանակին արել են օգտակար ծառայութիւններ. նոքա Թիֆլիսում ունէին հայերէն տպարան, որտեղ իթիւս այլոց 1840 թուին հրատարակեցին Գաբրիէլ Աբէլեան Շադինեանցի ծախքով մի «Քերականութիւն հայոց»։ Շադինեանցն այդ գիրքն ընծայեաց արքունի դպրոցաց Վրաստանի վասն ձրիաբար բաժանելոյ տնանկ համբակաց պարապելոց յուսումն մերս բարբառոյ». մի բարի գործ, որի նմանը մեր օրերում դժուար է տեսնել։

Արզանեանների գովելի յիշատակներից մէկն է Հայոց պատմութեան ուսումը տարածելու նպատակով հին իշխանների և թագաւորների նկարներն ստեղծելն և հրատարակելը. երկար ժամանակ այդ պատկերները զարդա-

բում էին Հայոց տներն ու ժողովարանները. այժմ նոքա այլ ևս սպառուած են. տպած և ձիթաներկ օրինակներից կան Մայր Աթոռի թանգարանում։

Շահնազարեանի վերայ Արզանեաններն և նոցա վարժարանն, անշուշտ, ունեցան բարերար ազդեցութիւն. այն ուսումից զատ, որ նանոցա մօտ ստացաւ, նորա գաղափարներն աւելի ևս ձևակերպութիւն առան ազգային պատմութեան և գրականութեան շրջանակի մէջ։ Կենսագրներից մէկն[1] հաղորդում է, որ Շահնազարեան մնաց նոյն վարժարանում 1835—1837 թ. իսկ միւսի[2] ասելով նա մնաց այնտեղ միայն մի տարի, որից յետոյ 1836-ին տ. Յովհաննէս Ը. ուղարկեց նորան Մոսկով Լազարեան Ճեմարանը։ Այս վերջին տեղեկութիւնն աւելի մօտ է երևում ճշմարտութեան, քանի որ Շահնազարեանն 1836-ին արդարև գտնուել է Մոսկովում և Ս. խաչի տօնին ասել է այնտեղ իւր ճառերից մէկը։ Ինչպէս տեսանք, տ. Յովհաննէս Ը. արդէն բանակցել էր Խաչատուր աղա Լազարեանի հետ, որն իւր նամակներից մէկում խոստացաւ կաթողիկոսի ընտրութեամբ ընդունել ճեմարան երեք աշակերտ։ Անշուշտ, Շահնազարեանին վիճակուեցաւ լինել այդ երեքից մէկը։ Գուցէ այս խնդրի վերայ որքան և իցէ լոյս սփռեն Կարապետ վարդապետ Շահնազարեանի նամակները[3], որոնք պահւում են Լազարեան ճեմարանում։ Այդ միջոցին ճեմարանի տեսուչն էր Միքայէլ արքեպիսկոպոս Սալանթեանց, որ կաթողիկութիւնից անցել էր Հայոց եկեղեցու ծոցը տ. Եփրեմ Ա. կաթողիկոսի ժամանակ և եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ընդունեց տ. Յովհաննէս Ը. Կարբեցուց 1834 թուին Լազարեան իշխանների միջնորդութեամբ։ Նա միևնոյն ժամանակ աւանդում էր այնտեղ հայկաբանութիւն, աստուածաբանութիւն և փի-

1. տ. Արաքս, Բ. տարի, գիրք Ա. 60—68.

2. տ. Արևելեան Մամուլ, 1875, Սեպտ.

3. տ. Լազ. ճեմ. մատենադարանի հաւաքածուների մէջ „Сборникъ № 29“.

լիսոփայութիւն։ Այսպէս թէ այնպէս՝ Շահնազարեան իւր հոգևոր ծնողի և բարերարի հովանաւորութեան տակ կարողացաւ ուսում առնել նաև Մայր Աթոռի պարիսպներից դուրս հեռաւոր տեղերում։ Այդ ուսման շրջանը տևեց մինչև 1839 թ. այդ տարին նա ձեռնադրուեցաւ սարկաւագ և սեպտեմբերի 22-ին նշանակուեցաւ Մայր Աթոռի ժառանգաւորաց դպրոցի տեսուչ և ուսուցիչ. նա ուսուցանում էր հայերէն, ռուսերէն, թուաբանութիւն և վայելչագրութիւն. յիշեալ պաշտօնների մէջ մնաց նա մինչև 1842 թ. թուի թէ նոյն այդ ժամանակամիջոցում զբաղուեցաւ նա դպրոցական ձեռնարկներ պատրաստելով, որոնք մեծ մասով թարգմանութիւններ են ռուսերէնից. նոցա մէջ կան թուաբանութեան, աշխարհագրութեան, եկեղեցական պատմութեան և կրօնագիտութեան ձեռնարկներ, որոնցից ոմանք յետոյ լոյս տեսան Ս. Էջմիածնի տպարանից[1]։

Մայր Աթոռում Շահնազարեանցի ընկեր կարգակիցներն էին թեղուտցի Մակար տէր Պետրոսեան, Առնջեցի Եղիազար տէր Կարապետեան, Վաղարշապատցիք՝ Յովհաննէս Ասլանեան մականուանեալ Քիշի և Ստեփան Բաղալեան սարկաւագները. սոցանից առաջինն յետոյ ամենայն Հայոց կաթողիկոս եղաւ, երկրորդն էր Բեսարաբիոյ և Նոր Նախիջևանու թեմի կառավարիչ Եղիազար արքեպիսկոպոսը, որ զանազան ժամանակ վարել է Սինոդի անդամութեան

---

1. —«Թուաբանութեան արհեստ, աշխատասիրեալ ի Կարապետ աւագ սարկաւագէ Շահնազարեանց, յուսուցչէ թուաբանութեան ի Ճեմարանի սրբոյ Էջմիածնի, բովանդակեալ յերկուս մասունս. Վաղարշապատ ի տպ. ս. Էջմիածնի 1849»։

—«Տիեզերական աշխարհագրութիւն Արսենի Կոստանտեայ, թարգմ. ի ռուսէ ի հայ»։

—«Գծագրութիւն ընդհանուր պատմութեան եկեղեցւոյ ա-բարեալ Իննովկենտեայ վարդապետի, թարգմ. ի ռուսէ ի հայ»։

—Ընդարձակ քրիստոնէական կրօնագիտութիւն. հեղինակութիւն»։

Սոցանից զատ Շահնազարեան թարգմանել է հայերէնից ռուսերէն «Պատմութիւն Վրաց»։

և Երևանու փոխ-թեմական պաշտօն. երրորդը տ. Մատթէոս Ա. կաթողիկոսի ժամանակ Սինոդի անդամ էր. սա է և նորա մահից յետոյ Մայր Աթոռի տեղապահ [1] Յովհաննէս արքեպիսկոպոսը, իսկ չորրորդն Երևանու փոխթեմական Ստեփան արքեպիսկոպոսն է, որ մի ժամանակ վարեց և Արցախու առաջնորդութիւնը։ Սոցա հետ միասին Շահնազարեան ձեռնադրուեցաւ աբեղայ 1842 նոյեմբերի մէկին. մի կենսագրի ասելով [2], ձեռնադրողն էր Բարսեղ արքեպիսկոպոս Կեսարացին, որ տեղապահ էր այն ժամանակ, իսկ միւսի ասելով [3] Յովսէփ արքեպիսկոպոս Վեհապետեան։ Աչքի առաջ ունենալով, որ Շահնազարեան վերջինիս անուանում է հոգեւոր ծնող, հաւանական է որ նորան ձեռնադրողն է Վեհապետեանն և այն ոչ 1842 նոյ. 22 ին, այլ նոյն տարուոյ մարտի 15-ին, երբ տակաւին կենդանի էր տ. Յովհաննէս Ը։

Ե.

1843 դեկտեմբերին Շահնազարեանց նշանակուեցաւ Տաթևու վիճակին յաջորդ և այդ առթիւ Յովսէփ արքեպիսկոպոս 19-ին դեկտեմբերի տուեց նորան մասնաւոր իշխանութիւն վարդապետութեան։ Յաջորդութեան պաշ-

---

1. Քիշի տեղապահութեան է վերաբերում հետևեալ զրոյցը. Ստեփան եպիսկոպոս Բաղալեանը վախճանում է Երևանում. Փէշտիմալճեան Յովհանէս վարդապետը, որ մի տգէտ, բայց զուարճաբան մարդ էր, գալիս է տեղակալի մօտ և հապճեպով հրաման է խնդրում Երևան գնալու։ Ի՞նչ բան ունիս Երևան, հարցնում է տեղակալը։ Երկու խօսք ունիմ ասելու Ստեփան եպիսկոպոսի ականջից, պատասխանում է վարդապետը։ Երբ տեղակալն հետաքրքիր է լինում իմանալու, թէ ի՞նչ էր նորա ասելիքը, պատասխանում է. «Պիտի ասեմ, որ եթէ Ներսէս կաթողիկոսն էն աշխարհում հարցնելու լինի թէ ի՞նչ դրութեան է էջմիածինը, ասա, որ Քիշին տեղակալ է, Փէշտիմալճեանն էլ դպրոցի տեսուչ. նա ամեն բան կը հասկանայ»։

2. տ. Արաքս, Բ, տ.

3. տ. Արևելեան Մամուլ, 1875 սեպտ.

տօնի մէջ մնաց նա մինչև 1846 թուականը։ Պաշտօնին յատուկ գործերից զատ, որոնք վարեց նա աչալրջութեամբ և սրանց համար նա ժառանգեց ընդհանուր գոհունակութիւն, Շահնազարեան հետամուտ եղաւ իւր վիճակի վանքերի և հնութիւնների ուսումնասիրութեան, առաւելապէս հետամուտ էր գրչեայ մատեաններ ժողովելուն և ընդօրինակելուն. նա ինքն այսպէս է գրում իւր այդ պարապմունքների մասին. «ձեռնարկեալ էի յօրինակութիւն ընտիր պատմագրաց մերոց ի հոչակաւոր գրանոցի տեղւոյն (Ս. Էջմիածնի), յորս յաւելի ապա և զտեղագրութիւն պատմութեամբ և աշխարհագրութեամբ հանդերձ Սիւնեաց աշխարհին ի ժամանակին յորում կացի տեսուչ յիշեալ վիճակին»։ Նորա այդ բովանդակ աշխատութիւնը սակայն, որ կատարել էր 1834—1844 թուերին, կորստի մատնուեցաւ։ Այդ մասին ինքը վշտացած սրտով գրում է նոյն տեղում[1]։ «Այլ զայս ամենայն արդիւնս տասնամեայ երկանց իմ սրբապիղծ ձեռն մի անանուն յափշտակեաց 'ի միում վայրկենի, և եթող զիս ի խոր տխրութեան»։

Իւր զրաւաստակ լինելու վերայ Շահնազարեան լիակատար իրաւունք ունէր խորին վիշտ զգալու, քանի որ այն ամէնն, ինչոր ինքն իւր անձնական դիտողութեամբ կատարել էր 1844—1845 թուերին, այլ ևս ձեռք ընկնել չէր կարող, զոհ գնալով քայքայիչ ժամանակին և խորին տգիտութեանը։ Ինչպէս նորա բացատրութիւնից երևում է, նորա կատարած գործն էր Սիւնեաց աշխարհի բովանդակ նկարագիրը։ «Բազում խնամօք, գրում է[2], հոգացայ հեղինակել զճիշտ ստորագրութիւն այնորիկ (աշխարհին Սիւնեաց), բաժանեալ 'ի զանազան գլուխս ըստ զանազանութեան նիւթոցն, շնչազրութիւն, տեղագրութիւն, հանքաբանութիւն, երկրաբանութիւն, բուսաբանութիւն, պատմութիւն, ազգանազրութիւնք, ասանդութիւնք աշխարհին այ-

1. տ. Ղևոնդ վարդապետ, և այլն Ազդ.

2. Պատմ. նահ, Սիսական արարեալ Ստեփ. Օրպէլեան, 1889 Փարիզ, եր. 7.

լովք հանդերձ պարունակէին ի նմա»։ Այս ամէն աշխատութիւնների հետ միասին նա ժողովեց ամեն տեսակ զրոյց ու աւանդութիւն Դաւիթ բէկի գործերի և ժամանակի մասին, խօսեցնելով Դաւիթ բէկի ընկերներից մէկի, Պալի Թոռին, որ էր Պեխ գիւղացի հարիւրամեայ ծերունի Ստեփաննոս աւագ քահանայ։ Վերջինս և ընձեռեց Շահնազարեանին մի թանգագին ձեռագիր Դաւիթ բէկի պատմութեան, որը նա յետոյ դրեց մայր Աթոռի մատենադարանը Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոսի ձեռքով։ Այդ գործը Շահնազարեանի ասելով մեծ լոյս պիտի սփռէր Սիւնեաց աշխարհի վերայ և իւր շատ մասերով կարող էր լուսաբանել և շատ հին մատենագրութիւնների էջեր։ Այդ-պիսի նշանաւոր գիւտի համար, անշուշտ, նա պիտի մեծ հոգեկան բաւականութիւն զգար, եթէ «ահագին զերոյ մի» ինչպէս ինքն ասում է, «կուլ չտար և չանհետացնէր նորան ընդ միշտ»։ Մեզ համար մութն է այժմ, թէ ո՞վ է այդ անագորոյն հալածիչը, որ Շահնազարեանի այդ վաստակները ջնջում ոչնչացնում է. այդ «ահագին զերօն», այդ «սրբապիղծ անանուն ձեռքը», որ մի վայրկենում կորցնում է հայրենասէր հնախոյզի երկար տքնութեան արդիւնքները, անկասկած, մի անձնաւորութիւն է. ափսոս որ ոչ անուան յիշատակութիւն կայ և ոչ էլ պարզ հանգամանքի բացատրութիւն։ Շահնազարեանի լռութիւնն աւելի ևս աչքի է ընկնում այն պատճառով, որ 1843—1845 թուերին կատարուած չարագործութեան մասին դեռ 1859 թուին անգամ բացարձակ խօսել կարող չէ։ Զուսնենալով հնար այժմ էլ ճանաչել այդ «ահագին զերօն» այդ «անանուն սրբապիղծ ձեռքը», մենք ստիպուած ենք խոյս տալ ձրի ենթադրութիւններից։ Սակայն մի բան հաւաստի է, որ այդ ամէնը յիշելու ժամանակ Շահնազարեանի մէջ խօսում է հայրենասիրական ոգին։ Նորա կորուստն անդառնալի էր. հնար չկար նոյնութեամբ վերականգնելու այն՝ ինչոր նա կատարել էր. և նա ստիպուեցաւ Սիւնեաց նկարագրութիւնը յիշողութեան ուժով միայն

վերականգնել, ինչպէս և այդ արել է Օրպէլեանի պատմութեան հրատարակութեան սկզբում, թէպէտ անտարակոյս այդ միայն աղօտ ստուերն է այն ամէնի, ինչոր նա գրի էր առել տեղն ու տեղն այն օրերում, երբ ինքը շնչել ու ապրել էր երկրի բնական պատկերների, տեսարանների, իրականութեան կենդանի ոգուով։ Հայրենասէր վարդապետի սիրտը առանձնապէս վառուել բորբոքուել էր Դաւիթ բէկի յիշատակների հաճոյական կրակով. «Եւ ես հէգ պանդուխտս, գրում է[1] իւր մասին Շահնազարեանը, որ ի ժամանակին յայնկի կոխէ զերկրին ոռոգել արեամբ քաջ արանց եւ յանդիման աչացս ունէի զաւերակս Հալիձորոյ, Կապանի, Բաղաբերդի իբրև ցաւագին յիշատակարանս աշխարհաշէն փութոյ մերոց նախնեաց և շինեալ փառաց նոցա, սիրէի, ասում է, նստել ըազում անգամ ընդ հովանեաւ ալեւոր բեւեկնեաց Պեխ զեղջ եւ լսել զվէպս հարիւրամեայ Ստեփանոս աւագ քահանային»։ Այս տողերը մերկացնում են մեր առջև մի ոսկի սիրտ, տարբեր այն բիւրաւոր սրտերից, որոնք բաբախում էին գուցէ շատ ուրիշ բարիքների համար, բայց ոչ այն բանի, ինչոր հնախոյզ վարդապետի համար իսկական մշակութիւնն էր, և արտայայտութիւնն հայրենասիրական ոգու։ Նորան ժամանակակից էին աւելի գիտուն հոգևորականներ, օժտուած եւրոպական լեզուների գիտութեամբ և բարձր կրթութեամբ. ինչպէս օրինակ Կարնեցի Սերովբէ և Սալլանթեան Միքայէլ արքեպիսկոպոսները. բայց նոքա երևցան և անցան ինչպէս այն ամպերը, որ գալիս գնում են երկնակամարի երեսով առանց ցօղելու խոպան դաշտերին զովարար ցօղը. մի երևոյթ, որ ինչքան և անհաճոյ, նոյնքան և բնական է, քանի որ նոքա չշնչեցին և չապրեցան հայրենական հողի ու ջրի կենդանի ոգուով։

Զ.

Թէ ինչ պատճառով և ինչ հանգամանքների մէջ Շահնազարեանց հեռացաւ Տաթևու յաջորդութիւնից, յայտնի

1. տ. Անդ։

չէ։ Հաւանական է, որ տ. Ներսէս Ե. Նորընտիր կաթողիկոսը, որ եկաւ ս. Էջմիածին և օծուեցաւ 1846 յունիսի 9-ին, Տաթևու նման վիճակներն աշխարհականների կառավարութեանն յանձնելու համար պէտք համարեց Շահնազարեանցին պահել միշտ Աթոռում։ Կաթողիկոսի օծմանը ներկայ էր և Կարապետ վարդապետը, որ հանդիսին վայել ոգևորութեամբ և եռանդով ասերէն մի «սրտառուչ ճառ» արտասանեց, որը մեծ տպաւորութիւն թողեց հանդիսական օտարազգի և հայ երևելիքների վերայ[1]։ Կաթողիկոսը գրաւուեցաւ շնորհալի վարդապետի բարեմասնութիւններով և հակառակ թշնամիների աննպաստ շշունչներին, որոնք ս. Էջմիածնի պատերում միշտ կան ու անպակաս են, իւր շքախմբի մէջ առաւ Նորան և հետը տարաւ Թիֆլիս։ Այստեղ Շահնազարեան նշանակուեցաւ թեմական ատենի (կոնսիստորի) նախանդամ այն ժամանակ, երբ Թիֆլիսի Հայոց վիճակաւոր առաջնորդ և կոնսիստորի ատենապետն էր հռչակաւոր Կարապետ արքեպիսկոպոսը։ Թէպէտ և այստեղ էլ իւր բնածին հակումներն էին Նորան զբաղեցնում Կարապետ եպիսկոպոսի «հռչակաւոր մատենադարանի» ձեռագրներով, որոնցից նա նոր ի նորոյ ընդօրինակութիւններ էր անում, բաղդատութիւններ էր կատարում և նոցա լուսաբանութիւններն էր պատրաստում[2], սակայն աւելի ճնշուեցաւ նա կաթողիկոսի պաշտօնական յանձնարարութիւններով, որոնք կարծես ակամայ յետ մղեցին Նորան իւր սիրելի պարապմունքներից։ Մինչև 1850 թուի ամառը մնալով Թիֆլիսում, Շահնազարեան 1847-ին ապրիլ ամսին նշանակուեցաւ Ներսիսեան դպրոցի տպարանի տեսուչ, 1848-ին յունիսի 14-ին թ. 164 կոնդակով կաթողիկոսն հաստատեց Նորան Ներսիսեան դպրոցի խորհրդարանի անդամ[3] և յատկապէս

1. Արաքս բ. տ. և Արևել. մամուլ. 1875 սեպ.
2. Ղևոնդ վարդ. եր. 6.
3. Երիցեան Աղ. Պտմ. 75 ամեայ գոյութեան Ներս. դպ. 439.

նորա վերայ էր դրուած ծախսարարութիւնն և դրամական հաշիւների պահպանութիւնը[1]։ Շահնազարեան իւր այդ պարտականութիւնների մէջ թերացած չէր, սակայն չկարողացաւ հաճոյանալ կաթողիկոսին։ Տ. Ներսէս Ե. 1848-ին ս. Էջմիածնում եղած ժամանակ լուր առաւ թէ իւր դպրոցում ուսուցիչ են նշանակուած Պատկանեան տէր Գաբրիէլ և Մանդինեան տէր Ստեփան քահանաները, որոնք նորան հաճելի չէին. այդ առթիւ նա կոնդակ գրեց Կարապետ վարդապետին և, իւր դժգոհութիւնն յայտնելով, խորհրդարանից բացատրութիւն պահանջեց. խորհրդարանն 1848 օգոստոսի 27 ին գրով բացատրութիւն տուեց կաթողիկոսին թէ Մանդինեանն ուսուցիչ չէ, իսկ Պատկանեանին ստիպուած են եղել նշանակել, որովհետև Հայոց լեզուի դասերի համար աւելի ձեռնհաս մարդ չկայ[2]։ Այդ օրերում սեպտեմբերի 5-ին տեղի ունեցաւ Ներսիսեան դպրոցի հանդիսաւոր վերաբացումը. կաթողիկոսի, գուցէ և առաջնորդի բացակայութեան պատճառով հանդէսը կատարեց Շահնազարեան Կարապետ վարդապետն իբրև կոնսիստորի նախանդամ և իբրև խորհրդարանի անդամ. այդ առթիւ նա կարդաց մի ընդարձակ ճառ[3] գրոց բարբառով, որի մէջ նա դրուատում է ուսման և լուսաւորութեան բարիքները։ Շուտով Կարապետ վարդապետին վիճակուեցաւ լինել վերատեսուչ Ներսիսեան դպրոցի։ Յայտնի չէ թէ ինչպէս տարաւ նա իւր այդ պաշտօնը. յայտնի է միայն որ 1849 թուին յառաջադէմ և գործունեայ վարդապետի դէմ, որ ունէր անշուշտ նախանձոտ թշնամիներ, տեղացին կաթողիկոսի ատեանն ամբաստանութիւններ, թէ ինչ բովանդակութեամբ, նոյնպէս ծանօթ

1. ա. անդ. 442 և 445։ 2. տ. անդ. 443։

3. «Բան յաւուր հանդիսաւոր բացման Ներսիսեան ուսումնարանի Հայոց Թիֆլիզոյ ի սեպտ. 1848 ամի, ասացեալ Կարապետ վարդապետի Շահնազարեանց առաջին անդամոյ կոնսիստորիային Հայոց Վրաստանի և Իմերէթի». տ. Երիցեան Ա. պատմ. 75 ամեայ գոյ. Ներս. դպր. 449—452.

չէ մեզ, և Շահնազարեան յանկարծ փոխանակ քաջալերութեան ժառանգեց իւր հոգևոր պետից դժգոհութիւն և տհաճութիւն։ Երիցեանի ասելով[1], կաթողիկոսը նորա վերայ քննութիւն նշանակեց. այդ հանդամանքը մտատանջութեան մէջ դրեց Շահնազարեանին, որն իւր սրտի վշտից հիւանդացաւ, 1850 յուլիսի 3-ին, երբ կաթողիկոսը Թիֆլիսից վերադառնալու էր ս. Էջմիածին, իրաւունք շնորհեց Կարապետ վարդապետին գնալ Հաղբատ օգափոխութեան։ Այդ արտօնութիւնից օգտուելով, Շահնազարեան նոյն յուլիսի 14-ին իւր ճանապարհը փոխելով փախաւ Ռուսաստանից և անցաւ դէպի Կ. Պոլիս[2]։

Այս տեղից սկսւում է Շահնազարեանի կեանքի և գործունէութեան երկրորդ արկածալից շրջանը, որ քաջիկ պատկերացնում է նորան իբրև անյողդյողդ կամքի տէր, գործունեայ և ուսումնասէր անձն։

Այս շրջանին անցնելուց առաջ մենք կարևոր ենք համարում, իհարկէ, վերապահութեամբ յառաջ բերել այստեղ այն տեղեկութիւնները, որոնք հաղորդուել են Շահնազարեանի փախուստի մասին։ Թէ այդ տեղեկութիւնների որն է աւելի մօտ ճշմարտութեան, այդ չենք կարող ասել։ Կենսագրներից մէկը պատմում է, որ 1847 թուին, երբ կարիք է եղել միաբաններից մէկին Հոլանդիա ուղարկելու, որպէսզի նա այնտեղի բանքից ստանայ Մայր-Աթոռին հասանելի տոկոսները, աւելի յարմար է դատուել Շահնազարեանցին ուղարկելու. նորա հակառակորդները կաթողիկոսի միտքը փոխում են և արգելք են լինում նորա ճանապարհորդութեանն Եւրոպա։ Վիրաւորուած Կարապետ վարդապետը Թիֆլիսի կոնսիստորիայի անդամ եղած ժամանակ իբր թէ իւրացնում է ութն հազար ռուբլի վիճակային գումար և հիւանդ ձևանալով կա-

1. տ. Երիցեան Ա. Պատմ. Ներս. դպր. 456.
2. տ. Սրեկ. Մամ. 1875 սեպ.

թողիկոսի թույլտուութեամբ գնում է Բորժոմ բժշկուելու և այնտեղից փախչում է Կ. Պոլիս[1]։

Միւս կենսագիրն, ինչպէս տեսանք, պատմում է որ Կարապետ վարդապետը քննութիւնից է փախել. հիւանդութիւնից բժշկուելու համար նա սկզբում տեղաւորուել է Նաւթլուղի զինուորական հիւանդանոցում, և այն տեղից խոյս տալով դէպի Հաղբատ, ճանապարհը փոխել է դէպի Կ. Պոլիս[2]։

Երրորդ կենսագիրը[3] որ ևէ յանցանքի կամ փախուստի մասին խօսք չի անում, այլ պատմում է, որ երբ 1850 յուլ. 3-ին տ. Ներսէս Ե. գնաց ս. Էջմիածին, Կարապետ վարդապետը գլխացաւի պատճառով կաթողիկոսից հրաման առաւ Հաղբատ օդափոխութեան գնալու, բայց յետոյ միտքը փոխեց և օդափոխութեան տեղ ընտրեց Կ. Պոլիսը։

Կայ սակայն և մի ուրիշ բացատրութիւն Շահնազարեանի անակնկալ հեռանալու մասին։ Պ. Յ. Գ. Մրմրեան[4] պատմում է, որ երբ տ. Ներսէս Ե. քննիչ յանձնաժողով նշանակեց Թիֆլիսի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսի հաշիւների վերայ, յանձնաժողովի նախագահութիւնն յանձնեց Կարապետ վարդապետին, իբրև թէ վերջինս Կարապետ ա. եպիսկոպոսից երեք հազար ռուբլի կաշառք առաւ, որպէսզի հաշիւների մէջ նորան մաքուր հանէ. կաթողիկոսն այդ իմանալով, միտքը դրեց պատժել վարդապետին, որն իրազեկ լինելով փախաւ Կ. Պոլիս։

Այսպէս, թէպէտ հաւաստին մեզ յայտնի չէ, սակայն այդ պատմուածներից երևում է, որ Կարապետ վարդապետն ունեցել է պաշտօնական զանցառութիւն Թիֆլիսի իւր գործողութիւնների մէջ, որ նա զրգռել է կաթողիկոսին իւր դէմ, որ նա Կ. Պոլիս անցնելով, հետը տարել է մի պատկառելի

---

1. տ. Արաքս. Բ. տ. 2. տ. Երիցեան Ա. Պատմ. Ներս. դպ. 456.
3. տ. Արևելեան Մամուլ 1875 Սեպ.
4. Տաննիններորդ դար և Յովհ. Պրուս. Տէրոյենց, Կ. Պոլիս. 1908, եր. 98.

գումար, կաշառք թէ գաղած փող, յայտնի չէ, որ վերջապէս նա այդ ամէնն արել է ծածուկ, երկիւղ ունենալով կաթողիկոսի հալածանքից։

Է.

Կ. Պոլսում Կարապետ վարդապետ նախ ապաստան գտաւ Տատեան Յովհաննէս պէյի տանն Իւսկիւտարում, ապա սեպտեմբերի 28-ին ներկայացաւ Յակոբոս պատրիարքին, որն հայրական սիրով ընդունեց նորան. մի օր յետոյ իւր թղթերն ու կոնդակները հոգևոր ժողովին ներկայացուց. նոցա մէջ չնկատուեցաւ վարդապետի վարքին և համբաւին արատ բերող բան, ուստի և պատրիարքը թոյլ տուեց նորան մնալու պատրիարքարանում և Ղալաթիոյ քարոզիչ նշանակեց։

Թաղեցիք սիրով լսում էին նոր մարդու քարոզները, որոնք նոցա վերայ մեծ տպաւորութիւն էին թողնում. շուտով նա լաւ քարոզչի հռչակ ստացաւ. ս. Էջմիածնից եկած վարդապետը, որ ուսումով ու կրթութեամբ տարբեր դպրոց էր անցել, գիտէր Ռուսաստանն և ռուսերէնը, հայեացքներով ու խօսելու ձևով աւելի թարմ ու նորանշան էր երևում, անտարակոյս, Պոլսի ազգայինների մէջ պէտք է գտնէր և բազմաթիւ համակրողներ, որոնց հանդէպ կային սակայն նեղսիրտ քննադատողներ ու թշնամաբար հակառակողներ։ Նոր մարդու դէմ խուլ դժգոհութեան կայծը բորբոքելու հասաւ տ· Ներսէս Ե. կաթողիկոսի կոնդակը, որ պատուիրում էր պատրիարքին չճանաչել Շահնազարեանցին վարդապետ, և գրում էր ս. Էջմիածնից փախած Օձնեցի Վարդան և Յովհաննէս վարդապետների համար «աղուեսունք փոքունք ապականիչք այգւոյն Քրիստոսի», իսկ Կարապետ վարդապետին անուանում էր [1] «բարապան դժոխոց»։

Այն ժամանակի Պոլսեցւոց համար բաւական էր, որ կաթողիկոսն այդքան առիթ տուած լինէր դատելու և դա-

1. տ. Արևել. Մամուլ 1875 ապրիլ։

տապարտելու մի վարդապետի, որն արդէն իրենց մէջ քարոզիչ էր, բաւական ճարտար, կտրուկ և մինչև անգամ, ժամանակին նայելով, և ազատամիտ։

Թէ ինչ էր այն ժամանակ Պոլսեցի ասածդ, դժուար չէ իմանալ։ Ամեն մարդ, որ Պոլիս էր բնակւում, իհարկէ, Պոլսեցի չէր համարւում։ Առաջաւորներն և ամիրաներն էին, որ իրենց մէջ ամփոփում էին հայկական Պոլիսը։ Նոքա սովոր էին ամէն կոչման և աստիճանի եկեղեցականի գլխին իշխան լինել. որքան և բարեպաշտ, սակայն չափազանց նեղսիրտ, կամապաշտ և ինքնասէր մարդիկ էին, իրենց աշխարհային առաւելութիւնների գնով գնել էին կարծես ամէն ազատութիւն, նոյն իսկ կարծիքների և համոզմունքի, ոչ միայն քաղաքական ու հասարակական, այլ նաև կրօնական խնդիրներում։ Եթէ ամիրայի մէկին հաճելի էր պնդել, զօրօրինակ, թէ Դաշանց թուղթը վաւերական է, ամէնքն էլ, նոցա կարծիքով, պարտաւոր էին այդ ընդունել։ Պոլսի առաջաւորների շրջանում պատուաւոր տեղ ունէր և ժամանակի գիտնականն ու հրապարակականը, Տէրոյենց պատուելին (Զամուռճեան, կամ ըստ Շահնազարեանի Տղմապետեան), խիստ աւանդապահ ոգու տէր մի մարդ, բարեպաշտ, կրօնական հարցերում ներհուն, ազգային եկեղեցական պատմութեանը քաջահմուտ, և եկեղեցական ու աշխարհական դասերի մէջ այնպիսի ազդեցութիւն վայելող, որ մինչև անգամ յորջորջում էին նորան անվեղար կաթողիկոս։ Նորան պակասում էր սակայն կրօնական ներողամտութիւնն և համբերատար ոգին, առանց որի նորա նման առաջաւորներին անհնարին էր դրական կամ տեղական ազդեցութիւն ձեռք բերել։ Տէրոյենցի հայրենասիրութիւնն անկասկածելի է, սակայն նորա խորհուրդների և գործերի արտայայտութիւնն, եթէ կարելի է այսպէս ասել, կաշկանդեալ և անազատ էր, հիմնուած լոկ աւանդութեան կոյր հետևողութեան վերայ։ Բողոքական եկեղեցու ՀԱՍԱԿԱՐ ազդեցութիւնը չէզոքացնելու համար, օրինակ, նա իբրև դիմադիր ոյժ էր

ընդունում կաթոլիկ անդրլեռնական գաղափարները, և համոզուած էր թէ այդպէս աւելի դիւրին էր ապահովել Հայոց եկեղեցին վերահաս քայքայումից։ Տէրոյենցի այդ կերպ մտածելու պատճառը թուի թէ այն մտաւոր խղճուկ վիճակն էր, որի մէջ էին այն ժամանակ հայ ժողովուրդն ու հոգևորականը։ Նոյն Տէրոյենցի ոգւով աւելի կամ պակաս բռնուած էին ժամանակի շատ առաջաւորները, որոնց մէջ յիշատակութեան արժանի են Մատթէոս արքեպիսկոպոս, նախկին պատրիարք Կ. Պոլսոյ, յետոյ կաթողիկոս, Պալեան Կարապետ ամիրայ և այլն։

Ը.

Շուտով առիթը ներկայացաւ, որ Տէրոյենց և Կարապետ վարդապետ ընդհարուէին, և Պոլսեցիք էլ այս կամ այն կողմին յարէին։ Ինչպէս միշտ, այս անգամ էլ վարդապետի ոսոխը մի վարդապետ հանդիսացաւ։ Մի ընտանիքի մէջ 2—3 վարդապետի ներկայութեան, ուր հիւրերի մէջ կար և Տէրոյենց պատուելին, 1850 Հոկտ. 30-ին երեկոյին խօսք է լինում պատկերայարգութեան մասին։ Բառերի և դարձուածների պատճառով Կարապետ վարդապետ և Տէրոյենց իրարու տարակարծիք են երևում։ Պատուելին, յոռի տպաւորութիւն առնելով վարդապետի խօսքերից, հետևեալ իսկ օրը ծածուկ գրում է [1] Սէթեան Յովհաննէս վարդապետին, որ Գուզգունճուքի քարոզիչն էր, հետևեալ խօսքերը. «Կարապետ վարդապետին հետ տեսութիւն ընելով անհաւատութեան նշաններ տեսայ անոր վրայ, և բերանը հոտած ըլլալուն սրտին վերքը կը գուշակուի, կը կարծենք, որ Կիլիկիայ եպիսկոպոս ըլլալ երթայ, և Պոլիս պատրիարք ըլլալու խորհուրդ ունենայ...»։ Յովհաննէս վարդապետը Տէրոյենցի այս թուղթը տուեց և ուրիշներին կարդալու, և բնական կերպով կարծիք տարածուեցաւ Կարապետ վարդապետի վերայ իբր թէ վեր-

1) Արևել. Մամուլ 1875 Սեպ. եր. 372.

ջինս անհաւատ և Հայոց եկեղեցուն հակառակ մէկն էր։ Շահնազարեանց այս լսեց, բողոքեց և ժողով պահանջեց զրպարտութիւնը քննելու և յանցաւորի դատակնիքը տալու։ Կարապետ վարդապետ, թէև ունէր ազդեցիկ բարեկամներ և ջերմ համակրողներ, սակայն չէր կարող չզղալ մտքերի գայթակղուած լինելու վատ հետևանքները։ Նախ իւր վարկաբեկումն և իւր գործունէութեան խոչընդոտներն ելան աչքի առաջ։ Վաղուց չէր, որ Տատեան Յովհաննէս պէյի տանը, ամիրաների առտնին ժողովում Կարապետ վարդապետի ընդունակութիւնները գնահատելով, որոշուել էր մի առանձին դպրոց բանալ և գնել նորա տրամադրութեան տակ, մի գործ, որ շատ սիրելի էր նորան և փափագելի։ Այն ինչ մի քանի ամսուայ մէջ նորա անուան շուրջը կուտակուեցան շատ նպաստաւոր և աննպաստ զրոյցները, որոնք Պոլսի հայութեան մտքերն զբաղեցնում էին լրջօրէն։ Մի կողմից ամենայն Հայոց կաթողիկոսը, տ. Ներսէս Ե. պատուիրում էր չճանաչել նորան վարդապետ և անուանում էր նորան «բարապան դժոխոց». միւս կողմից Պոլսեցւոց «անվեղար կաթողիկոսը» հռչակում էր նոյն վարդապետին անհաւատ և իւր անտեղի կասկածով թունաւորում էր և հասարակաց միտքն իրը թէ նա գնալու է Սիս, եպիսկոպոս լինելու, Կ. Պոլոյ պատրիարքութիւնը գրաւելու կայլն։

Տեսնենք նախ թէ ինչ էին Շահնազարեանցի անհաւատութեան նշանները, որ այնքան վախեցնում էին Պոլսոյ առաջաւորներին։ Թողնենք, որ ինքը պատմէ մեզ այդ մասին։

«1850 թուին, երբ Տատեան Յովհաննէս բէյի տունը խորհուրդ կըլլայ, գրում է նա, մեր տեսչութեանը սակ Ազատը վարդապետարան մը հիմնել, քանի մը զրոյցներու վերայ մեր ու Կարապետ ամիրայի մէջ, չգիտեմ, ինչ աներևոյթ դրդմամբ առարկութիւններ եղան և առաջարկեալ գործոյն միանգամայն խուժան։ Մեր վիճոյ գլխաւոր յօդուածներն էին՝ Սուրբ Լուսաւորչի եւ Սեղբեստրոսի մէջ

Քրիստոսի արեամբ զրուած դաշն դնելու վաւերական ըլլալն կամ չըլլալը, Պետրոս առաքելոյ Հռոմ նահատակուիլն կամ չնահատակուիլը, Իտալիա եղած 3—4 շինծու պատկերաց Քրիստոսի տեառն մերոյ առ Աբգար ուղարկած ըլլալը կամ չըլլալը։ Մեր ամիրայ հակառակորդը անդրլեռնեան ըմպելեօք զմայլեալ կըպնդէր որ անոնք ամենն ալ վաւերն են և իբրև Հաւատամքի հանգանակ ընդունելի. մեք ասնոր ներհակ, բանականութեան, Քրիստոսի եկեղեցւոյ ընդհանուր և մեր ազգային յատուկ պատմութեան վերայ յեցեալ՝ կ'ալնդէինք թէ անոնք Մի՛ջին դարու անասլացոյց զրոյցք են, թէ անոնք մեր հանգանակի ու կրօնագիտութեան մէջ չկան, եւ, հետեւաբար, ոչ անոնց ընդունողները պախարակելի են, ոչ չընդունողները պարսաւելի [1]։

Ընթերցողին դիւրին է մակաբերել, թէ վիճաբանութեան նիւթի մէջ անհաւատութեան առարկայ չկայ։ Եւ իրօք էլ, եթէ լինէր, Կարապետ վարդապետ դատապարտութիւնից զերծ մնալ չէր կարող։ Այն ինչ, ինչպէս կըտեսնենք, Շահնազարեանի և Տէրոյենցի մէջ մէկին կամ միւսին պատիւ չբերող խօսքեր ու դատողութիւններ են եղել և նկատուել են լոկ իբրև թիւրիմացութիւն կամ կողմնակի մարտիկների կրքի արտայայտութիւն։

Թ.

Յատկապէս երկու անգամ ժողով եղաւ Կարապետ վարդապետի մտքերը քննութեան առնելու՝ առաջինն 1851 փետրվարի 21-ին և երկրորդը նոյն տարուայ Ապրիլի 20-ին [2]։ Այն ժամանակ արծարծուած խնդիրներն այդպիսի ժողովի ձեռնհասութիւնից վեր էին և արժանի էին ճեմարանական կոչուելու. սակայն և այնպէս ամիրաներն

1). տ. Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը, Փարիզ։ 1862 եր. 7։

2). տ. Արևել. Մամուլ 1875 Սեպտ. 369—380, Մայիս 218 և այլն «Մի՛ջնադարեան Ատեան մը»։ Մասնակցում էին Յակոբոս պատրիարքի նախագահութեամբ Մատթէոս արքեպիսկոպոս, Յով-

ու աղաները ջերմաջերմ իրենց հարցափորձի առարկայ արին առանց կարենալու լուծել մի խնդիր։ Կարապետ վարդապետի պատասխանները կտրուկ էին, նորա պաշտպանների հարցմունքներն ու բացատրութիւնները սրամիտ, Յակոբոս պատրիարքի մերթ ընդ մերթ նախագահական իրաւունքով արտասանած նկատողութիւններն զգուշալի և սթափեցուցիչ։ Չնայելով այս ամենին, Կարապետ ամիրայ Պալեան (ճարտարապետ ամիրայ), որ Շահնազարեանի դէմ առանձնապէս գրգռուած էր և ինքն էլ մեծ ազդեցութիւն ունէր, պահանջ դրեց մեղաւոր ճանաչել վարդապետին և Կ. Պոլսից հեռացնել։ Աւելորդ է յիշատակել առհասարակ արծարծուած մտքերի դեր և դէմ փոխանակութիւնը, որ ընթերցողը կարող է ընդարձակ կարդալ Արևելեան Մամուլի մեր նշանակած տեղերում։ Բաւական է արձանագրել միայն այն, թէ Կարապետ վարդապետի վերայ մեղադրութիւն գտնել կարելի չեղաւ, և, ինչպէս իրերի ընթացքից երևում է, չնայելով կաթողիկոսի կոնդակին, Տէ-

---

հաննէս Վ. Սէթեան տէր, Յովհաննէս Իսկուտարի, տէր Զաքարիա Բերայի, տէր Երեմիա Խասգիւղի, ձէղայիրլեան Մկրտիչ, Միսաքեան Միսաք, Ճարտարապետ Կարապետ (Պալեան), վառօդապետ Յովհաննէս (Տատեան) և Երամեան Գէորգ ամիրաները, Պողոս աղա Ալթունեան, Պետրոս ա. Խորասաճեան, Յակոբջան ա. Միսաքեան, արքունի գրագիր Պողոս ա. (Օտեան), Նիկողայոս ա. Հովուեան, Մկրտիչ ա. Մոմճեան, Գալուստ տ. Կոստանտեան, Յարութիւն ա. Հովուեան, Յակոբիկ ա. Մսնուէլեան, պատուելի Յովհաննէս դպիր Զամուրճեանց, Գրիգոր վարժապետ տ. Յովհաննեան, Յովսէփ վարժապետ ա. Սահակեան, Պ. Գալուստ տ. Պողոսեան։ Ժողովին մասնակցում էր և Կ. Վ. Շահնազարեանց։ Պ. Յ. Մրմրեան սոցանից զատ յիշատակում է և հետևեալ մասնակցողների անունները՝ Ճանիկ ամիրայ, Մազսուտ ամիրայ, Մարտիրոս ամիրայ Բարունակեան, Յակոբ Կոճիկեան, տէր Գէորգ Մ. Եկեղեցւոյ, Պուրունսուզեան Յակոբ աղա և տիրացու Արիստակէս. փոխանակ Պողոս աղա Ալթունեան Արիստակէս. Ա, որ է Ալթուն Տիւրիւ, ըստ այսմ Պողոս աղան Աշնանեանն է, որ նոյնպէս ներկայ էր Ժողովին և Կ. վարդապետին պաշտպանողներից մէկն էր. ա. և Յ. Մրմրեան, ԺԹ. դար և Տէրոյենց, եր. 101։

բոյենցի հեղինակութեանը և հակառակորդ ամիրաների բուռն պահանջկոտութեանը, Կարապետ վարդապետ Ֆնաց Կ. Պոլսում իբրև քարոզիչ երեք տարի, մի յաղթանակ, որ ցոյց է տալիս թէ ճարտար մարդու կեանքի և դատողութիւնների մէջ չգտնուեցաւ այնքան բծախնդիր [1] դատաւորների կողմից մի դատապարտելի ինչ։ Ընդհակառակը՝ Շահնազարեանին ամբաստանողներն այն ժողովների արձանագրութիւնների մէջ հանդիսանում են նախ բաւական խակ և մեծամիտ, և ապա, որ աւելի ուշադրութեան արժանին է, շատ նեղսիրտ, բծախնդիր և անհեռատես, միևնոյն ժամանակ գռեհկական ու սնվայել ոճով վիճաբանող ու պաշտպանուող։ Բացառութիւն է, անշուշտ, Տէրոյենց պատուելին, որ, հաստատուն իւր համոզմունքների վերայ, միշտ հետամուտ էր վիճաբանութեանն աւելի գիտական ուղղութիւն տալ, որը սակայն չյաջողուեցաւ նորան, իւր ընդդիմախօսի, Կարապետ վարդապետի, շիտակութիւնն ու ազատական արտայայտութեան ձևերը չունենալով։ Այս և իրաւունք էր տալիս ճարտար վարդապետին նոյն ժողովներից տասնևվեց տարի յետոյ հետևեալ հակիրճ և բընորոշ տողերի մէջ ամփոփելու իւր եռամեայ վիճակի նկարագիրը [2]։

«Ի Կոստանդնուպօլիս արեւմտեան յիսուսականութիւնն աջակցեալ ընդ ասիական քոնաւորութեան, չետուն ինձ հանգիստ զամս երիս»...

Կարապետ վարդապետ իբրև մաքառող և ինքնուրոյն դէմք, կարելի է ասել, հակապատկերն էր Տէրոյենցի,

---

1. Կարապետ վարդապետին ամբաստանում էին, որ աւագ հինգշաբթի ոտնլուայի ժամանակ քահանաների ու դպիրների ոտքը համբուրում է եղել։ Այդ գայթակղութիւն էր համարուել։ Շահնազարեան ժողովի մէջ յայտնեց «Ներսէս սրբազան իմ ոտք լուացած ատեն համբուրեր է. այս բանիս համար ստորագրութիւն կուտամ, գրեցէք Ներսէս սրբազանին, նա սուտ չխօսիր, ու ստոյգ կիմացնէ»։ տ. Արևել. Մամուլ։

2. տ. Ղևոնդ վարդ. Ազդ, 6.

ինչպէս ցոյց է տալիս վիճաբանութեան ընթացքը, բաւական է յիշել այն, որ նա անհաւատութիւն չէր համարում ասել թէ Պետրոս առաքեալ Հռոմ չէ գնացել, Դաշանց թուղթը շինծու է, Դաստառակի աւանդութիւնները միջնադարեան յերիւրանքներ են և այլն, մտքեր, որոնք Տէրոյենցին սարսափ էին ազդում. սակայն վիճաբանութեան մէջ մեր առջևն են դալիս նորա նկարագրի պայծառ գծերն այսպիսի խօսքերի մէջ «Գիտցիր, պատուելի, ժողովի մէջ ասում է Տէրոյենցին Շահնազարեանց [1]), ես իմ ազգս քեզ նման չեմ սիրեր, յօժար եմ իմ ազգիս մէջ անարգ ըլլալ եւ մուրացիկ քան յօտար ազգս փառաւոր եւ հարուստ»։ Իրենց տարաձայնութեան բուն պատճառը նա պատկերայարգութեան խնդիրը չէ համարում, որն առիթ տուեց ընդհարման, այլ այն, որ Տէրոյենց իւր ընդդիմախօսի առաջ չարաչար պախարակում էր բողոքականներին և «լռելեայն գովում էր պապականներին». պատուելու այդպիսի արտայայտութիւնն էր, որ գրգռեց վարդապետի արդար զայրոյթը. «Ես ըսի, պատասխանում է [2] Շահնազարեան, երկուքն ալ այսինքն նորաղանցք եւ պապականք հակառակ եւ թշնամի են եկեղեցւոյ Հայոց եւ ազգութեան մերոյ»։ Տէրոյենց իւր Հայաստան թերթում Էօժէն Բորէին, որ ճանապարհորդել էր մեր երկրում, կրօնասէր և հայասէր էր ներկայացնում, մինչդեռ գիտէր, որ Բորէն Հայերին հերետիկոս էր համարում և այդպէս էր ներկայանում աշխարհին իւր հրատարակութեան մէջ. «Միթէ՞ ազգիդ ասկէ աւելի խարդախութիւն կրնա՞յ ըլլալ, հարցնում է վարդապետը [3], որ թշնամին իբրև բարեկամ ճանչցնես»։

Այս օրինակները բերուեցան ցոյց տալու համար, որ Կարապետ վարդապետ աւելի ազատ և ուղիղ էր նայում խնդրի վերայ։

---

1) տ. Արևել. մամ. 1875 սեպ. 337. 2) Անդ. 378. 3) Անդ. 379.

Ժ.

Զնայելով կրած հալածանքներին, Կարապետ վարդապետ Կ. Պոլսում չընդհատեց իւր աշխատութիւնն ընդօրինակելու հին հետաքրքիր ձեռագրներ. «շարունակ ի նոյն դեգերեցայ, գրում է, և գանձեցի զորս պակասէին ինձ ցայն վայր ազգային պատմագիրք»։ Աշխատութիւններն արդիւնաւորելու համար նա վերջապէս հեռանում է Կ. Պոլսից և 1855 թուին հաստատւում է Փարիզում։ Թէպէտև տակաւին կենդանի էր տ. Ներսէս Ե. Աշտարակեցին և ուժի մէջ էին Կ. Պոլսի իւր հակառակորդ ամիրաներն ու Տէրոյենց, որով Փարիզի «Արևմուտք» թերթում ևս գրեցին Շահնազարեանցին հակառակ, այնուամենայնիւ նա իւր անընկճելի տոկունութեամբ դիմեց գործի։ Բարեկամների միջոցով գտաւ իրեն օժանդակ բարերարներ և նոցա նպաստներով հաստատեց Փարիզում հայկական տպարան, 1856-ին հրատարակեց յայտարարութեան ձևով իւր ծրագիրը և ազգայիններին հրաւիրեց «շար հայ պատմագրաց» գործին օգնութեան հասնելու։ Եւ չսխալուեցաւ. ինչպէս նորա հրատարակութիւնների վերջում դրուած ցուցակներից երևում է, ազգը համակրութեամբ ողջունեց Շահնազարեանցի [1] ձեռնարկութիւնն և չխնայեց իւր լուման նորա գործի յաջողութեան համար։ Առաջին անգամ 1857-ին նորա տպարանից լոյս տեսաւ Ղևոնդ վարդապետի «Արշաւանք Ա. րաբաց ի Հայս» գիրքը, նուիրուած բարերարներից մէկի Ապրոյեան Աբրահամ ամիրային յիշատակին, որի պատկերն և զարդարում է գրքի ճակատը։ Բարերարների շարքում Շահնազարեան յիշատակում է Լազարեանց Խաչատուր աղային, Մանուկ պէյին, Իւսուֆեան Յովսէփ Զէլէպուն և Կոստանդեան Գրիգորին։ Հրատարակչական իւր այդ գործունէութիւնը Փարիզում շարունակեց Շահնազարեանց մինչև 1862 թ. և լոյս ընծայեց Ստ. Ասողիկի, Մով-

1) տ. Ղևոնդ վ. Աղդ. 6.

կաղանկատուացու, Ստ. Օրպէլեանի, Սմբատ Սպարապետի, Վահրամի և Թովմա Մեծոփեցու անգրանիկ հրատարակութիւնները ծանօթութիւններով ու լուսաբանութիւններով։ Մի շատ թանգագին ծառայութիւն էր այդ, որ հալածական վարդապետն իւր բազմամեայ տոկուն աշխատութեան շնորհիւ մատոյց Հայոց գրականութեան և պատմութեանը։ Ֆրանսական մայրաքաղաքում նա շուտով ընտելացաւ երկրի լեզուին, մօտեցաւ և մտերմացաւ հռչակաւոր գիտնականների հետ, արաբերէնի ուսուցչապետն Ռայնօ (1795—1867) խրախուսեց Շահնազարեանցին ֆրանսերէն թարգմանելու Ղևոնդի պատմութիւնը, Փարիզի Արևելեան կոչուած ընկերութիւնը նորան դասեց իւր անդամակիցների շարքը, Մոսկովի Լազարեանց ճեմարանն ընտրեց նորան իւր խորհրդարանի անդամ, և այլն։ Այս ամէնի հետ մի ասին Կարապետ վարդապետ միշտ և ամէն ժամանակ իւր անուան մօտ պատիւ էր համարում դնել և «միաբան սրբոյ Էջմիածնի» խօսքերը։

Բացի «Շար»-ի հրատարակութիւնից Շահնազարեանց Փարիզում տպեց ֆրանսերէն լեզուով «Esquises sur l'histoire d'Arménie», այս գործն յետոյ թարգմանուեցաւ հայերէն և լոյս տեսաւ 1863-ին Կռունկի մէջ և առանձին «ծրագիր պատմութիւն» վերնագրով։ Ամփոփ և առասպելներից ազատ մի համառօտ գործ է այս, որ գաղափար է տալիս Հայոց անցեալի մասին սկզբից մինչև ԺԹ. դարը։ Կարապետ վարդապետ իւր նախաբանի մէջ այն միտքն է յայտնում, թէ Հայոց ազգը մի պատմական կոչումն ունի Արևելքում. յիշելով այնպիսի ազգերի, որոնք յայտնուել և անցել են, ասում է, որ «ընդհակառակն Հայք նրանց չափ հին լինելով և նրանց պէս ջղակտոր և ջարդուփշուր լինելով, էլի կան տակաւին աշխարհի երեսին վրայ և պահած են իրանց լեզուն, իրանց քրիստոնէական ազգային կրօնը, իրանց հայրենի երկիրը, իրանց յիշատակարանները, սովորութիւնները և օրէնքները, որոնք իրանց ապգայնութեան նման կենդանի են։ Այս ի-

բերուն նայելով, ասում է, կարելի է հաստատել և պընդել, որ այս ազգը տակաւին իր պաշտօնը չէ կատարել և դեռ ջնջուելու և կործանուելու վրայ չէ»։ Այսպէս մտածելով, Շահնազարեանց Հայերին է վերապահում Արևելքի ապագայ վերածնութեան կոչումը։ «Թէ որ Արևելքին սահմանուած է մի օր քրիստոնէութիւնը ընդունելու, թէ որ քաղաքակրթութիւնն այնտեղ պիտի մտնի, թէորը այստեղ բարք և վարք պիտի ամրանան, Հայք, ասում է, անշուշտ, մի մեծ պաշտօն ունին կատարելու այս վերազարգացման գործքի մէջ»։ Շահնազարեանցի այս անդրդուելի համոզմունքն յաճախ արտայայտուել է նորա հրատարակութիւնների և ձեռնարկութիւնների մէջ։ 1862 թուին նա գրեց և հրատարակեց Փարիզում իւր թէպէտ փոքրիկ բայց նշանաւոր գործը «Դաշանց թղթոյ քննութիւն և հերքումը», որի մէջ նա, պատմելով իւր ընդհարումները Կ. Պոլսում յատկապէս ճարտարապետ Պալեան Կարապետ ամիրայի հետ, զօրեղ փաստերով և ճարտարօրէն հերքում է տ. Մատթէոս կաթողիկոսի «Հաստատութիւն ստուգութեան Դաշանց թղթոյն» տետրակի բովանդակութիւնն, և հաստատում է նոյն թղթի կեղծ լինելը· այդտեղ Կարապետ վարդապետն հանդիսանում է ջերմ նախանձախնդիր Հայոց եկեղեցու և ազգի արժանապատուութեան, իւր հայեացքներն ազգի վիճակի բարելաւութեան և յառաջադիմութեան վերայ նա ընդարձակ բացատրած է «բովանդակութիւն» վերնագրով մասում, որտեղ թէև շատ համառօտ բայց վսեմ տեսութիւններ է անում ազգային կացութեան վերայ[1]։

Նոյն 1862-ին Զէյթունի Հայոց շարժումների ժամանակ Կարապետ վարդապետ մի յիշատակարան մատոյց

---

1). Կարապետ վարդապետի երկերի ցանկում յիշւում են նաև 1) Նկարագիր պատմութեան Հայոց, գաղղիերէն հեղինակութիւն, 2) Ընդարձակ տեղագրութիւն Հայաստանի, գաղղիերէն հեղինակութիւն և 3) Պատասխանիք ընդդէմ բողոքականաց ի պաշտպանութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ։

Նապոլէոն Գ. Կայսեր, հայցելով նորա ուշադրութիւնը Կիլիկիոյ Հայերի վիճակի վերայ։

ԺԱ.

Թէ ինչն ստիպեց Կարապետ վարդապետին թողնել Փարիզն և 1863-ին տեղափոխուել Մանչէստէր, յայտնի չէ։ Հաւանական է որ հայ գաղութի ընդարձակութիւնն և իւր հովուական պարտաւորութիւններն աւելի հրապուրեցին նորան այնտեղ։ Փարիզում նա ինքն էր նախապատճառ եղել Հայոց համար մի մատուռ կամ ժամանակաւոր աղօթատուն ունենալու, բայց այն ժամանակները մշտական բնակիչներ չկային այնտեղ և վարդապետն առանց ժողովրդի էր մնացել։ Անգլիական Մանչէստէր քաղաքը ընդհակառակը ոչ միայն բաւական հայ բնակիչներ ունէր, միևնոյն ժամանակ և կեդրոնն էր Հնդկաստանի Հայոց առևտրական ձեռնարկութիւնների, ուր լինում էր Հայերի երթևեկութիւնն ամէն կողմից։ Հոչակաւոր վարդապետը Մանչէստէրում էլ պատկառելի դիրք գրաւեց և իւր սովորութեամբ գրիչը ձեռքից չթողնելով 1864-ին սկիզբն դրեց հայերէն մի թերթի հրատարակութեան, որի անունն էր «Երկրագունդ». ձեռքի տակ չունենալով այդ թերթից որևէ մի օրինակ, անկարող ենք գաղափար տալ ընթերցողին նորա բովանդակութեան և ուղղութեան մասին։ Կ'ասենք միայն, որ շատ կարճատև էր նորա կեանքը, որովհետև Կարապետ վարդապետն իւր բազմաշխատ կեանքի բեռի տակ, թէպէտև դեռ հազիւ յիսուն տարեկան եղած, մօտենում էր գերեզմանին։ Նոյն 1864-ին նա հիւանդանալով հեռացաւ Մանչէստէրից Փարիզ բժշկութիւն գտնելու. հիւանդութիւնն ստիպեց նորան գնալ հարաւ, առժամանակ Եգիպտոսում Նուպար փաշայի հիւրասիրութիւնը վայելեց և նորա հետ մտերմացաւ. ապա անցաւ Կ. Պոլիս և իւր վաղեմի բարեկամ Երզնկացի տէր Գէորգ Արծրունու

տանն օթևան ընդունեց որ Խասգիւղի քահանան էր[1]։ Ասպնջականները սիրով համբերութեամբ խնամեցին իրենց յարկի տակ հիւանդ վաստակաւորին, օգափոխութեան տարան, բժիշկներ բերին և այլն, սակայն Կարապետ վարդապետի կեանքի ասպարէզը վերջացած էր. նա իր մահկանացուն կնքեց 1865 Օգոստոսի 31-ին. մարմինն ամփոփուեցաւ Խասգիւղի գերեզմանոցում, ուր նորա շիրմի վերայ կայ այս տապանագիրը.

«Աստ հանգչի յուսով փառացն յաւիտենից Կարապետ վարդապետ Շահնազարեանց, ծնեալ ի Համատան ի 14 մարտի 1814 թ. և վախճանեալ ի Խասգիւղ Կոստանդնուպոլսոյ յամի 1865 օգոստոսի 31-ին»։

Նորա կեանքն ու գրական գործունէութիւնն անեղծ յիշատակներ են, որոնք աւելի տևականօրէն պիտի խօսեն ու յիշեցնեն վաստակաւոր վարդապետի մասին քան իր տապանագիրը. սակայն մտահարուստ և միշտ աշխոյժ Շահնազարեանցն աւելի երկար ապրելու բուռն ցանկութեամբ թողեց և մի կտակ իր ազգի օգտին։ 1850 – 1865 թ. նա գրեթէ շարունակ շարժուն գործունէութեան մէջ էր։ Թէ ունէր իրեն հետ մի գումար, երբ Թիֆլիսից անցաւ Պոլիս, և որքան էր այդ գումարը, մեզ հաւաստի յայտնի չէ. բայց շատ հաւանական է, որ նա իրեն նիւթապէս ապահովելուց յետոյ միայն յանձն առնէր փախուստ և անստոյգ ապագայ։ Անկախ այս հանգամանքից, երբ Կարապետ վարդապետ Փարիզ փոխադրուեցաւ և բարերարների դրամական օժանդակութեամբ տպարան հաստատեց, այնտեղ նա իրեն տուած քանքարը շահեցուց իր անխոնջ աշխատութեամբ։ Նորա տպարանը կամ ինչպէս ինքն է

*) Այս քահանայի տանը պահւում է և Շահնազարեանի ձիթաներկ պատկերը, որ նկարել է генералъ маіоръ Назымовъ 1844 թուին, թուի թէ նորանից է առնուած և Արաքսի մէջ լոյս տեսած պատկերը (տ. Արաքս, Բ. տ.) Կ. Կ.—Յօդուածիս ճակատը զարդարող պատկերը մենք ձեռք բերինք Պոլսում 1896 թուին։ Խմբ։

անուանում, գործատունը մօտ տասն տարի գործեց և նորան արդիւնք տուեց, նմանապէս և նորա հրատարակութիւններն այսպէս կամ այնպէս եկամուտ էին բերում։ Միևնոյն ժամանակ նա ունէր ճոխ գրատուն, գրչեայ մատեաններ և այլ հաւաքածոյ։ Նա իւր տպարանն և իւր բոլոր շարժական գոյքը կտակեց ազգին, կտակակատար նշանակեց Վարժապետեան Ներսէս վարդապետին (յետոյ պատրիարք) և կտակի մէջ պայման դրեց, որ երբ իւր բոլոր գոյքը վաճառուի և առձեռն պատրաստ գումարի հետ միասին օսմանեան հազար ոսկի դառնայ, Կիլիկիայում այդ հաշուով մի դպրոց բացուի իւր անունով, իսկ եթէ գումարը չբաւէ, պակասը լրացնէ Նուպար փաշան։ Վարժապետեան այդ կտակը գործ դնելու ժամանակ օգտուեցաւ մի հանգամանքից. այդ միջոցին վախճանել էր Նուպար փաշայի եղբայրն, Առաքել պէյ։ Ներսէս վարդապետ գնաց Եգիպտոս Նուպար փաշայի մօտ և նորան օգնութեան կանչեց. առատաձեռն փաշան իւր եղբօր յիշատակին նուիրեց երեք հազար ոսկի, որը միացնելով Շահնազարեանի կտակած հազար ոսկու հետ, ուսումնարանի բացման դրամագլուխ եղաւ։ Աչքի առաջ ունենալով Կիլիկիոյ անյարմարութիւնները, 1866-ին, Վարժապետեանի և Նուպար փաշայի ջանքերով բացուեցաւ Խասգիւղում այն վարժարանը որ բարերարների անունով կոչուեցաւ Նուպար-Շահնազարեան։ Տասն տարի յաջող գոյութիւն ունեցաւ այդ վարժարանը Վարժապետեանի անմիջական հսկողութեան տակ և տուեց շատ պիտանի սաներ (նոցանից մէկն է պ. Մինաս Զերազ), առաջին աւարտողները սարկաւագ ձեռնադրուեցան նոյն Վարժապետեանի օրհնութեամբ։ Կարելի է ասել վերջինիս քնքոյշ խնամածութեան առարկաներից մէկն էր վարժարանը, որի մէջ ինքն և տեսուչ էր և կրօնագիտութեան ուսուցիչ, նա և հոգս տարաւ վարժարանի վիճակն ապահովելու, շէնքն ընդարձակեց, գնելով նորա համար նոր տուն և պարտէզ։ 1870-ին վարժարանի աւագ

աշակերտների խմբագրութեամբ վերսկսուեցաւ Կ. Պոլսում Շահնազարեանի «Երկրագունդ» թերթի հրատարակութիւնը, այս ձեռնարկութեանը նպաստեց այն, որ Կարապետ վարդապետի տպարանը Մանչէստերից փոխադրուեցաւ Կ. Պոլիս և գործի դրուեցաւ։

Դժբաղդաբար տասն տարի միայն գոյութիւն ունեցաւ Նուպար-Շահնազարեան վարժարանը։ Այն դրամագլուխը, որ վարժարանի ապահովութեան հիմքն էր, Ռումելիի երկաթուղու տոկոսաբեր թղթերով էր պահուում. 1875-ին արժէթղթերի գինն ընկաւ, տոկոսը պակսեցաւ, և ի վերջոյ բոլորովին կորաւ։ Այդ և պատճառ եղաւ վարժարանի ակամայ փակման։

Այս է Շահնազարեանց Կարապետ վարդապետի կեանքի և գործունէութեան հակիրճ նկարագիրը։ Շատ բան տակաւին կարօտ է լուսաբանութեան և շատն էլ մնում է մթութեան մէջ այն պատճառով, որ մինչև օրս ոչ ոք չհոգաց նորա կենսագրութեան ճշգրիտ աղբիւրներն հրատարակութեան տալ, նորա տպած և անտիպ երկերը ժողովել և միասին տպագրել ուսումնասիրութեան համար, և վերջապէս քննադատութիւնը նորա ծանօթ գործերի, մանաւանդ նորա փախուստին վերաբերեալ խնդիրների, տակաւին կատարուած չեն։ Ժամանակ է այդ ամենին ձեռնամուխ լինել, աչքի առաջ ունենալով, որ վաստակաւոր վարդապետն ԺԹ. դարու պատմութեան մէջ իրեն շուրջը բոլորած անձինքներով և անցքերով բաւական պատկառելի տեղ է գրաւում։

Թէպէտև նա ս. Էջմիածնի մերձաւոր շրջաններից փախաւ, բայց նա մնաց միշտ միաբան այդ մայր վանքի և այսօր նորա անուան յիշատակով փառաւորուում է միայն ս. Էջմիածնի միաբանութիւնը, որ իւր միջից տուեց այդքան հայրենասէր, գործունեայ և հաւատարիմ մի ժառանգ։ Երանի թէ հայածական բազմարդիւն վարդապետի կեանքն և օգտակար գործունէութիւնը միշտ խրատական

օրինակ մեան միաբանութեան երիտասարդ սերունդին՝ անխարդախ սիրել հասարակաց շահերն ու կարիքները, նշանաբան ընդունելով Կարապետ վարդապետի հետևեալ խօսքերը.

«Յօժար եմ իմ ազգիս մէջ անարդ ըլլալ և մուրացիկ, քան յօտար ազգս փառաւոր և հարուստ»։

Ա. Կոստանեանց

ԴԱՐԴ ՈՒ ՎԱՐԴ

Վարդ եմ փնտրում սարերի մէջ,
Դարդ եմ փնտրում քարերի մէջ.
Վարդի համար, դարդի համար
Մաղ եմ գալիս ես սարէ սար։
Սարը մռուշ, արտիս մէջ փուշ,
Վարդս անուշ, ա՜խ, ես անուշ,
Տուէք ինձ թեւ՝ թռչեմ վերեւ,
Կեանք ու արեւ գրկեմ հեւ-հեւ,
Դառնամ մի ցող սիրունաշող,
Վարդիս կրծքին, դարդիս կրծքին
Սիրով փարեմ, մուշ-մուշ մարեմ...

***

Ծի՛ն ու ծիծառ, սոխա՛կ, կռո՛ւնկ,
Ա՜խ, ձեր ձէնին ես մատաղ,
Սիրտս խոցուած, վէրքս խորունկ,
Ինձ մի՛ անէք խելքամաշ։

Դուք ի՞նչ գիտէք... դարդս մի լեռ՝
Ձեզ անծանօթ եւ օտար,
Էդ դարդի տակ խեղդուում է դեռ
Սիրտս մաշուած, ցաւագար։

Է՞ր էք լռում, ծի՛ն ու ծիծառ,
Միշտ հնչեցէք երգ ու տաղ,
Մինչեւ հանգչէ սիրտս իսպառ...
Սիրո՛ւն հաւքեր, ձեզ մատաղ։

Գար. Պետրոսեան

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԱՍԱՆԵԱՆՑ

Պրոֆ. Կրիմսկու

Նախընթաց յօդուածում մենք տեսանք, թէ ինչպէս Պարսից արքայից արքայ Վռամ V գուռ (420—438) Հայոց Աշշակունեաց վերջին շառաւիղ՝ մանուկ Արտաշիրին կանչելով Պարսից դուռն 429 թ. պահեց նորան այնտեղ, իսկ Հայաստանը նահանգ դարձրեց ու նորա կառավարութիւնը յանձնեց ուրոյն պարսիկ մարզպանին։ «Վռամ V-ին յաջորդեց Յազկերտ II-ը (438—457), որ ժանր պատերազմներ մղեց Հեփթաղների դէմ և Պերոզ (459—484), շարունակում է պ. Կրիմսկի. Պերոզ երկու տարի պիտի ներքին կռիւներ մղէր իւր եղբօր Որմիզդի (457—459) դէմ և հաստատուեց գահի վրայ Հեփթաղների օգնութեամբ. բայց յետոյ դրժելով իւր տուած խոստումները, գրգռեց Հեփթաղների դժգոհութիւնը, շատ ժանր պատերազմներ ունեցաւ նոցա հետ և 484 թ. սպանուեց ճակատամարտում. նորա դուստրը դերի ընկաւ Հեփթաղների թագաւորի ձեռքը և մտաւ թագաւորական կանանոց և Հեփթաղները ահեղ արշաւանքով անցան Իրանի արևելեան կողմերով աւերելով ամենայն ինչ։

Տէրութեան մէջ Յազկերտի և Պերոզի ժամանակ հալածանքների էին ենթարկւում օտարահաւատ ազգերը, մի կողմից Հրեայք, որոնք V դարում կրօնական կենդանի գործունէութիւն արտայայտեցին՝ մշակելով այսպէս ասած Բաբիլոնեան Տալմուդը, միւսից քրիստոնեայք։ Սակայն ոչ ամենայն քրիստոնեաների հետ հաւասար թշնամութեամբ էին վերաբերւում Պարսից հալածիչները. Հայերի դրութիւնը աւելի վատ էր, քան Ասորոց։ Յազկերտ II օրերում հալածանքը և դրադաշտական կրօնի բռնի

մուտքը Հայաստան, սարսափելի ապստամբութիւն (450—451) յառաջ բերեց, որ մեծ դժուարութեամբ ընկճուեց։ Պատճառն այն էր, որ տիրապետող դաւանութիւնը Հայաստանում միաբնակական (монофизитское) էր, որ դրացի Բիւզանդիոնում հասարակաց համակրութիւնն էր վայելում և հինգերորդ դարում քանի մի անգամ պաշտօնական ոյժ էր ստանում, այսպէս Հայաստանը բնականաբար ձգտում էր Բիւզանդիայի կողմը։ Ընդհակառակն, Արամեցիների գլխաւոր դաւանութիւնը նեստորական էր և բիւզանդական սահմաններում ենթարկւում էր չարաչար հալածանքների թէ ուղղափառների և թէ մոնոֆիզիտների և Ասորոց—նեստորականների բազմութիւնը, բիւզանդիոնի հպատակներ, հարկադրուած եղան V դարու կիսում և մանաւանդ երրորդ քառորդում, թողնել իրանց հայրենիքը և այս թւում նաև իրանց դիտնական յենարան—հռչակաւոր «պարսկական դպրոցը» Եդեսիայում (որ ընծայեց նեստորականներին բազմաթիւ գրականական գործիչներ և թարգմանիչներ յունարէնից*։ Նոքա հեռացան Մծբին, ուր նոյնպէս կար երևելի ասորական դիտնական դպրոց, Տիզբոն և Պարսկաստանի այլ տեղեր. տարագրուած նեստորականների թւում Եդեսիայից 'ի միջի այլոց էր (449) եռանդուն նեստորական քարոզիչ Բարսաւմա, որ յետոյ Մծբինի եպիսկոպոս դարձաւ (մոնոֆիզիտների մօտ նա յայտնի էր մականուամբ «վայրի եղն». շուտով նորան հետևեց նորա բարեկամ—դիտնական աստուածաբան և անուանի հոգևոր քերթող Նարսայ (Ներսեհ), թշնամիներից կոչուած «բորոտ». իսկ նեստորականներից—«քնար Հոգւոյն Սրբոյ». անցաւ Պարսկաստան և Ակակիոս (շուտով Սելևկիայի կաթողիկոս ընտրուած, 484—496 և թարգմանիչ ասորական լեզուից պեհլեւի) և ոչ սակաւ ուրիշ կրթեալ, երևելի նեստորականներ։ Պերոզ վճռեց շահագործել նեստորականների մեծ թշ-

*) Վերջ 'ի վերջոյ Զենոն կայսրը (488—489) չբաւականանալով շատ նեստորական գիտնականների յօժարակամ հեռանալովը, հրաման արձակեց քանդել Եդեսիայում «պարսկական դպրոցը», որին եռանդով նպաստեց մոնոֆիզիտական եպիսկոպոս Կիւրոսը (471—478)։

նամութիւնը դէպի մոնոֆիզիտները (և ուղղափառութիւն) այն նպատակով, որ թուլացնէ իւր հպատակ քրիստոնեաներին և. նպաստեց, որ Բէտ—Լապատի (Գոնդիշապուրում) 483 կամ 484 թ. ժողովում պաշտօնապէս ճանաչուի Նեստորի դաւանութիւնը, որ յունական եկեղեցին հալածում էր և ատելի էր Հայոց։ Հայաստանը, յայտնի բան է, շարունակում էր ծգտել դէպի Բիւզանդիոն և Պերոզի մահուան միջոցին, ապստամբութեան մէջն էր։

Պերոզի մեռնելովը Հայաստանը խաղաղացաւ. ներքին երկպառակութիւններից յետոյ թագաւորական գահ բազմելով Պերոզի եղբայր Վաղարշ (484—489) երաշխաւորեց Հայերին դրադաշտականութեան դադարումը նոցա երկրում. այսպէս նա վարուեց մասամբ Հայաստանը հանգստացնելու դիտաւորութեամբ, մասամբ էլ կամեցաւ դիմադրել զրադաշտական հոգևորականութեան, որի իշխանութիւնը իւր վերայ չէր ցանկանում տանել։ Բայց Վաղարշ չկշռադատեց իւր ոյժերը. թագաւորական գանձարանը դատարկ էր Հեփթաղների արշաւանքներից յետոյ, զօրք հաւաքելու համար փող չկար, աւագանին այդ պատճառովանտարբեր էր դէպի շահը։ Մոգերը, զայրացած Վաղարշի թշնամական վարմունքից, վերջապէս, կուրացրին նորան և դահ բարձրացաւ նորա եղբօր որդին, (Պերոզի որդի) Կաւատ I (489—531)»։

Վերը, ինչպէս տեսանք, պ. Կրիմսկի՝ խօսելով Յազկերտ II-ի հալածանքների մասին Հայաստանում, ակնարկում է Վարդանանց պատերազմների վերայ, որոնց գեղեցիկ նկարագրութիւնը թողել է մեզ Եղիշէի պատմութեան հեղինակը։ Այստեղ փոքր ինչ կանգ առնենք և պրոֆ. Ք. Պատկանեանի խօսքերով բնորոշենք Հայոց ժողովրդի կրօնական զգացմունքի արտայայտութիւնը և. միութեան գործօնները։

«Արդէն երկրորդ դարուց, ասում է հանգ. հայազգի դիտնականը, քրիստոնէութիւնը սկսեց արագութեամբ տարածուել Հայաստանում, իսկ երրորդ դարու վերջում Տրդատ (III դ. Մեծն) ազգովին մկրտուեց սուրբ Գրիգորից, Հայաստանի Լուսաւորչից։ Այդ իրողութեան հետևանքն այն եղաւ, որ Հայոց ժողովրդի համակրանքը անցաւ Բիւզանդիոնի կողմը, ուր քրիս-

տոնէութիւնը շուտով տիրապետող դիրք ստացաւ։ Այս հանդամանքը ուժգին հարուած տուեց Սասանեանց ծգտումներին, որոնց այժմ վիճակուում էր մաքառել Հայաստանում թէ (թագաւորական) հարստութեան և թէ քրիստոնէութեան դէմ, որ մօտեցնում էր Հայաստանի բնակիչներին Յունաց։ Սակայն դա չէր թուլացնում նոցա եռանդը և նոքա շարունակում էին կռիւը Հայերի դէմ բոլոր հնարաւոր միջոցներով։ Հինգերորդ դարուառաջին քառորդում (429) նոցա յաջողուեցաւ տապալելու իրանց համար ատելի հարստութիւնը. բայց երբ, քրիստոնէութիւնը չնչելու նպատակով, նոքա կամեցան Հայերին բռնի կրակապաշտ դարձնել, բորբոքուեց սարսափելի կրօնական պատերազմ, որից Հայերը թէև յաղթահարուած դուրս եկան, սակայն մի անգամ ընդ միշտ պաշտպանեցին արդէն իրանց կրօնը։ Եւ այսպէս ձեռք բերին նոցա պակասող կրօնական միութիւն, որին շուտով հետևեց ազգային նշանագրերի գիւտը և միանուագ ստեղծուեց եռխ և ծաղկեալ գրականութիւն։

Ասորոց լեզուն, որ մինչև ժամանակ գործ էր ածում եկեղեցում ժամասացութեան միջոցին, յայտնի բան է, անհասկանալի էր ժողովրդի մեծամասնութեան։ Ամենուրեք զգացուում էր մայրենի լեզուով գրքերի անհրաժեշտութիւնը։ Այն ժամանակ Հայոց վարդապետներից մէկն, սուրբ Մեսրոպ, լրացրեց և կատարեգործեց հին հայկական այբուբենը, հնարեց ընդհանուր գործածութեան մէջ մտցած արդեան Հայոց նշանագրերը և դորանով սկիզբն դրեց Հայոց դպրութեան։ Փոքր ինչ դորանից առաջ Մեծին Ներսիսի օրերում, Հայոց եկեղեցին ազատուեց յունական ազդեցութիւնից և սկսեց ընտրել իւր կաթողիկոսին, առանց Կեսարիայի հայրապետի ձեռնադրութեան։ Ներսիսի որդի, Սահակ (Պարթև) կաթողիկոսը, Գրիգոր Լուսաւորչի թոռան թոռը, առանձին եռանդով ձեռնամուխ եղաւ սուրբ գրքի և ժամասացութեան գրքերի հայերէն թարգմանութեանը։ Բայց տեսնելով, թէ այսպիսի լուրջ և դժուարին գործը պահանջում է մեծ գիտական ոյժեր, նա 60-ից աւելի երիտասարդներ ուղարկեց Եգիպտոսի և Յունաստանի յայտնի դպրոցները, ուր

քրիստոնէութիւնից շատ առաջ պանդխտում էին հայ պատանիները (ուսման ժարաւից տուչորուած)։ Ուղարկուածներից շատերը արդէն Յունաստանում զբաղուեցան սուրբ գրքի փոխադրութեամբ հայերէն, միւսերը վերադառնալուց յետոյ հայրենիք։ Դրականական լեզու ճանաչուեց իրօք այն ժամանակի դրան (ստանիկ) լեզուն։ Այն ինչ Արշակունեաց հարստութիւնը դադարեց և Հայաստանը ընկաւ մարզպանների իշխանութեան ներքոյ։

Այսպէս, հանդամանքների տարօրինակ բերմամբ, այն, ինչից Հայերը զուրկ էին անկախութեան երկար դարերի ընթացքում—ընդհանուր գործածութեան այբուբենը, դրականական լեզու, կրօնական միութիւն, այս բոլորը հանդէս եկան անկախութիւն կորցնելու վայրկեանին և ստեղծուեց ընդհանուր ազգային գրականութեան հնարաւորութիւն։ Հայաստանի աւատական կազմակերպութիւնը շարունակեց իւր գոյութիւնը թագաւորական իշխանութեան դադարումից յետոյ էլ։ Բայց այդ ժամանակ յառաջ եկաւ մի նոր ոյժ, որ հաւասարապէս ճանաչում էին ժողովրդի բոլոր դասակարգերը և նաև իշխանները։ Դա հոգևոր ոյժն էր կաթողիկոսների, որոնց ընտրում էր համայն ազգը և ընդունում առանց մի բռնադատութեան յօժարակամ։ Կաթողիկոսի կոչման մէջ ժողովուրդը տեսնում էր իւր միութեան մարմնացումը, իւր հոգևոր շահերի ներկայացուցչին և շատ անգամ հալածուածների պաշտպանին և խաղաղարարին։

Սուրբ գրքի թարգմանութեան հետ միաժամանակ ամբողջ երկրում հիմնուեցան դպրոց և վանքեր, ուր արևմտեան Եւրոպայի միջին դարերի վանքերի օրինակով, շուտով կենդրոնացաւ ուսման գործը։ Քրիստոնէութիւն ընդունելով Հայերը, այսպէս ասած, կտրեցին իւրեանց անցեալ, նախաքրիստոնէական գոյութեան շրջանի կապերը և նորադարձներին յատուկ (неофитъ) եռանդով անծնաւոր եղան նոր վարդապետութեան։ Բոլոր մնացած գրականական յիշատակարանները, բաղկացած վիպասանական երգերից ու մեհենական մատեաններից, ոչնչացրին, ապագայ սերունդը պահպանելու համար հինաւուրց հաւատա-

լիքներից *։ Ուստի հաղիւ թէ մի ուրիշ ժողովրդի գրականութիւնը ունի այն բացառիկ բնութիւնը, ինչ որ Հայոցն է։ Այդպիսի հանգամանքներում ծնած գրականութիւնը բնականաբար ներշնչուած պիտի լինէր խիստ քրիստոնէական ոգով և եղնաւորական ուղղութեամբ։ Այս պատճառով եկեղեցու ապրեցութեան միակողմանութիւնը ազգային կեանքի վրայ շոտ լիովին երևեցաւ։ Ուրախ ժամանակ անցկացնելն, աշխարհիկ բովանդակութեան երգեր, հեթանոսական շրջանի ժողովրդական տօնախմբութիւնները – բոլորը արտաքսուեցան կեանքից, իբր անվայել քրիստոնէի համար։ Խրախճանութիւնները փոխարինուեցան պահքով (աւելի քան 200 օր տարուայ մէջ, ծուկն ու կաթը արգելուած էր գործածել կերակուրի). իսկ եկեղեցական շարականները արտաքսեցին երգերը։ Անբարեպատեհ քաղաքական պարագաները, անընդհատ տառապանքները, որ բաժին էին հասնում ժողովրդին, հաստատեցին նորան այն մտքում թէ կեանքը տուած է ոչ վայելչութեան համար, այլ գժբաղդութիւններ ու նեղութիւններ կրելու յանուն Քրիստոսի, թէ վայելչութիւնը սպասում է մարդուն կեանքի սահմաններից դուրս։ Միանգամ արուած ուղղութիւնը միևնոյն հաւասար պայմաններում և հանգամանքներում պահպանուեց գրականութեան մէջ մինչև վերջին ժամանակները». (տե՛ս. Всеобщая исторія Литературы подъ ред. В. Ѳ. Корша. стр. 601—603. СПБ. 1880)»։

---

*) Դորան առիթ տուեց, անկասկած, Սասանեանց մոգերի գաղանային մոլեռանդութիւնը Հայաստանում. զրադաշտականին Հայերը դէմ դրին քրիստոնէական մոլեռանդութիւն. բայց վերջինս քրիստոնէական աշխարհում երկսայրի սուր է մինչև այժմ. օր. պապականութիւնը, յունադաւանութիւնը և այլն։ Մ. Շ.

ՄԻ ՕՐ [1]

XI

Ի հարկէ, ես բոլորովին հրէշ կամ, ինչպէս չարաբաստիկ նամակներիս մէջ կոչում էի, «ոճրագործ» չէի։ Իմ զգայուն, դիւրագրգիռ և մի քիչ զգացկոտ հոգին աչքի ընկնող լաւագոյն կողմեր էլ ունէր։ Սաստիկ զգացկոտ հոգիս բնաւորութեանս կանացիական բնոյթ էր տուել։ Ամենաչնչին երևոյթն յոյզ էր պատճառում ինձ։ Ծտի ծլվլոցը, վտակի կարկաչը, զեփիւռի շունչը, ծառի շշշիւնը, վերջալոյսն ու շառագոյն արշալոյսը, ծաղիկների անուշահոտ բուրմունքը, արտի մեղմիկ ծփումը, ամպերի խաղը, —այս բոլորը, բոլորը ինձ երանաւէտ խոհերի գիրկն էին ձգում։ Հոգիս առժամապէս մաքրւում էր։ Զգում էր իրան թեթև, կեանքի մանր-մունր հոգսերից ազատ։ Այդպիսի բոպէներին հետս խօսողը հիանալի տպաւորութիւն էր ստանում։ Խօսում էի իբրև մի իդէալիստ, իբրև գաղափարին նուիրուած մի անձն, որ գիտէ պահանջ եղած ժամանակ մինչև անգամ զոհել սեփական, անհատական երջանկութիւնը։

Ինչպէս յիշել եմ, լաւ խօսել գիտէի։ Թէև տրամաբանութիւնս մի քիչ կաղում էր, սակայն կարելի էր առանց ձանձրանալու և մինչև անգամ հաճոյքով լսել ինձ։ Առոգանութիւնս, ձայնիս զօրեղ և յարմարաւոր շեշտերը, բեմական շարժումներս խօսքիս առանձին գոյն և գրաւչութիւն էին տալիս։ Ես գիտէի գրաւել խօսակցիս կամ ունկնդրիս ուշքը։ Ասածներս ինքնուրոյն բաներ հազիւ դէպքում էին պարունակում իրանց մէջ։ Կարդացած գրքերս անսպառ աղբիւր էին ինձ համար զրոյցների, երեկոյթների, ճառերի համար։ Ճարպիկօրէն ես կարողանում էի իւրացնել ուրիշների մտքերը—երևոյթը իւր անունով կոչեմ—գողանալ և ծախում էի իբրև սեփականութիւն։

Գիտէի երբեմնապէս, բայց շատ հազուադէպ, արդար զայրոյթս արտայայտել։ Այդպէս գերագոյն բարկութեամբ և համարձակ կարողացայ սիրտս զեղել իմ դպրոցական ուսուցիչներից մէկի

Լումայ № 4.

առաջ, որին պատահմամբ հանդիպել էի իմ աւարտական վկայականս ստանալու նախընթաց օրը։ Դա մի տարիքոտ ուսուցիչ էր, լաւ խօսող, խօսքի վարպետ և հռետոր։ Դպրոցական շրջանում՝ ես նրանից բաւական ֆրազներ էի սովորել, որ առանձին խրոխտութեամբ գործ էի դնում դեռահաս օրիորդների շրջաններում։ Շատ-շատերն էին զմայլուել իմ խօսելուց։ Ոմանք ինձ հաճոյանալու համար ասում էին՝ «Աշոտը կարծես թէ բիթմերով է խօսում»։ Այդ ուսուցչի հետ քաղաքային զբօսարանի մի խուլ անկիւնում բաւական բան խօսեցի։ Վաղեմի ուսուցիչս ապշել մնացել էր։ Նա զարմանում էր, տեսնելով իւր «կավալեր աշակերտին» այդպէս փոխուած, դէպի «լաւը» ուղղուած։ Այն աշակերտը, որ առաջ խօսելիս՝ կանանց վերաբերեալ մի քանի անձնական դիտողութիւնների նկարագրութիւններից այն կողմը չէր անցնում և, լուրջ խնդիրների քննման ժամանակ լռում էր՝ խօսքը կատակի փոխելով, այժմ խօսում է «իբրև մի բարոյախօս, մանկավարժ» և անէծք էր թափում իւր դժբախտութեան հեղինակների վրայ։

—Այո, յարգելի ուսուցիչ,—շարունակեցի ասելիքս—դուք ինձ փչացրիք։ Իմ մատաղ հոգին, որ ձեզ էին յանձնել դաստիարակելու համար և որի վրայ պէտք է գործ դնէիք ձեր բոլոր ոյժերը՝ նրան հայրական տան արատներից փրկելու, ազատելու նպատակով, դուք անտես արիք ձեր կոչումը և վատ օրինակ հանդիսացաք ինձ։ Խօսքս մենակ ձեզ չի վերաբերում։ Ձեր ընկերները ձեռք ձեռքի տուած անդունդ գլորեցին իմ ներքին աշխարհի մանկական անմեղութիւնը։ Կեղտի, անբարոյականութեան և անզգամութեան սև գծերը լոկ ձեր շնորհիւ զարգացան իմ մէջ։ Դուք կարող էիք իմ ընտանեկան արատներս մեղմել իմ հոգում, բայց դուք այդպէս չարիք, զլացաք։

«Ի՞նչ էք ճամարտակում,—պատասխանեց ուսուցիչս նեղացած եղանակով,—սպասեցէք։ Ձեր խօսքերից պարզ երևում է, որ դուք ընտանիքի զոհ էք։ Ձեզ շրջապատողները ձեզ փչացրել են, ձեր բնաւորութեան լաւ կողմերը փշուր-փշուր խորտակել և կեղտոտել թէ ձեր հոգին, թէ միտքը և թէ սիրտը։ Այստեղ, կարծում եմ հարկ չկայ մեղադրել դպրոցը։ Մենք պարտական չէինք ձեր ընտանեկան արատները վերացնել։ Ընտանեկան արատները միայն ընտանիքում կարելի է մաքրել, ոչնչացնել։ Եւ եթէ ուզենայինք էլ, չէինք կարող ուշադրութիւն դարձնել ձեզ և ձեր արատներին։ Դուք շատ լաւ գիտէք, որ մինչև դպրոցից ձեր ելնելը դուք միշտ բազմամարդ դասարանների աշակերտներից էք եղել։ Ցիշում էք, երրորդ դասարանում եօթանասուն հոգի էիք։

Ասացէք, խնդրեմ, քանի՞ մէկիդ վրայ ուշադրութիւն դարձնէինք։ Եւ հնարաւո՞ր էր»։

—Լա՛ւ, դիցուք թէ դուք չ՚կարողացաք ինձ վրայ մասնաւորապէս ուշադրութիւն դարձնել, թէև, ի հարկէ, դասարանի մեծութիւնը չէ արդարացնում ուսուցչի անբարեխղճութիւնը, անտարբերութիւնը դէպի իւր սաները։ բայց ինչո՞վ բացատրել ձեր սարսափելի անհետևողականութիւնը, ձեր խօսքի և գործի հակասութիւնը։ Ձեր խօսքերն ազդեցիկ էին միայն դասարանում, երբ դուք ոգևորուած ճառում էիք գերագոյն իդէալների մասին, երբ ձեր ունկնդիրները հոգեզմայլ դրութեան մէջ լսում էին ձեր հնչեղ նախադասութիւնները, պատկերաւոր դարձուածները, և հաճութեամբ նկատում էին ձեր կատակախառն վեարերմունքը դէպի կեանքի պակասաւոր, անգոնելի կողմերը և ձեր հեգնութիւնն ու ծաղրը, երբեմն էլ հայհոյանքը դէպի ձեզ դուր չեկող գրողները։ Իսկ կեանքում, դպրոցի շէմքից դուրս, դուք ի՞նչ էիք ներկայացնում ձեր խայտառակ արարքների հետ միասին։

Այս խօսքերը լսելիս ուսուցչիս դէմքը խոժոռեց։ Բարեմիտ տրամադրուած երեսի վրայ երևաց բարկութեան նշոյլ, աչքերը փայլեցին ատելութեան և դայրոյթի կրակով, ճակատը կնճռոտուեց, և նա հրամայական շեշտ տալով ձայնին գրեթէ գոռաց.

«Խնդրեմ ձեզ թոյլ չ՚տաք իմ մասնաւոր, ընտանեկան կեանքի մէջ մտնել։ Ես կարող եմ կեանքի մէջ ամենագծուած մարդը լինել, իսկ դպրոցում լաւագոյն ուսուցիչներից մէկը։

—Հէնց ցաւն էլ այն է, որ դպրոցի մէջ դուք լաւագոյն ուսուցիչներից չէիք։ Եւ այդպիսի լաւագոյն ուսուցիչներից մէկի արձակման դրդիչներից մէկը հանդիսացաք։ Դուք մեզ խաբում էիք ձեր իդէալներով, փոշի էիք փչում մեր աչքերի մէջ։ Ամբողջ գիշերն անց էիք կացնում ակմբանոցի ապականուած օդի մէջ, թղթախաղի կանաչ սեղանի շուրջը կայտռելով և առաւօտեան ջարդուած, յոգնած և տաղտկալի հոգով մտնում էիք դասարան և Աստուած գիտէ, թէ ինչպէս էիք պարապում։ Դուք միշտ կրկնում էիք, որ դաստիարակութիւնը, կեանքի և գործունէութեան համար պատրաստող մի գլխաւոր գործօն է, միջոց է։ Իսկ թէ ի՞նչպէս էիք այդ գործօնը, այդ միջոցը գործադրում՝ դուք այդ շատ լաւ գիտէք, լաւ է չ՚խօսենք։ Զմոռանամ յիշել և մի հանգամանք. ձեր ընկերներից մէկը ինչ-ինչ հովերով տարուած՝ բարձր դասարաններում միշտ խորհուրդ էր տալիս կանանց ընկերութիւններ մրտնել, շփուել, առարկելով, որ այն կրթիչ, մաքրող և բարձրացնող ազդեցութիւն ունի։ Հետեւեցինք այդ խրատին ևս՝ և մտանք, բայց փչացանք, բարոյապէս այլանդակուեցինք։ Ինչո՞ւ, որովհետև յար-

գելի մանկավարժը մոռացել էր մի հանգամանք էլ յիշեցնել, որ կանացի ընկերութիւնը միայն և եթ այն ժամանակ կարող է ազդեցութիւն թողնել, երբ ինքն անհամեմատ աւելի ազնիւ է, բարձր և վսեմ։

—«Հիմա դուք իմ հարցին պատասխանեցէք. արդեօք իմ խրատների մէջ երբևիցէ ձեզ համար ինչասակար մի խօսք, մի բառ անգամ լսել էք։ Չէ՞ որ ես ձեր բարին էի ցանկանում և առիթը բաց չէի թողնում ձեզ քարոզելու։ Ուրիշ ուսուցիչների նման ես չէի բաւականանում լոկ դասերով։ Դասերից դուրս ձեզ շատ բան եմ տուել և զարմանում եմ, որ այսօր իմ առաջ կանգնած, դուք ինձ յանդիմանական խօսքեր էք ուղղում, փոխանակ ձեր չափը ճանաչելու։ Ձեր մտքում պահեցէք իմ քարոզները, խրատները և դուք հարկաւ կեանքի մէջ երջանիկ կ'լինիք,—ահա իմ խորհուրդը։

—Խրատ, քարոզ։ Ես չեմ հասկանում, թէ ի՞նչ բանի համար էին պէտք այդ խրատներն ու քարոզները։ Դուք փառաւորապէս հերքում էիք ձեր բոլոր դասարանի մէջ ասածները։ Ձեր ընթացքը, գործունէութեան եղանակը, հասարակութեան մէջ բռնած դիրքը մի ծաղր էր ձեր ճառերին, քարոզներին ու խրատներին։ Դուք գիտէ՞ք արդեօք, թէ ի՞նչպիսի եռանդով ու աշխոյժով են աշակերտները հետաքրքրւում ուսուցիչների կեանքով, այո՛, «մասնաւոր կեանքով»։ Դուք գիտէ՞ք արդեօք, թէ ի՞նչպիսի արագութեամբ, կայծակի թափով ուսուցչի յոռի արարքի լուրը տարածւում է աշակերտների մէջ, բերանէ բերան։ Շատ անգամ ամենաչնչին բանը գունաւորւում է և ի՞նչպիսի խորտակիչ ազդեցութիւն թողնում սաների հոգու վրայ։ Դուք պէտք է մեզ օրինակ տայիք, լուռ ու մունջ, մարմնացած հետևողականութիւն լինէիք։ Մեզ հարկաւոր չէին ձեր խրատները—նրանք նպաստաւոր ազդեցութիւն էլ չունեցան մեր հոգու կազմակերպութեան գործում։ Ձեր կենդանի օրինակն էր պակասում, և դուք հոգ չէիք տանում դրա համար։ Դուք պղծում էիք մեր միտքը։ Երևի փաստեր կ'պահանջէք։ Շատ լաւ։ Գիտէ՞ք, մենք եռանդով ընթերցանութեամբ էինք պարապում, գիշեր ու ցերեկ չէինք հարցնում, միշտ կարդում ու կարդում էինք։ Ցուցակներ էինք կազմում և աշխատում թուով շատ բան կարդալ, որ այնուհետև պարծենանք։ Խառնիխուռն ընթերցանութիւն, անառաջնորդ, անսիստեմ, վայրիվերոյ և ցիրուցան,—ահա պատկերը։ Այսպիսի ընթերցանութեան դէպքում, այսպիսի ողորմելի գործում, ի՞նչ դեր էիք խաղում։ Արդեօք երբ և է տեղեկանում էիք, թէ ի՞նչ ենք կարդում, ինչո՞վ ենք պարապում և դասերից դուրս ի՞նչ է մեզ հետաքրքրում։ Ո՛չ և ո՛չ։ Դուք, բնվիվաններդ,

ժամանակ չունէիք այդպիսի թեթև բաներով զբաղուելու։ Դուք, ի հարկէ, աշակերտական ազատութեան ջերմաջերմ պաշտպաններից լինելով՝ մեզ ազատութիւն էիք տուել, որ ինչ էլ ուզենանք և ինչ էլ որ մեր ձեռքն ընկնի՝ առանց ընտրութեան և ծրագրի կարդանք ու զարգանանք։ Յետոյ՝ դուք միշտ տեղի-անտեղի բացանչում էիք «ուսում, ուսում» և մեզ երբէք չէիք ուզում զգալ տալ, հասկացնել, որ միայն ուսումն բաւական չէ։ Այժմ հարիւրաւոր օրինակներ գիտեմ, որ գալիս են ապացուցանելու, թէ մշտական, յամառ, կանոնաւոր և արդասալի գործունէութեան համար ուսման հետ պէտք է միացած լինին և այլ յատկութիւններ։ Դուք շատ լաւ պէտք է իմանաք, որ կեանք ասուած բանը մի անողոք, ծանր և երկարատև կռիւ է։ Դրա համար հարկաւոր է, որ կռուի ելնողը զինուած լինի բազմակողմանի զէնքերով։ Եթէ չունես այդ զէնքերը—ոչինչ ես և անհրաժեշտօրէն ոտնակոխ ես լինելու, որովհետև կեանքը թողութիւն, ներում ասած բաները չ'գիտէ, անպատրաստին և յանցաւորին պատժում է, այնտեղ տարերային կոյր արդարութիւնն է իշխում, իսկ արդարութիւնը միշտ անողոք է և խիստ։ Այո, կեանքը միապէս անտարբեր է և դաժան դէպի բոլոր մարդիկ։ Նրան դուր են գալիս միայն ֆիզիքապէս և հոգեպէս առողջ, կարող և պատրաստ մարդիկը։ Հակառակ դէպքում կեանքն իւր խորայատակ բարդութեան մէջ ընկղմելով թոյլերին ոչնչացնում է, թէև յաճախ վերջիններս օժտուած են լինում ձիրքերով, լաւ ընդունակութիւններով։ Այս այսպէս է, չէ՞, թէ այժմ էլ պէտք է ուղղէք ասածներս ըստ սովորութեան, ինչպէս մի ժամանակ դաս պատմելիս։

Ուսուցիչս դժուար դրութեան մէջ էր ընկել։ Աշխատում էր մի կերպ խոյս տալ անախորժութիւն պատճառող խօսակցից։ Նախկին աշակերտը ուսուցչի հոգու հիւանդոտ կողմերին էր սրդմում իւր մատը։ Ուսուցիչս այդ գործողութեան չէր կարող երկար դիմանալ։ Ճիգ էր գործ դնում, խօսքը, խօսակցութեան նիւթը փոխել և ազատուել այդ խոշտանգիչ հարցաքննութիւնից։ Իմ տաքացած յանդիմանութիւններին վերջ տալու համար՝ դժկամակօրէն սկսեց խուսափողական պատասխան տալ, հակասել իրան։

«Վերջ դնենք այս անախորժ զրոյցին,—խօսեց ուսուցիչս,—ես շտապում եմ։ Մի այլ անգամ սառնօրէն և աւելի մանրամասնաբար կ'խօսենք և մեզ համար շատ բան կ'պարզուի։ Այսպիսի թռուցիկ բուլվարային փիլիսոփայութիւններով մի շատ խոշոր ու ծանրակշիռ խնդիր չենք կարող լուծել։ Ձեր վերաբերմամբ այսքանը կասեմ, որ դուք վնաս էք կրել ընտանեկան դաստիարակութիւնից, եթէ միայն այն դաստիարակութիւն կարելի է անուա-

նել և ոչ թէ դպրոցից, որ իւր սաների լաւն է ցանկացել և ցանկանում է։ Եւ վերջապէս դպրոցի նպատակը միայն իւր սաներին մտաւոր պաշար հայթայթելն է և ուրիշ ոչինչ։ Երբ սանը դուրս է գալիս դպրոցից թոյլ, չնչին զարգացմամբ՝ միշտ կարելի է պախարակել ուսուցիչներին, իսկ բարոյական դաստիարակութեան հարցը, գոնէ իմ կարծիքով, դպրոցի գործունէութեան սահմանի մէջ չի մտնում։ Նոքա կրթական հաստատութիւններ են և ոչ բարոյական հիւանդանոց՝ հոգեկան հիւանդներին բժշկելու համար։ Այս բաները պէտք է լաւ հասկանալ։ Դուցէ դուք ասէք, հապա էլ ինչի՞ է պէտք դպրոցը, եթէ ընտանեկան դաստիարակութեան արատները չ՚պէտք է աշխատի արմատախիլ անել։ Դրա դէմ ոչինչ ասելիք չունիմ։ Մտածեցէք նորագոյն դպրոցի ծրագիր և հրատարակեցէք ի գիտութիւն հասարակութեան։

Վերջին խօսքերին հեգնանքի բնաւորութիւն տալով հեռացաւ։

Մնացի մենակ, տխուր մտախոհութիւններով պաշարուած։ Հոգիս ճնշում և ծանրութիւն էր զգում։ Դժուարանում էի շնչել։ Ես դժգոհ էի ինձանից։ Զգում էի, որ ուսուցչիս շատ բան չ՚կարողացայ ասել։ Դժգոհութիւնս, բուռն ատելութիւնս և դայլրոյթս զօրեղ շեշտերով չարտայայտեցի։ Շատ բան մտաբերեցի, որ առաջուց վճռել էի ասել իմ ուսուցիչներից որին էլ հանդիպէի։ Առիթը ներկայացաւ և ես գրեթէ ոչինչ չասացի այդ բոլորից։

Այս տխուր ժամին դպրոցական կեանքս վերստին պատկերացաւ իմ յիշողութեան մէջ։ Շատ քիչ լուսապայծառ նշոյլներ ունի այդ պատկերը։ Այդ լուսապայծառ նշոյլներից մէկը յիշեցի։ Իմ միակ իսկական ուսուցիչն է նա, որին շատ չ՚պահեցին դըպրոցում և արձակեցին «հակադպրոցական ընթացքի համար»։ Յիշեցի նաև այն խելացի հրաժեշտի խօսքը, որ նա կարճ ու կտրուկ արտայայտեց մեկնելիս. «Տղայք, ասաց ուսուցիչս, կենդանի, կըրակոտ յոյզերի և յախուռն ցանկութիւնների աշխարհը բոցավառ, շիկացրած երկաթով խստանում է «կորա՛ւ» բառը երկու կարգի մարդկանց ճակատին. նրանց, որ վախկոտ նապաստակի պէս խուսափում են կռուից, քաշւում, մեկուսանում և կեանքի բուռն պայքարը դաղտնագողի դիտում, և նրանց, որ իրանց թոյլ, կամազուրկ բնաւորութեամբ ոտնակոխ են լինում, ճղմւում, տափականում։ Աշխատեցէք այդ երկու կարգի մարդկանց չըյարել, նրանց թուին չըպատկանել։ «Կորա՛ւ» օրհասական բառը թող ձեր ճակատներին չըխարանուի, չըդրոշմուի կեանքի կողմից։ Եղէք կուռ, մարտնչող և յաղթանակի համար ապրող մարդիկ»։

Մտքովս անցրի և ուսանողական կեանքս, որքան տխուր, մռայլ ու հիւանդ պատկերներ։ Յիշեցի նաև ամենաթարմ մի դէպք,

որ մօտաւորապէս մի ամիս առաջ տեղի ունեցաւ։ Մի խումբ կայտառ մանուկներ, պայուսակները կապած մէջքներին, գնում էին դպրոց իմ ուսանողական առանձնասենեակի առաջով։ Նրանց զուարթ, թնդող քրքիջն ու ծիծաղը զարթեցրին տխուր մտածութիւններ, մռայլ յիշողութիւններ իմ աշակերտական կեանքից, մանկական և պատանեկան օրերից։ Արտասուքի երկու խոշոր կայլակներ դուրս հոսեցին իմ աչքերից, կուրծքս բարձրացաւ և երկար հառաչանք տարածուեց սենեակիս մէկ ծայրից մինչև միւսը։ Ես ակամայ խղճում էի այդ մատաղ դառնուկներին, կանխամտածելով այն յուսախաբութիւնը և դառնակսկիծ լքումը, որ սպասում է նրանց ամենքին կամ շատ-շատերին ապագայի մթութեան մէջ։

Խաւարն արդէն իջել էր, երբ ճանապարհուեցի դէպի բնակարանս՝ մի քանի ժամուայ յոյզերից յետոյ հոգուս մէջ կրելով սարսափ և սոսկում ազդող մռայլութիւն, անյուսութիւն։

XII

Գալով բնակարանս, երեսնիվար պարկեցի մահճակալիս վրայ։ Խոհերը հանգիստ չէին տալիս ինձ։ Զղջման զգացումը սկսեց կրծել սիրտս։ Անարգեցի վարմունքս, անխոհեմ քայլս։ Ինչու՞ հոգիս մերկացրի նրա առաջ։ Նա կըվերադառնայ հայրենիք։ Ծանօթ-անծանօթ շրջաններում խօսք կըբացուի իմ մասին։ Տեղեկութիւն կուզեն ինձանից։ Եւ, Տէր Աստուած, ինչ խայտառակութիւն։ Իսկ եթէ այդ բոլորը Լուսիկի ականջն էլ հասնի։ Այն ժամանակ, ամեն ինչ կորաւ, անուանս կըխայտառակուի։

Ես զայրանում էի իմ փոքրոգութեան վրայ։ Կատաղում էի, որ չէի կարողանում հոգեկան յոյզերս զեկավարել։ Ես ուզում էի համոզել ինձ, որ ուսուցչի հետ ճշմարտօրէն խոստովանելով իմ պակասաւոր կողմերը՝ ես ինքնաճանաչ աղնութեամբ եմ վարուել, ուրեմն այդտեղ պախարակելի ոչինչ չկայ։ Միտքս էր այդպէս դատում, այն ինչ ալետանջ սիրտս փոթորկում էր, տարուբերուում հակասական զգացումների և յուզումների ազդեցութեան տակ։ Չէի կարողանում հոգիս անդորրացնել, մի ելք գտնել։ Զղջում էի, սաստիկ զղջում՝ իմ նոր արարքիս վրայ։ Հայհոյում էի ինձ անմիտ կերպով խօսակցութեան ժամանակ չափը կորցնելուս համար։ Ուսուցչի հետ առաջուց արամադրուել էի խօսել ընդհանրապէս դպրոցական դաստիարակութեան և վարժապետների պարտականութեան մասին։ Սակայն ծրագրիս գրեթէ չըմօտեցայ։ Մոռացայ ամեն ինչ և անձնականութիւնս մէջ տեղ դրեցի իբրև օրինակ, խօսքիս կշիռ և նշանակութիւն տալու նպատակով։

Սենեակիս դուռը բացուեց։ Վեր թռայ և նստեցի մահճակալիս վրայ։ Մտնողը իմ երիտասարդ աղախինս էր։ Մի շիկահեր, տեսաք, լայն ճակատով, մի քիչ խոր ընկած թախծալի աչքերով, որոնց շուրջը հազիւ նկատելի կապոյտ շրջան էր գծուել, բարակ, նրբակազմ և գեղեցիկ իրանով աղջիկ էր։ Անունը Վարեա էր։ Տեսնելով ինձ յուզուած՝ վազելով մօտեցաւ, փաթաթուեց վզովս և հարցրեց.—«ինչո՞ւ է տխուր պարոնը»։

«Վարեա, ուզում եմ ինքնասպանութիւն գործել։ Մահը, սպանութիւնը փրկարար բան է, այդ ես գիտակցում եմ, մանաւանդ այնպիսի մի դէպքում, երբ կեանքդ, ապրելդ մի դանդաղասահ կործանում է, արիւնաքամութիւն։ Եթէ մէկին սպանման ժամանակ երկու միջոց առաջարկէին և հարցնէին՝ ուզում է սղոցով մորթուել, թէ գնդակահար լինել, ի՞նչ ես կարծում, ո՞ր մէկը կը գերադասէր։ Ի հարկէ, գնդակահարութիւնը, չէ՞։ Բայց թողնենք այդ։ Վարեա, աշխարհից և ինձանից զզուել եմ։ Կեանքս տաժանակիր աշխատանքից ծանր է թւում ինձ, խեղդող, վատ։ Ոչ մի օր, ոչ մի ժամ և ոչ մի րոպէ հանգիստ չունեմ։ Բայց երբէք, երբէք այսպէս դառնաղէտ կերպով չեմ տանջուել, ինչպէս այսօր եմ տանջւում մի շարք հարցերի դիմաց։ Գուցէ դու կըհետաքրքրուես իմանալ, թէ ի՞նչ հարցեր են դրանք, որ ինձ խեղդում են։ Ահա—ի՞նչ եմ ես, ի՞նչ բանի կամ ի՞նչ գործի համար եմ պէտք և վաղը ուր պիտի գնամ, ի՞նչ նպատակ է սպասում ինձ։ Ես ուզում եմ, և միշտ էլ ուզել եմ, խորտակել իմ խաբէութեան և կեղծութեան վրայ հաստատուած կեանքը, որի հիմքը խախուտ է, որովհետև զուրկ է մաքրութիւնից և ճշմարտութիւնից։ Այդ կեանքն ինձ համար ծանրակիր շղթայ է, տանջանքների հաստօղակ մի երկար շղթայ, որի տակ տնքում եմ, տանջւում, չըկարողանալով ազատուել նրա ծանրութիւնից։ Էլ ինչո՞ւ ապրել, երբ իւրաքանչիւր ժամ հետը բերում է ինձ համար նոր տխրութիւն, նոր վիշտ և տառապանք։ Ատում եմ բոլորին և ամենից շատ ինձ։ Ամեն օր, ամեն մի դէպք, ամեն մի արարք, ամեն մի չնչին բան քայքայուած հոգուս հարուած է տալիս և ամբողջ գիշերներս անքուն եմ մնում։ Աւելի լաւ է չապրել, չէ՞։ Այսպիսի կեանքը—կեանք չէ, այլ տանջանքների մի երկարաձիգ շարան։ Ի՞նչ խորհուրդ ես տալիս, Վարեա։ Ես կըպատուեմ, մինչև որ այսօր՝ իմ կեանքի այս մի հատիկ մաքուր, անկեղծ օրը, սիրաս չը դեղեմ քո առաջ։ Մի օր միայն ես ուզում եմ լաւ ապրել։ Այսօր ուզում եմ բոլորովին քաղաքուրկ լինել և ամենքին ցոյց տալ իմ մերկութիւնը, ով կուզէ թող նայէ։ Ես միշտ կեղծել եմ, բայց հերիք է։ Դու կրթութիւն ունիս, հասկացող աղջիկ ես, Վարեա, ինձ կըմբռնես, չէ՞։

—Դուք այսօր գրգռուած էք խօսում,—բազուկներն ինձանից հեռացնելով ասաց տխուր հանգամանքների շնորհիւ աղախնի վիճակի մէջ նետուած Վարեան,—ինչ խելք է դա. ինքնասպանութիւն գործել երիտասարդ, ծաղիկ հասակում, երբ մարդու առաջ գործունէութեան ճանապարհը բաց է։ Դուք վաղը պէտք է ձեր աւարտման վկայականը ստանաք, այնուհետև ազատ էք։ Չէ՞ որ դուք միշտ ինձ հետ խօսում էիք ձեր հայրենիքի մասին, ասում էիք, որ նրա համար էք պատրաստւում, ձեր բոլոր ոյժերը կատարելագործում էիք նրան զոհ բերելու, որ դուք նուիրուած էք վեհ իդէալների, ունիք ձգտումներ։ Այդպէս էիք ասում, չէ՞։ Իսկ այսօր՝ ինչ եմ լսում ձեզանից։ Ինքասպանութիւն, յոռետեսութիւն, զզուանք դէպի մարդիկ։ Չէ, իմ պարոն, չըպէտք է դեռ կեանքի շէմքին այդպէս յուսահատուել։ Արիացէք։

«Ա՜խ, դու ինձ լաւ չես կարողանում հասկանալ։ Չես ուզում իմ հոգու մէջ թափանցել։ Ես գործունէութիւնից չեմ փախչում, այլ գործունէութիւնն է ինձանից փախչում։ Ես ոյժ չունիմ նրա ետևից վազելու։ Ես յոգնած եմ, հիւանդ, Նոյնիսկ ես ինքս խըղճում եմ ինձ։ Հայրենիքի ինչ՞ն է պէտք իմ փչացած հոգին, իմ քայքայուած ջղերը, իմ թոյլ սիրտը։ Ինչո՞վ կարող եմ նրան օգուտ տալ։ Սիրտս պատռւում է վշտից, այլևս ես չեմ կարող քեզանից ոչինչ, ոչինչ ծածկել։ Ես մի խեղճ, դժբախտ, յանիրաւի խորտակուած էակ եմ։ Վաղահաս, կեանքից զզուած հոգի, երիտասարդ հասակում անժամանակ ծերացած։ Ես ֆիզիքապէս ապականուած եմ. և այս վերջին խօսքերը դու ամենից լաւ կըհասկանաս։ Այո՛ զգում եմ, որ երկար չեմ կարող մաքառել իմ յոռի հակումների դէմ։ Գործի մարդուց անպայման պահանջւում է հաստատակամութիւն, անսայթաք հետևողականութիւն, մաքուր զգացումներ, անապակ հոգի։ Ո՛չ մէկը և ոչ միւսը այս առաքինութիւններից ես չունիմ։ Կեանքի շէմքին ես արդէն հասած պտղի եմ նման, որ հովի մի չնչին, աննկատելի շնչից պէտք է գետնին ընկնի, ոչնչանայ, Վարեա՛, Վարեա՛, ո՞վ կարող է ինձ փրկել։ Ուշ է, չէ՞։ Ես ասես թէ մի արմատախիլ արուած ծառի եմ նման, որին հողի հետ միացնում է մի փոքրիկ, բարակ և նուրբ արմատիկ, կտըրուեց այդ արմատիկը և ծառն անխուսափելիօրէն պիտի ընկնէ. յոյսս էր մնացել, իմ կատարելագործուելու, փրկուելու յոյսը, կըտրուեց, անյայտացաւ այդ յոյսը, այլևս ինչպէս կարող եմ ապրել այդպիսի դառնալիր յուսավրիպումից յետոյ։

Խեղճ աղջիկը չգիտէր, թէ ինչ պատասխանէր։ Այս տարօրինակ խոստովանութիւնը նրան յանկարծակի բերաւ։ Դէմքին ցաւակցութեան կերպարանք տալով՝ սկսեց ուշիուշով դիտել «պա-

ռոնի» թախծոտ աչքերը, որոնց մէջ պէտք է որ վառուած լինէր մինչ այդ նրան անյայտ մի կրակ։

«Այնտեղ, ծնողներիս մօտ, շարունակեցի ասելիքս,—հայրենիքում մի ուրիշ կեանք է տիրում։ Այդ կեանքը քեզ անծանօթ է։ Կրթութեան, դաստիարակութեան մասին այնտեղ տարօրինակ և սպշեցուցիչ հասկացողութիւններ են տիրում։ Երեխաների վրայ նայում են մատների արանքով։ Նրանք չեն հասկանում, որ սպագայ հասարակութեան սաղմերի հետ գործ ունեն, որոնցից գլխաւորապէս կախուած պիտի լինի գալոց հասարակութեան որակը, հոգեկան կազմի յատկութիւնը։ Այս բոլորի մասին դու կարող ես մօտաւոր գաղափար կազմել, միայն աղօտ հասկացողութիւն ունենալ, դու անչափ անճանաչ ես իմ հայրենի կեանքին։ Երևակայիր մի ընտանիք, որտեղ բռնութիւն է իշխում, որտեղ մարդու և կնոջ յարաբերութիւնը կեղծիքի, ատելութեան և մարմնական, զգայական կրքի վրայ է հիմնուած։ Դու միշտ զարմանում ես իմ բուռն կրքոտութեան վրայ, այնպէս չէ՞։ Հա, սէր չկայ այդ ընտանիքում։ Ամուսնացել են ոչ թէ սիրով, ոչ թէ սիրոյ կապերով միմեանց հետ միանալու համար, ոչ, այլ փողի, նիւթական շահերի և գծուծ հաշիւների նկատումներով առաջնորդուելով։ Մէկը դժբախտութիւն ունի այսպիսի մի ընտանիքում ծնուելու։ Ի՞նչ ասել կուզէ, որ նա նախատրամադրուած է յոռի հակումներով։ Առհասարակ այդպիսի անսէր ամուսնութիւնից առողջ մարդիկ հազիւ դէպքերում են ծնուում։ Վատ հակումների, ստոր տրամադրութիւնների առաջը կարելի է առնել։ Եթէ ոչ բոլորովին բժշկել, բայց կարելի է մեղմել, ամոքել և շտկել այդպիսի թշուառ անհատի հոգեկան կազմը և մարմինը։ Իսկ հակառակ դէպքում անդունդը բաց է, որի մէջ պիտի գլորուի դժբախտը, շատ անգամ դեռ կեանքի մասին կարգին գաղափար չստացած, անգիտակ կեանքի չար ու բարուն, իւր շրջապատողների կեանքին և նրանց տանջող, տոչորող հարցերին։

—Այդ բաների մասին մինչև հիմա ինչո՞ւ լռում էիք և ինձ ոչինչ չէիք ասում,—խօսեց Վարեան։ Դուք երբեմնապէս ինձ հետ խօսում էիք ձեր հայրենիքի հայրենաշունչ սգի, համայնական, ընդհանուր վշտի մասին, իսկ այնտեղ տիրող ընտանեկան կեանքի մասին ձայն չէիք բարձրացնում։ Երբ մենք իրար ճանաչեցինք, դուք իսկոյն ինձ հարկադրեցիք պատմել իմ ամբողջ կեանքը, իմ վիճակը, թէ ինչպէս միջնակարգ դպրոց աւարտելուց յետոյ այսպիսի մի աննախանձելի ուղի բռնեցի և, վերջապէս, ծնողներիս մասին։ Իսկ երբ հերթը հասաւ ձեզ, երբ ես էլ ուզում էի նոր պարոնիս ճանաչել, դուք չոր ու ցամաք, որքան յիշում

եմ այսպէս պատասխանեցիք. «Իմ կեանքը պրոզայիկ բան է, ձեզ նկարագրելու համար այն՝ մի ամբողջ մենախօսութիւն պէտք է անել. երկախօսութիւններ գրեթէ չկան նրա մէջ։ Դուք սարսափելի կերպով կ՚ձանձրանաք այդպիսի մի երկայնաձիգ մենախօսութիւն լսելով։ Մի շարք գանգատներ—ահա իմ կեանքը»։ Ձեր այս խօսքերից այն ժամանակ՝ ես գրեթէ ոչինչ չհասկացայ, իսկ այժմ սկսում է աչքերիցս վարագոյրն ընկնել և ես ձեզ հասկանում եմ։ Ձեր խօսքերի իմաստը պարզ է այժմ ինձ համար։ Եթէ առաջ ասէիք...

«Առաջ լռում էի իմ կեանքի մասին, որովհետև ընդունակ էի կեղծելու, և ճարպիկօրէն ամեն ինչ քողարկելով հրեշտակ էի ձևանում։ Այժմ, այս վերջին մի օրը, այնպիսի մի տրամադրութեան մէջ եմ, որ այլ ևս չպիտի կեղծեմ։ Մի քանի ժամ առաջ իմ նախկին ուսուցիչներից մէկի հետ տեսակցութիւն ունեցայ և նրան շատ բան ասացի անկեղծօրէն։ Ուզում եմ քեզ էլ ասել, թէ ով եմ ես։ Ես բոպէով ապրող մարդ եմ։ Բոպէն աղնութիւն է ներշնչում և այժմ, ինչպէս տեսնում ես, եսականութեան դրդիչներն անտեսելով, պէտք է հոգեպէս մերկանամ քո առաջ, առանց որևէ ամօթահարութեան։ Ճիշտը խոստովանելով՝ իմ կեանքի մէջ պատմելու մի առանձին բան չկայ։ Եթէ ուզենամ իմ կեանքի պատմութիւնը գրել, վերջինս պիտի ամբողջապէս ներկայացնէ դատողութիւնների և տրտունջների մի երկար շարք։ Իմ կեանքի մէջ լուրջ գործողութիւններ, գրի առնելու դէպքեր գրեթէ չկան։ Իմ դպրոցական և ուսանողական տարիների ընթացքում այս օրը միայն, երբ կանգնած եմ կեանքի շէմքին,—որովհետև վկայականս վաղը պէտք է ստանամ և պաշտօնապէս կեանքը մտնեմ,—նշանակալից օր է ինձ համար։ Այսօր միայն կարողացայ լիովին փայլել աղնութեամբ և ճշմարտասիրութեամբ, թէպէտև զղջում եմ և պիտի զղջամ այսօրուայ արարքներիս համար։ Ես այս մի օրում աւելի շատ եմ ապրել, քան իմ ամբողջ կեանքում։

—Պատմեցէք, ինձ հետաքրքրում է ձեր կեանքի մենախօսութիւնը, ձեր մի շարք գանգատները,—խնդրեց Վարեան լրջօրէն։

«Ես ծնուեցի մի պակասաւոր յատկութիւններով օժտուած և աննախանձելի պայմանների մէջ գտնուող ընտանիքի մէջ։ Ժառանգաբար ստացել էի վատ հակումներ։ Մեր ընտանիքում հէնց սկզբից սկսեցին զարգանալ և աճել վերջիններս։ Հայրս գլխաւորապէս զարկ տուեց նրանց։ Հոգեպէս և ֆիզիքապէս սկսեցի փըչանալ։ Մեր տունը գտնուում էր քաղաքի յետ ընկած արուարձաններից մէկում շրջապատուած հասարակութեան ստոր կարգի

պատկանող ընտանիքներով։ Մեզանում, իմ հայրենիքի մէջ, այդ ընտանիքների կեանքը իւր մէջ մխիթարական գրեթէ ոչինչ չունի։ Ապրում են տգէտ, կեղտի, մրի մէջ։ Բոյսի պէս աճում են և բոյսի պէս ոչնչանում։ Այդ ընտանիքները ընաւորութեանս կազմակերպութեան համար կորստաբեր նշանակութիւն ունեցան։ Տգէտ լինելով իրանց զաւակներն էլ տգէտ էին։ Այդ զաւակներն իմ ընկերներն էին։ Անկիրթ, կոպիտ ու հայհոյախօս տղաներ։ Այո դրանք իմ խաղ-ընկերներս էին։ Դու պէտք է հականաս, որ մեզանում եւրոպական իմաստով ժողովրդական կրթութեան հասկացողութիւնը գոյութիւն չունի։ Մեր հասարակութեան մէջ քիչ թէ շատ ունևորներին է յաջողւում իրանց որդիներին ուսման տալ. իսկ ժողովրդի մեծագոյն մասը—ամբոխը մնում է տգէտ, խաւար և յառաջադիմութեան պտուղներից ու լոյսից զուրկ։ Եւ այդպիսի ընտանիքներից ծնուած երեխաներն էին, ինչպէս քիչ առաջ ասացի, իմ ամենամօտիկ ընկերները մանկութեանս և պատանեկութեան ժամանակ։ Մենք փոխադարձաբար միմեանց փչացրինք. ես իմ անհուն կրքոտութեամբ, նրանք տգիտութեան յատուկ թերութիւններով։

Անցայ դպրոց։ Դպրոցում պակասութիւններս աւելի հիմնաւորուեցին և հաստատուն կերպարանք ստացան։ Ուսուցիչներից մի քանիսի վատ ընթացքը ինձ վրայ շատ էր ազդում, բացարձակապէս անբարոյականութեան տեսարանների եմ հանդիսատես եղել, որտեղ դերակատարները դժբախտաբար բարոյախօս վարժապետներից էին... Այդպիսի պատահարների պատմելը հեռու կը տանէր ինձ, ասենք պատմել էլ չի կարելի, որովհետև գարշ ու անզգամ գործեր են և ուրիշ ոչինչ։ Այդ բոլորը վրաս խորապէս ներգործեցին և ընաւորութեանս կազմակերպման համար խորտակիչ ազդեցութիւն ունեցան։ Ի միջի այլոց ասեմ, որ ես անչափ ազդուել եմ միջավայրից, այն հասարակութեան ազդեցութեան ոյժից, որի մէջ ծնուել և ապրել եմ, գլխաւորապէս այն պատճառով, որ ես սկզբից ևեթ մի խոշորութիւն չեմ ներկայացրել։ Միջավայրը լոկ հզօրեղ ազդեցութիւն է թողնում ինձ նման թոյլ անհատների վրայ. տափակ և միջակ մարդկանց կեանքում նա ոյժ է, ճակատագիր և տնօրինում է նրանց բախտը և երջանկութիւնը։ Այդ միջավայրի առաջնակարգ գործոններից մէկը—դպրոցը կարող էր ինձ, իհարկէ, ճանապարհի բերել և շտկել իմ ընաւորութեան անհարթութիւնները, բայց նա այդպէս չվարուեց և ես դժբախտացայ։ Դպրոցը մինչևանգամ ղեկավարում էր և քաջալերում մեր անվայել ընթացքը։ Չորրորդ, հինգերորդ և վեցերորդ դասա-

բաններում մենք ընկերական խնջոյքներ էինք սարքում։ Դրանք օրգիաներ էին։ Ուսուցիչներից շատերն երբեմնապէս մասնակցում էին։ Հարբելուց յետոյ ընկնում էինք քաղաքի փողոցները և մինչև լոյս-առաւօտ թրև գալիս։ Այնուհետև երկու-երեք օր շարունակ չէինք կարողանում կանոնաւոր կերպով դասերին յաճախել։ Երեկոյթներ էինք սարքում քաղաքի այս կամ այն այգում, ուր ամենատեսակ խայտառակութիւններ էինք անում. ամեն մէկս իւր «հոգու հատորին» վերցնում էր և քաշւում այգու մութ ու կասկածելի խորքերը...

Մի խոսքով իմ ստացած դպրոցական կրթութիւնը ոչ մի հաստատուն գաղափար կամ սկզբունք չըմտցրեց իմ գիտակցութեան մէջ։ Դատարկ մտել էի և դատարկ էլ դուրս եկայ այնտեղից։ Եթէ իրապէս ինձ տուել են դաստիարակութիւն և կայուն սկզբունքներ՝ դա կարելի է «վիպային դաստիարակութիւն» և «շուկայական սկզբունքներ» անունով մկրտել։

Զզուեցի դպրոցական արգահատելի կեանքից և ընտանեկան զարհուրելի դիպուածներից և գրեթէ փախայ ու եկայ այստեղ։ Ըսկզբում մեծ ուշադրութիւն դարձրի ինձ ուղղութեան բերելու մասին։ Անտանելի դրութեան մէջ էի, ինչպէս դուրս գալ հին վիճակի պայմաններով մէջս ամրացած յատկութիւններից։ Ես սկսեցի մխիթարուել. աղուէսի նման ինձ տրամադրեցի խաղողի խակութեան նկատմամբ և ատել ուսայ այն բոլորը, ինչ որ կարելի էր ձեռք բերել։ Սկսեցի անձնատուր լինել միայնութեան, որի մէջ գտնում էի բաւականութիւն և վայելչութիւն։ Ես իմ սենեակի միապետն էի. այնտեղ ինձ զգում էի անսահման կարող, ուժեղ և հզօրակամ. բայց հէնց որ ընկնում էի բնաւորութեան տէր մարդկանց որևէ շրջան՝ արդէն իմ ոչնչութիւնս բացայայտ էր ինձ համար։ Թողեցի ծխելս, դադարեցի խմելուց և կանանցից երես թեքեցի։ Միայն մի քանի ամիս։ Այնուհետև վերսկսեցի իմ նախկին կեանքն իւր վիպական արկածներով։ Քեզնից առաջ, խոստովանում եմ, կապեր ունեցայ մի քանի կանանց հետ։ Ահա մի օր մնաց ուսանողական շրջանիս աւարտման համար և դու վերջին կինը կ'լինիս, որին ես այստեղ մօտիկուց ճանաչեցի։ Կերթամ հայրենիք և կապրեմ իմ նախատիպար կեանքով. էլի հօրեղբօրս սիրուն կինը, որին ենթարկուած էի իբրև աշակերտ, ինձ կառնէ իւր տրամադրութեան տակ։ Կամքի ոյժ չունեմ նոր ընթացք ստեղծելու համար։ Ես ղեկավարւում եմ իմ վսեմաշուք կրքերի օլիգարխիայով. փչացրի մարմինս՝ փչացաւ և հոգիս։ Խորապէս համոզուած եմ, որ կեանքում չ'պիտի կարողանամ ինքնուրոյն

լինել և ինքնօրէն գործել։ Ապիկար պիտի լինեմ համբոյնմներիս համաձայն կեանք վարելու, անընդունակ՝ պարտքիս գծած շաւղով ազատօրէն ընթանալու։ Հէնց ենթադրենք, Վարեա, կարող եմ կեանք դուրս գալ և գործել, ի՞նչ պէտք է լինի այդպիսի մի գործունէութեան հետևանքը։ Շատ պարզ և հասկանալի. ի՞նչ եմ եղել իբրև ուսանող, որ ինչ լինեմ իբրև կեանքի մարդ, գործիչ։ Ես ուսանողական նստարանի վրայ արդէն ակնյայտնի կերպով ցոյց եմ տուել իմ ինչ լինելս—ոչնչութիւն։ Ես այժմ կարող եմ թուել մի շարք առաքինութիւններ, մի շարք գործեր, որոնց ես ի բոլոր սրտէ համակրում եմ, սիրում եմ և մինչև անգամ յանուն դրանց միշտ և ամենուրեք ճառում եմ ոգևորուած, բայց երբէք, խոստովանում եմ, մատ մատի չեմ խփել ոչ մի բան անել, որ քիչ թէ շատ առնչութիւն ունենար իմ ջատագոված առաքինութիւններին և գործերին։ Ի՞նչ անտանելի տանջանք։ Զգալ որ բոլոր գործառնութիւններդ խայտառակութիւններ են, զգալ որ օրէցօր խրւում ես ցեխի մէջ, հասկանալ, որ կան վեհ, մաքուր, զոհ պահանջող գործեր, որոնց պէտք է ծառայել և չ՚կարողանալ ոչինչ անել,—ահա կսկծեցուցիչ ցաւը։

Երբեմն մտածում եմ. լաւ չէր լինի արդեօք, որ զուրկ լինէի գիտակցութիւնից, գոնէ բուսական հանգստութեան մէջ կ՚լինէի, վրդովումներից, յոյզերից և դառն կսկիծներից ազատ։ Երևակայիր, Վարեա, որքան մխիթարութիւն են պատճառում ինձ ե-բաղները։ Քնում եմ և ահա՛ երազ. մայիսեան օր է, յորդացած մի գետ հոսում է, մէջը մի խեղդուող, առաջ եմ ընկնում, օգնութեան եմ հասնում, մտնում գետը և ալետանջ, կրակուած ու յուզուած սրտով գոռ ալիքների հետ կռուելով, ուզում եմ հասնել խեղդուողին, բայց իսկոյն զարթնում եմ ձեռքերս ջղաձգօրէն փռած, քրտնած և հևալիս... Երազներում ես առասպելական հերոս եմ, առիւծ, ոչ մի խոչնդոտի առաջ չեմ առնում, վճռական ընոյթ ունիմ, իսկ արթնութեան ժամանակ՝ այս բոլորից յետոյ, դու կիմանաս թէ ես ինչ եմ եղել և ինչ պիտի լինեմ. բայց գիտե՞ս, Վարեա, ես իմ ոյժերս գրեթէ ոչ մի լուրջ գործի մէջ չեմ փորձել. չեմ արել մի այնպիսի բան, որ կարելի լինէր քեզ պատմել և դու տեսնէիր այնտեղ իմ անպէտք ու ապիկար ընաւորութիւնս։ Սակայն սիրտս, սիրտս վկայում է, որ առանց թանձրացեալ փաստերի էլ՝ ինձ վրայ կարելի է գրել «կորչելու է». ընդհանրապէս մարդու սիրտը սխալ վկայութիւն չէ տալիս, չէ՞։ Առօրեայ, հասարակ կեանքում իմ հոգուս անգունութիւնը ապացուցող մի շարք մանր-մունր փաստեր ունիմ, բայց դրանք

էլ աննշան բաներ են, պատմել չարժէ։ Այս բոլորը գիտակցելով՝ պարզօրէն զգում եմ, որ փրկուելու հնար չունիմ։ Վարեա, ես շատ եմ ցանկանում մեր ուսանողութեան մէջ ինձ մի բացառիկ երևոյթ տեսնել։ Ես ուզում եմ բոլորովին մի հակապատկեր լինել ուրիշներին։ Կան մարդիկ, որոնք պակասութիւններ ունենալով ըղձում են այլոց տեսնել թերութիւնների մէջ, որպէսզի իրանք մխիթարուած լինին։ Բայց ես այդպէս չեմ։ Ինքս կամաղուրկ լինելով՝ ատում եմ կամազուրկներին, կրքոտ լինելով՝ զզվում եմ կրքոտներից...

Արսէն

Վերջը միւս անգամ

Տ. ԿՈՍՏԱՆԴԻՆ Զ. ՎԱՀԿԱՑԻ

216. Կոստանդին ծննդեամբ և մննդեամբ կը պատկանի Սսոյ աթոռին ընիկներուն, և հաւանականապէս ինքն ալ եղած է Պօղոսի հակառակորդներէն մէկը։ Անստոյգ կը մնան իւր նախընթաց գործերը և կաթողիկոսութիւնը գրաւելուն պարագաները (1429), զորս ենթադրութեամբ միայն կրնանք նշանակել։ Թէպէտ իւր կաթողիկոսութիւնը տասը տարի տևեց, սակայն բնաւ իսկ խօսելու նիւթ պիտի չունենայինք, եթէ լատիններուն գումարած Փլորենտիոյ ժողովին մասնակցելու խորհուրդին համաձայնած չըլլար։ Կոստանդին բարեկարգիչ Պօղոսի յաջորդելով, և տասը տարի պաշտօն վարելով, և արտաքին յարաբերութիւններ մշակելու ձեռնարկելով, իւր վրայ լաւագոյն տեսութեան կրնայ առաջնորդել, և լաւ ակնկալութիւններ ալ ազդած կ'երևի առաջին անգամ, քանի որ ժամանակակից գրիչ մըն ալ զայն իբր իմաստուն եւ խաղաղասէր կը ներկայացնէ (Փիրզ. 95)։ Սակայն միւս կողմէն հատուկտոր տեղեկութիւններ իւր ժամանակի կաթողիկոսարանը ոգեսպառ դըրութեան հասած կը ցուցնեն, և ինքն ալ Սսոյ աթոռին գրեթէ վերջին կաթողիկոսը կը նկատուի, որք նշան են թէ աթոռը ոչ մէկ կերպով օգուտ տեսաւ Վահկացիին պաշտօնավարութենէն։ Հետեւարար մեք ալ նշանակական լռութեամբ պիտի անցնենք իւր գործունէութեան վրայէն։

217. Կոստանդինի ժամանակին քաղաքական կացութիւններն ալ ևս քանզևս վատթարացած վիճակ մը ունեցան։ Արևելեան Ասիոյ կը տիրէին Թաթարներ Շահռուհի իշխանութեան ներքև, իսկ արևմտակողմը կը զօրանային Օսմանեանք, որոց սուլթանն էր Մուրատ Բ։ Միջին Ասիոյ երկիրներուն մէջ, Իսքէնտէր և իւր Բարաքոյունլուները, և Օսմանու իւր Աքքոյունլուները կը շարունակէին իրենց արշաւանքները և իրարու դէմ պատերազմները, և պատերազմի դաշտ եղած գաւառներուն աւերումները։ Իզուր Իսքէնտէր զինքն Շահի Արմէն, Հայոց Թագաւոր ուզած էր անուանել, քանի որ Հայոց երկրին տիրապետութիւնը նոյնին բնաջինջ կոր-

ծանումով կը կարծէր ձեռք ձգել, և միւս կողմէն ահռելի սովը կը սպառէր պատերազմի մնացորդները (1431)։ Շահռուհ և Օսման երկու կողմերէն Իսքէնտէրի վրայ յարձակեցան, և նոյն ինքն Զահան կամ Ճիհան, Իսքէնտէրի եղբայրը, անոր դէմ ելնելով Շահռուհի յարեցաւ (1435)։ Իսքէնտէր յաջողեցաւ Օսմանի յաղթել և սպաննել. և հակառակ անոր որդւոյն և յաջորդին Համզայի ընդդիմութեան, ասպատակեց Սեբաստիոյ և Խարբերդի կողմերը, և բազմաթիւ Հայեր գերելով իրեն հետ արևելեան գաւառները տարաւ, ուր կը տիրէր Զահան Շահռուհի անունով։ Բայց վերջապէս Իսքէնտէր իւր զօրքերէն ալ լքուեցաւ, և իւր Շահուբաթ որդւոյն և իւր կնոջ դաւաճանութեամբ սպանուեցաւ (1437), և իւր մահը ամէնուն կողմէ իբրև նախախնամական գործ մը նկատուեցաւ, և խաղաղութեան ակնկալութիւններ յուսադրեց։

218. Սոյ կաթողիկոսական աթոռն ալ պիտի զգայր անշուշտ այդ աղէտներուն ծանրութիւնը, ներհակընդդէմ մրցողներուն մէջտեղը մնացած ըլլալով, թէպէտև իւր լեռնային դիրքը մինչև աստիճան մը զինքն կազատէր բաղխմանց ցնցումներէն։ Արևմտակողման տիրապետող Օսմանցիներ այդ միջոցին սկսան իրենց բանակները դէպ Արևելք քալցնել, օգտուելով Թաթարներուն ու Քուրդերուն զիրար կոտրելէն և տկարացնելէն։ Տաւրոսի լեռներուն վրայ կային տակաւին ցրիւ սփռուած մանր իշխաններ, որք ինքնուրոյն վիճակ մը կը պահէին, և զօրաւորագունին հանդէպ երբեմն բարեկամ և երբեմն հակառակորդ էին, այլ իսպառ նուաճուած չէին։ Գարամանի իշխանը, ասոնց դէմ դարձաւ և իւր զօրութիւնը ուզեց ցուցնել այդ մանր իշխանները հպատակեցնելով (1436), այլ որովհետև ուզեց միանգամայն Օսմանեանց ալ դէմ ելնել, սուլթան Մուրատ վրան հասաւ, և զինքն հաշտութիւն խնդրելու ստիպեց, և այս կերպով Օսմանեան պետութիւնը սկսաւ իւր իշխանութիւնը տարածել Հայկական գաւառներու վրայ, թէ Կիլիկիոյ և թէ բուն Հայաստանի մէջ (1436)։ Միւս կողմանէ Հայ իշխաններու վերջին մնացորդ մըն ալ, Պելգին Օրբէլեան, Վրաց դաւաճանութեամբ կը սպանուէր Սիւնիքի մէջ (1438), և այսպէս հետզհետէ կ՚անհետանային Հայ իշխանութեան մանր բեկորները։

219. Այդ կացութեան մէջ էր Կոստանդին երբ Արևմտեայց հետ յարաբերութիւններ վերսկսելու ձեռնարկեց։ Առջի ժամանակներու մէջ Կիլիկեցիք Արևմուտքի յարաբերութիւնները կը մըշակէին քաղաքական օգնութեան ակնկալութեամբ, որ այլևս տեղի չունէր, քանի որ ոչ միայն քաղաքական կացութեան յետին մնացորդներն ալ ջնջուած էին, այլ և վերականգնելու ակնկալութիւնն իսկ անհետացած էր։ Կրցաւ արդեօք Կոստանդին, գոնէ երա-

զատես յուսախաբութեամբ կամ թէ անբացատրելի յանդգնութեամբ մը այդպիսի նպատակի մտաբերել։ Ոչ մի նշան և ոչ մի հեռաւոր նշոյլ իրաւունք չտար այդ ենթադրութիւնը կազմելու։ Մանաւանդ որ Կոստանդին իր կողմէ ինքաբերաբար այդ բանը մտածած չէ, որ ալ Սսոյ աթոռը կամ Հայ եկեղեցին ուղղակի յարաբերութեան գաղափարը յղացած է։ Բովանդակ գործը Խրիմի Կաֆա կամ Թէոդոսիա քաղաքի լատինասէր և լատինահպատակ գաղթականութեան կը պատկանի, որ այս կերպով ուզած է փոքրիկ շարժում մը ցուցնել ի շնորհուկս իւր Գենուացի տեարց որոց ձեռքն էր Կաֆա քաղաքին տէրութիւնը։

220. Լատին եկեղեցւոյ մէջ ծագած պապական հերձուածը առիթ տուած էր շարք մը ժողովներու Բասելէա և Կոստանդիա քաղաքներու մէջ, որոնք վերջապէս բաժանեալ պապերը դատապարտելով, նոր պապ մը ընտրած էին (1417), որ եղև Մարտինոս Ե։ Սա իւր պապութեան տասուերեք տարիներու մէջ պարտաւորուեցաւ հերձուածներուն հետևորդներուն դէմ մաքառել, և երբ Եւգինէոս Դ. իրեն յաջորդեց (1431), պէտք զգաց ժողովները շարունակել, որպէսզի համաձայնութիւնն և խաղաղութիւնը ամրացնէ։ Պապական հերձուածը վերանորոգուեցաւ, և Փելիքս Ե. հակառակաթոռ ընտրուեցաւ (1437), բայց Եւգինէոս Դ. կրցաւ իւր զօրաւոր դիրքը պահել։ Այդ միջոցին Օսմանեանք վերջին նեղութեան մէջ թողած էին Կոստանդնուպոլսոյ կայսրութիւնը, և կայսրն Յովհաննէս Է. Պալէոլոգ սկսած էր յուսալ թէ Արևմտեայց օգնութեամբ կարող է զօրանալ և վերահաս վտանգէն ազատել, և մտածեց նորոգել իւր նախորդներէն Միքայէլ կայսեր դարուկէս առաջ ըրած փորձը Լուգդոնի ժողովին առեն (1274)։ Այդ պարագայն կը գգուէր մանաւանդ Եւգինէոսի անձնասիրութիւնը. և կը զօրացնէր նորա կողմը. և իւր դիրքը ամրացնելու համար ուզեց մշակել Յոյներու և ուրիշ արևելեան եկեղեցիներու հետ միութեան խնդիրը։ Այդ ձեռնարկը մասնակի արդիւնք ունեցաւ Եւգինէոսի կազմած ժողովին մէջ, որ առաջ գումարուեցաւ Ֆէրրարա քաղաքը (1438), և յետոյ փոխադրուեցաւ Փլորենտիա (1439), ուսկից իւր անունն ալ առաւ։ Ինչ որ Յունաց հետ տեղի ունեցաւ զանց կ'ընեմք, և կանցնենք Հայոց հետ կատարուած գործերը պատմել։

221. Եւգինէոս ուզելով Արևելեան եկեղեցեաց միութեան գործը ընդարձակել, յատուկ հրաւիրագիրներ ուղղեց ամէն ազգային եկեղեցիներու, որոնց անունը լսած էր, և հրաւիրագիրները ցրուեց Արևելքի մէջ գործ և իշխանութիւն ունեցող Իտալական տէրութեանց ձեռքով. որոնց մէջ առաջնակարգ դիրք ունէին

Գենուացիները, որք են ռամկօրէն Ճինիվիզ կոչուածները։ Եւգինէոս Հայերուն ուղղած հրաւիրագիրը յղեց Երուսաղէմի Եսայի պատրիարքին, որ հաղորդեց զայն Կոստանդին կաթողիկոսին, և սա ալ դիմեց Ամիդի եպիսկոպոս Նաղաշ Մկրտիչին, զոր ինքն ձեռնադրած էր իւր առաջին տարին (1430), և որ մեծ վարդապետի և աստուածաբանի համբաւ կը վայելէր, և Աքքոյունլու փատիշահներուն առջև զօրաւոր դիրք մը կազմած էր։ Զեմք գիտէր թէ ինչ աշակերտութենէ էր այդ Մկրտիչը, որ թէպէտ իւր ուղղութեամբ Արևելեայներու կը պատկանի, սակայն անունը որոշակի նշանակուած չենք գտներ, և կարող չեմք Տաթևացւոյն համանուն աշակերտներէն մէկուն հետ նոյնացնել։ Մկրտիչ Նաղաշ բացարձակապէս մերժեց Լատիններուն մօտենալու կամ անոնց հետ միանալու կարծիքը, և այս մտքով յատուկ դիր ալ ղրկեց կաթողիկոսին (1436 մայիս 16)։ Արդէմսեհ սարկաւագ որ շարունակուած խորհրդակցութեանց հաստատուն թղթատարն էր, Նաղաշի նամակը բերաւ Վահկացիին, որ սոյն գրոյն վրայ գործը խափանեց, և ոչ իսկ Եւգինէոսի հրաւիրագիրին պատասխանեց։ Զեմք գիտեր թէ ուրիշ վարդապետներու ալ դիմեց կաթողիկոսը, մանաւանդ որ օրերը նպաստաւոր չէին, և Իսքէնտէրի ու Գարամանցոց ու Օսմանեանց պատերազմներուն միջոցն էր (Շամչ. Գ. 474)։ Ինչ կողմանէ դժուար չէր Կոստանդինին իմանալ թէ ինչ պի[illegible] ըլլար Արևելեայց պատասխանը, քանի որ շատ յայտնի էր Տաթևեան դպրոցին կարծիքը, և հարկաւ բաւական սեպեց Նաղաշին խորհուրդին դիմել, որ նոյն դպրոցին խոհականագոյն և չափաւորագոյն մի անձն էր։ Հարկաւ, երբ նորա բացարձակ ընդդիմութիւնն ալ տեսաւ, այլ ևս աւելորդ դատեց Արևելեայ վարդապետներուն դիմել, և լաւագոյն սեպեց խնդիրը փակել։ Այդ կողմէն պէտք է կատարելապէս հաւնիլ Վահկացիին ընթացքը։

222. Եւգինէոս տեսաւ որ իւր հրաւիրագիրները ընդունելութիւն չէին գտներ, որով և իւր գործի էութիւնը կը պակսէր, հարկադրուեցաւ լոկ երևութական ցոյցերով ալ զոհանալ։ Յատկապէս նուիրակներ հանեց Արևելքի կողմերը. և Գենուացիներու դիմեց որպէսզի իրենց ազդեցութիւնը գործածեն իրենց եկեղեցւոյն օգտին։ Առաջին հրաւէրէն երկու տարի ետքը նոր հրաւիրագիր մըն ալ հասաւ Վահկացիին, այս անգամ Կաֆայի ազգայիններուն ձեռքով։ Յակոբ նուիրակ պապին, Պողոս հիւպատոս Գենուացւոց և Սարգիս եպիսկոպոս Հայոց, զատ զատ գիրերով Կոստանդինը կը յորդորէին, որպէսզի հաճի իւր հաւանութիւնը տալ, որ իւր անունով պատգամաւորութիւն մը ղրկուի Իտալիա

պապին հրաւէրին համեմատ։ Ինչպէս գործին ընթացքէն կը տեսնուի, միայն պաշտօնական գրութիւն մըն է Կոստանդինէ ուղուածը, մնացածը պիտի կարգադրէին Կաֆացի Հայերը, իսկ արտաքին միջոցները պիտի հոգային Գենուացիները։ Հարկաւ թելադրած են թէ այդ մօտաւորութենէ վնաս մը չկրնար ծագիլ, զի իրենց ազատութիւնը կրնան միշտ պահել, և եթէ օգուտ մը ծագի, այն ալ բացէն շահ մը կը սեպուի։ Մեծագոյն շահ մը կար արդէն, որ Կաֆացի Հայեր իրենց Գենուացի տիրապետողներուն առջև աւելի հաճելի եղած պիտի ըլլային։ Կոստանդին զիջաւ և համառօտ թուղթ մը գրեց Կաֆացի Սարգիս եպիսկոպոսին (1438 յուլիս 25), և անոր հետ գտնուող վարդապետներուն, որ չորս հոգի երթան և խաղաղութիւն և սէր և միութիւն հաստատելու աշխատին, և ինչպէս Գրիգոր ու Սեղբեստրոս, և Տրդատ ու Կոստանդիանոս իրարու հետ կռեցին դաշինս, այնպէս իրենք ալ միաբանութեան պայմանագրութիւն մը հաստատեն (Պալճեան 261)։ Այդ նամակին բնագիրին վրայ շատ չեմք պնդեր, միայն Կաֆայէ Սիս եկող պատգամաւոր Եմանեսիոս եպիսկոպոսի անունը օտարախորթ և անհարազատ կը գտնեմք, և Կոստանդինի գրութեան ոճին մէջ չեմք տեսներ բացարձակ հպատակութեան հոգին, այլ լոկ միաբանութեան և խաղաղութեան փափաք մը։ Եւ ոչ իսկ կը յիշուի թուղթ մը կամ դաւանանք մը պապին ուղղուած, այլ լոկ սովորական հրամանագիր մը Կաֆացիներուն ուղղուած, որով Կոստանդին պատգամաւոր կը նշանակէ Կաֆայի արքեպիսկոպոս Սարգիս վարդապետը, Մարկոս վարդապետը, Թովմաս վարդապետը և Բերիայի Յովակիմ եպիսկոպոսը, որոնք արդէն Խրիմի կողմերը կը գտնուէին։ Նամակաբեր եղող Եմանեսիոս եպիսկոպոսին անունը չկայ պատգամաւորներու կարգին, և կարի բռնազբօսիկ կը կարծենք Եմանեսիոս և Յովակիմ անունները նոյնացնելու համար ոմանց ջանքը (Զամչ. 475)։

223. Կոստանդինի նամակին թուականէն տարի մը ետքը (1439 յուլիս 6) կատարուեցաւ Փլորենտիոյ մէջ Յոյներու և Լատիններու կարծեցեալ միութեան ժողովական նիստը, և կարդացուեցաւ Եւգինէոսի շրջաբերական կոնդակը, և տակաւին Հայ պատգամաւորներ ժողովին եկած չեն։ Պապը կոնդակին մէջ կըսէ, թէ ի դուրս հասեալ կան Հայք, որ ըսել է թէ Կաֆացի Հայերն ալ շատ չեն աճապարած Իտալիա հասնելու։ Յոյներ կոնդակէն յիսուն օր ետքը (1439 օգոստոս 26), Փլորենտիայէ մեկնեցան, և հաղիւ վերջին օրը համառօտ տեսակցութիւն մը կրցան ունենալ Հայ պատգամաւորներուն հետ, որով վերջիններ օգոստոսին կէ-

սէն ետքը Փլորենտիա հասած կըլլան։ Անկէ մինչև Եւգինէոսի գրած Հայոց հրահանգին թուականը (1439 նոյեմբեր 22) երեք ամիս ևս անցած է, և այդ միջոցին Եւգինէոս պարտաւորուեցաւ զբաղիլ, Բասիլէայի ժողովին իրեն դէմ տուած վճիռով և Փելիքս Ե. մրցակից պապին գործերով, իսկ Հայոց համար յատուկ անձեր որոշեց, որ պատգամաւորներուն հետ բանակցին և միութեան կէտերը որոշեն։ Այդ բանակցութեան արդիւնքն եղաւ, Եւգինէոս Դ. պապին Հրահանգ առ Հայս կոչուած կոնդակը, և համառօտ յայտարարութիւն մը, որով Հայ պատգամաւորներ կընդունին այդ հրահանգը, յանուն մեր եւ յանուն մեծի կաթողիկոսին մերոյ եւ ամենայն Հայոց (Զամչ. Գ. 481)։ Յայտարարութիւն մը որոյ ոճն իսկ, ըստ ամենայնի լատինական, կը ցուցնէ թէ Հայոց ինքնաբերաբար յայտարարութիւնը չէ, այլ ուրիշէ պատրաստուած ձևի մը համակերպութեան արդիւնքն է։ Այդ հրահանգէն ամիս ևս ետքը (1439 դեկտեմբեր 15), դեռ Հայ պատգամաւորներ կը գտնուին Փլորենտիոյ մէջ, և Եւգինէոս Դ. յատուկ գրութեամբ կը պատուիրէ Կաֆայի Գենուացիներուն, որ չարգելեն Սարգիսի Հայոց վրայ ունեցած իրաւասութիւնը, չանարգեն նորա եպիսկոպոսական պատիւը, չկրկնեն Հայոց մկրտութիւնը, և այլն։ Պատգամաւորներ խաչերու և մասունքներու նուէրներ ալ ընդունելով Փլորենտիայէ կը մեկնին նոր տարուոյն մէջ (1440)։ Դիտելու արժանի է որ այդ գործողութեանց կարգին, Եւգինէոսի կողմանէ ոչ մի գիր, ոչ մի նուէր, և ոչ մի յիշատակ չկայ Հայոց կաթողիկոսին ուղղուած, որով պապին գործողութիւնները իրեն և Հայ եկեղեցւոյն միջև կատարուած չեն, այլ պարզապէս Գենուացւոց հպատակ Հայ գաղթականութեան հետ։

224. Այդ եղելութեան մասին գտնուած պատմական տեղեկութիւններ, ասկէ անդին չեն անցներ։ Հայ պատգամաւորներ, ինչպէս ուղղակի Կաֆայէ եկեր էին, այնպէս ուղղակի Կաֆա կը դառնան, և ինչպէս իրենց առած ընծաները, նոյնպէս իրենց յանձնուած հրահանգն ալ Կաֆա կը տանեն, իսկ Հայոց աթոռն ու կաթողիկոսարանը, ոչ կը տեսնեն և ոչ ալ կիմանան այդպիսի գրութեան մը գոյութիւնը։ Հռովմի հետ ալ հաստատուած միութիւնը, Կաֆացի Սարգիսին և իր ընկերներուն, և առ առաւելն Կաֆացի Հայերուն շրջանակէն անդին անցած չէ, որ կարող լինէինք անոր որևէ ծանրակշռութիւն մը տալ, և իրաւունք ունենայինք անոր արդիւնքն ու ընդարձակութիւնը քննել։ Հռովմէական Հայեր, և մանաւանդ վերջին դարերու գրողներ, այնպէս կուզեն ներկայել Փլորենտիոյ ժողովին անունով եղած

գործողութիւնը, որ իբր թէ վճռական օրէնք մը ըլլար Հայոց եկեղեցւոյն համար, և արդարացնէր իրենց ընթացքը։ Անոնցմէ մէկն ալ (Ըստկարեան 247), իզուր Մարկոս Եփեսացի մը կը փնտռէ, որ Հայոց կողմէ աշխատէր մաքառել Փլորենտեան վըճիռներուն ոյժը ջախջախել, ինչպէս Յունաց մէջ տեղի ունեցաւ։ Դժբախտաբար, Հայոց մէջ եղածին յիշատակն ալ չկայ, որ աւրող մը փնտռենք, պաշտպանող մը չկայ որ ընդդիմադիր մը հարկ ըլլայ գտնել։ Արդէն ցուցուցինք Վահկացի կաթողիկոսին գործած ընթացքը։ Առաջին հրաւէրին վրայ կը խորհրդակցի, և հեղինակութիւն ունեցողի մը կարծիքն ալ բաւական կը սեպէ։ հրաւէրը մերժելու և միութեան գաղափարը հեռացնելու։ Երկու տարի ետքը քանի մը վարդապետներ Գենուացի տիրապետողներուն ճնշման կամ ազդեցութեան ներքև կերթան Փլորենտիա, և իրենք իրենց կողմէն կը խօսին, կը ստորագրեն և կը դառնան իրենց տեղը։ Կաթողիկոսին կողմանէ պաշտօնական գրուած մը, և կաթողիկոսին ուղղուած ժողովական գիր մը, բնաւ իսկ տեղի ունեցած չեն։ Կոստանդինի նամակ մը կայ, բայց ոչ առ պապն այլ առ Կաֆացիս գրուած, և որոյ բոլոր վաւերականութիւնը Եմանեսիոս նորահնար անունէն աւելի հիմնաւոր չէ և թերևս բոլորն ալ ճարտար հնարագիտութեան արտադրութիւն (émanation) մըն է։ Հետևաբար չեմք ալ բացարձակօրէն ընդունիլ թէ Կոստանդին այսպիսի արտօնագիր մը տուեր է, բայց եթէ տուած ալ ըլլար, քանի որ առանց ժողովի և առանց եպիսկոպոսական դասու և առանց իւր եկեղեցւոյ, անձնապէս միայն այսպիսի կենսական գործի մը կը միջամտէ, եկեղեցական կանոնաց համեմատ, օրինաւոր գործ մը ըրած չըլլար, և իւր գործը Հայ եկեղեցւոյ համար զօրութիւն չունենար։ Մեր եկեղեցւոյ յիշատակաց, պատմութեանց, աւանդութեանց և գործոց մէջ Փլորենտիոյ գործողութենէն նշանախեց իսկ չկայ, որ կարենանք անոր համեմատ կարծիք մը յայտնել։ Մեզի համար չեղեալ բան մըն է։

225. Իբր հետաքրքրական պարագայ աւելցնենք, թէ Եւգինէոս Դ. պապին վերոյիշեալ հրահանգը, կամ Ցնծացէք առ Աստուած, Exaltate Deo կոնդակը, իւր պարունակութեամբ և զանազան հանգամանքներով մեծ խնդիրներու ենթարկուած է նոյն իսկ լատին եկեղեցւոյ աստուածբաններուն կողմէն։ Նախ կը վիճեն թէ այդ պաշտօնագիրը ժողովական է, թէ ոչ, և ողջամիտներ Յունաց հետ տեղի ունեցած նիստէն (1439 յուլիս 6) ետքը գործուածները ժողովական և իբր ընդհանուր ժողովոյ գործ չեն ընդուներ։ Երկրորդ կը վիճեն, թէ վճիռ է արդեօք, թէ ոչ պարզ

հրահանգ մըն է այդ գրուածը, որուն պարունակութիւնը այնպիսի կէտեր կը շօշափէ, և այնպիսի թերութիւններ ունի, որ վճիռի մը չեն կրնար յարմարիլ։ Մինչև ցայժմ ալ հրահանգ անունը կը տիրէ, և ամէնէն նախանձայոյզներն ալ Վճռահրահանգ (Decretinstruction) կոչումէ աւել չեն տար։ Երրորդ նկատողութեան կառնուի, թէ խորհուրդներու վարդապետութեան մէջ նշանաւոր թերութիւններ կամ սխալներ կը պարունակէ, զորօրինակ, թէ դրոշմի և թէ քահանայութեան համար ձեռաց դրութիւնը զանց ընելով, լոկ օծման կամ գործիքի տուուչութեան պարագայն խորհուրդին համար էական և բաւական կը սեպէ, ինչ որ նոյն իսկ հռոմէականաց վարդապետութեան հակառակ է։ Վերջապէս դաւանական և ծիսական և բարեկարգական կէտերը իրարու խառնելով, և ամէնքը մէկ շարքի վրայ դնելով, և ամէնուն նոյն կարևորութիւնը տալով, հաւատոյ և եկեղեցւոյ դրութիւնը կը շփոթէ։ Եւգինէոսի հրահանգին պարունակութիւնը քաղել աւելորդ կը սեպենք, քանի որ նորութիւն մը չունի, և ինչպէս տեսանք, կարևորութենէ զուրկ գրութիւն մըն է։

226. Կաֆացի պատգամաւորներ երբ իրենց տեղը դարձան, իմացան թէ Կոստանդին վախճանած էր իրենց Փլորենտիա եղած ատեն (1439), թէև թուականը չենք կրնար ճշտել։ Եթէ պինդ բռնենք Մեծոփեցիին ընդհանուր խօսքը (Կոստ. 55), պէտք է կարծել թէ սա ևս դեղակուր սպանուած վեց կաթողիկոսներէն մէկն է։ Իսկ այլուր կըսէ թէ Տէր Կոստանդին կաթողիկոս Սսոյ դնաց առ Աստուած (Կոստ. 63), և նոյն իսկ այս կէս հեղնական բացատրութեան մէջ կը տեսնուի նոյն դժպհի ենթադրութիւնը։ Կոստանդինի անմիջական յաջորդ կը նշանակուի Յովսէփ մը, զոր Դավրիժեցին (Առաքել 336) և Երևանցին (Զամբռ. 17) ընդունած են կաթողիկոսաց շարքին մէջ, այլ մեք պիտի չհամաձայնինք։ Մեծոփեցին, որ ժամանակակից է, կըսէ թէ Կոստանդինի մահուանէ ետքը Գրիգոր անուն եպիսկոպոս մի դնեն կաթողիկոս (Կոստ. 63), և չուզեր ընդունել Յովսէփը։ Միւս կողմանէ զանազան յիշատակարանք (Զամչ. Գ. 485 և Փիրզ. 119), միևնոյն տարւոյն համար կը նշանակեն ի հայրապետութեան Լուսաւորչին իմացնելով թէ կաթողիկոսական աթոռը օրինաւոր գահակալ չունէր։ Յովսէփի համար կըսուի թէ պարզ երէց մըն էր, որ ձեռներէց եղաւ կաթողիկոսական աթոռը գրաւել, թէ եպիսկոպոս չէր և չեղաւ, և թէ չկրցաւ կաթողիկոսական օծում ստանալ, և իսկոյն մերժուեցաւ։ Արդէն Կոստանդինի մահուան տարին չելած, Գրիգոր իբր կաթողիկոս կը յիշատակուի (1439 Նոյեմբեր 7), հեռաւոր Խրիմի

մէջ (Փիրզ. 119). Այդ ամեն տեղեկութեանց վրայ հիմնուելով արժան չեմք տեսներ Յովսէփ Գ. անունը ընդունել մեր կաթողիկոսաց գաւազանագրութեանց մէջ։ Յովսէփը պարզապէս մերժուած ըսինք, և զգուշացանք սպանուած կամ մեռած ըսելէ, վասն զի այլուր կը գտնենք, թէ նոյն իսկ Գրիգորի կաթողիկոսանալէն ետքը, և աթոռին Էջմիածին փոխադրուելէն յետոյ, Յովսէփ մը կայ տակաւին, որ կաթողիկոս ըլլալու ձգտումներով կը յուզուի, և բարեկամներ իսկ կունենայ, որ զինքն իբր կաթողիկոս կը յիշատակեն (Սիսուան 218)։

ՄԱՂ. ԱԵ. ՕՐՄԱՆԵԱՆ

ԷԴԳԱՐ ԱԼԼԷՆ ՊՕ

Եթէ անցեալ դարի սկզբներում բոսեակութիւնը քաղաքացիութիւն վայելէր, Պետերբուրգի բոսեակները կարող էին պարծենալ իրենց բախտակից հանճարեղ բոսեակ Էդգարով, որը ամբողջ Եւրոպան թափառելուց յետոյ Ռուսաստանի մայրաքաղաքումն էր իր հանգիստը փնտրում։ Դուցէ զարմանալի թուայ, որ այն թափառաշրջիկը մի կիսագնդից անցել էր միւսը առանց որոշ նպատակի՝ միմիայն թափառելու. իսկ ինչո՞ւ էր թափառում. ինչու նա դեռ 18 տարեկան հասակում թողեց Ամերիկան և ուղեւորուեց Յունաստան՝ գիտութիւնների և գեղարուեստի կլասսիկ հայրենիքի ազատութեան համար կռուելու։ Բայրօնը նոյնպէս, ճիշտ է, կռուում էր այդ մարտիկների շարքում, բայց դժուար թէ Պօի վարմունքի շարժառիթները նոյնը լինէին, ինչ թափառաշրջիկ «Չարլզ Հարոլդինը»։ Փոթորկալից կեանքը, պատերազմի սարսափները հարկաւոր էին Պօին աւելի սարսափելի փոթորիկը խըլացնելու համար, փոթորիկ, որը եռում էր նրա հոգում։ Արկածալից կեանքը սկսուել էր հէնց արկածներով. երեք տարեկան Էդգարի հայրը մեռնում է ալկոհոլից, մայրը թոքախտից և փոքրիկը մնում է քաղցած մերկ. հարուստ ամերիկացի Ալլէնը վերցնում է այդ բախտահալածին և խնամում հայրաբար, վերջում տեղաւորում է նրան զինուորական դպրոցում. բայց իր անհաստատ բնաւորութեան շնորհիւ 20 տարեկան հասակում արդէն ամեն բան թողած (և համալսարանից արտաքսուած) թափառում է, և այդպէս շարունակում մինչև կեանքի վերջը։ Նրա խռովայոյզ հոգին ոչ մի տեղ հանգստութիւն չէր գտնում. մայրական կաթի և հայրական գգուանքների հետ նա ծծել էր ալկոհոլի թոյնը, որի շնորհիւ հարուստ հոգու տէր մարդը երբեմն ընկնում, այնպիսի ոճիրների ընդունակ էր դառնում, որ սարսափելի էր տեսնել նրա մէջ, ծայրայեղ ալկոհոլիկը միշտ ապրեց և զարգացաւ Էդգարի մէջ։ «Վիլեամ Վիլսոնի մէջ իւր հերոսի բերանով պատմում է, թէ ինչպէս մի շաբաթ ամենազեղխ կեանք վարելուց յետոյ գիշերը իր մօտ

օրգիա է սարքում, որտեղ գինին հոսում էր գետի պէս, և միւս անառակութիւնները ևս չէին մոռացուած։

Պօի թշուառ գոյութիւնը մի փայլուն շրջան ունի միայն. այդ նրա ազգակցական ամուսնութիւնն է իր կուզէնի 14-ամեայ Վիրգինիայի հետ. Վիրգինէն ապրում էր իր մօր՝ միստրիս Կլեմմի մօտ. ահա այս երկուսի ընտանիքում օթևան է գտնում և Էդգարը, կաղմելով նրանց փոխադարձ մխիթարութիւնը և ուրախութիւնը։ Բախտաւոր էր այս փոքրիկ ընտանիքը. բարեսիրտ, առաքինի մայրը վերին աստիճանի հոգատար վերաբերմունք էր ցոյց տալիս դէպի փեսան, միջնորդում էր նրա և հրատարակիչների մէջ, սրանցից փող էր վերցնում և հոգում ընտանիքի կարիքները և երբեմն իր հարբած փեսային անզգայ դրութեան մէջ տուն էր բերում։ Վիրգինէն մի չքնաղ, հրապուրիչ արարած էր և շնորհալի երգչուհի, և Պօն նրան սիրում էր անղուսպ սիրով, այնպէս ինչպէս Դանտէն Բեաթրիչէին, Պետրարկան՝ Լուարային կամ Ռաֆայէլը Ֆորնարինային։ Ափսոս սակայն, որ Վերգինէի դեռատի կեանքը թունաւորուեց թոքախտով և մի երեկոյ էլ սոսկալի կատաստրոֆը լռեցրեց երգչուհուն, և այնուհետև նա սկսեց խամրել ու թառամել. Պօն խելագարւում էր՝ զգալով ամուսնու մօտալուտ մահը... մի երեկոյ նրա ղրկի մէջ Վիրգինէն անշնչացաւ և Պօի համար ընդմիշտ կտրուեց այն թելը, որ նրան կապում էր կեանքի հրէշային քաօսի հետ։ Ասում են, որ Պօն ինքը Վիրգինէի վաղաժամ մահուան պատճառը դարձաւ, որպէսզի առիթ ունենայ գրելու գերազգայուն էլիգիաներ։ Այս բանն է յիշում ընթերցողը, երբ կարդում է Պօի «Ձուաձև պատկերը», որտեղ երիտասարդը իր կնոջ կեանքի գնով ստեղծագործեց այն հոյակապ նկարը, որը իր հրճուանքի և փառքի աղբիւրն էր. բայց նա չէր ուզում տեսնել կտաւի վրայ կպչող ներկերը, վերցնում էր իր կնոջ եբեսից, երբ պատկերը պատրաստ էր և նկարիչը բացականչեց «ճիշտ որ՝ սա հէնց կեանքը ինքն է» նկատեց, որ կինը անշնչացած էր։ Ինչ էլ որ լինի Վիրգինէի մահով Պօն միանգամայն կորցրեց իր հաւասարակշռութիւնը և դարձաւ դեկը կորցրած մի նաւ. այնուհետև նա շատերի մէջ փնտրեց իր սիրոյ արձագանքը, շատերին էր ուզում հաւատացնել իր անկեղծութեան մէջ, նա մտադիր էր նոյն իսկ ամուսնանալ այդպիսիներից մէկի հետ, բայց ալկոհոլի վերջին հարուածը խորտակեց նրան. մի օր Պօին գտան անզգայ-հարբած՝ սալատակների վրայ. բերին հիւանդանոց, բայց նա գիտակցութեան չեկած մեռաւ։

Պօին անուանել են մոլորակ՝ առանց ուղեգծի և շատ յարմար է նրան այս կոչումը. Պօի ուղին կարելի էր որոշել միայն

այն ձգտմամբ, որով նա դիմում էր անըմբռնելի աշխարհներին. նա կարծես այս ռէալ պայմանների և երևոյթների ծնունդ չէր, այլ բաղկացած էր մի առեղծուածային զանգուածից, որի իւրաքանչիւր տարրը ձգտում էր դէպի մի անիմանալի աշխարհ։ Իր այդ արտակարգ հոգեկան կառուցուածքի արդիւնք են և նրա արտակարգ զգացողութիւնները և տպաւորութիւնները. Պօի ստեղծագործութիւնները մեծ մասամբ բեֆլեկտոր ոյժերի արդիւնք են, նա ստեղծում էր իր կամքին հակառակ, որովհետև մի տեսակ օրգանական պահանջ էր զգում այդ բանին. Պօն նախազգում էր զգացածը-վերլուծածը և գիտակցում էր իմացածը—ստեղծածը։ Ահա թէ ինչու Պօին կարելի է համարել բոլորովին ինքնուրոյն, ազդեցութիւնից զուրկ մի գրող, իսկ իբրև մարդ՝ մի առանձին, ալկոհոլիկ խառնուածքի տէր։

Տարերային զգացողութիւններ, հալիւցինացիա, սարսափ, յուսահատութիւն-ահա Պօի էութիւնը և զգացողութիւնը։ «Ոգևորութեան» բոպէներին չէր Պօն յանձնւում այդ զգացմունքներին, այլ միշտ էլ՝ ընդհանրապէս՝ Պօն ինքն էր այդ զառանցողը, ինքն էր մարմնացած սարսափը, յուսահատութիւնը, և ինքն էր այդ հրէշների զոհը։ Զարմանալի բան է, այս մարդը չի ճանաչում սովորական տպաւորութիւններ, նրա հերոսները սովորական սէր կամ իղձ չեն արտայայտում, այլ բուռն կատաղի կրքեր, որոնք տանում են միշտ դէպի վաղահաս քայքայում և ոչնչացում։ Սովորական թախիծ չէք գտնիլ նրա մէջ, այլ մի ծովացած, ողբերգական մելանխոլիա, որ իր խորութեամբ սարսափեցնում է մարդու։

Նայեցէք այս մարդու պատկերին և դուք որոշ ոչինչ չէք եզրակացնիլ. ալկոհոլիկի արտայայտութիւն, բայց որպիսի նուրբ դիմագծեր, որպիսի քնքոյշ թախիծ ու յուսահատութիւն աչքերի մէջ, և այս բոլորը քօղարկւում է մի գաղտնի խորհրդաւորութեան տակ, որը անզօր ենք մենք ըմբռնելու։ Պօն ունի մի պատմուածք, որ լոյս է տեսել իր մահից յետոյ. այդտեղ նա պատմում է իր թափառումները անդրգերեզմանային սահմաններում։ Կարդում ես և չես հասկանում, արդեօք միստիֆիկացիա է սա թէ իրականութիւն՝ Պօի տեսակէտով իհարկէ։ Ինչ էլ որ լինի, սակայն, սարսափում ես, երբ հեղինակի հետ զգում ես դու գերեզմանների սառն բուրմունքը և երեսիդ թափուող հողակոշտերը, այնպիսի բնական սարսափ է շնչում այդ տողերից. ասենք Պօն միշտ մի անցողական դրութեան մէջ էր գտնւում, միշտ մի թափառական էր այս գերփորձնական կեանքի շրջանում։

Շատ ճիշտ է նկատած, որ Պօին հետզհետէ աւելի լաւ են հասկանում յաջորդող սերունդները, որովհետև ներկայիս նեար-

դայնացած հասարակութիւնը իւրաքանչիւր տասնեակ տարուայ ընթացքում ծնում է իւր տրամադրութիւնների հարազատ թարգման Մետերլինկ, Դոստոևսկի, Նիցշէ. նրանց դաւանած սիմբոլիզմը և էստէտիկան և՛ մեր դաւանանքն է։ Պօն իր երկերով արդէն միանում է վերոյիշեալ պլէեադային։ Որպիսի՜ հոգեկան համապատկերութիւն «Կոյրերի» հեղինակի (Մետերլինկ) և «Ագռաւի» հեղինակի մէջ։ Սիմբոլիզմի հիմնադիր համարուող Բոդլէրը կամ ականաւոր Մելլարմէն Պօից յետոյ միայն կարող էին «չարութեան ծաղիկներ» ստեղծագործել, երբ ծանօթանալով Պօի հետ՝ մարմնացրել էին իրենց մէջ Էդգարեան պօէզիայի փիլիսոփայական սուբստանցը։

Իր գրուածքներում Պօն գեղեցիկ կերպով նկարագրում է այն պայքարը, որ կատարւում էր ալկոհոլիկի, անառակի և միւս կողմից հոգեկան կատարելութեան ձգտող հարուստ ոյժերի տէր անձնաւորութեան մէջ. գեղեցիկ է Վիլեամ Վիլսոնի վերջաբանը, երբ մարմնացած խիղճը դիմում է նրան՝ ասելով- «Դու յաղթեցիր, իսկ ես մեռնում եմ. բայց այս րոպէից սկսած դու էլ մեռար— մեռար աշխարհի համար, երկնքի և յոյսի համար։ Իմ մէջ էիր դու. ապրում, իսկ հիմա դու. իմ մահուամբ տեսնում ես՝ թէ ինչպէս վերջնականապէս ինքդ քեզ սպանեցիր։

Խեղճ մարդ. Պօի կամ Գոգոլի պէս հանճարները խղճալի են դառնում, երբ անզօր են լինում իրենք ընթացք տալ սեփական հոգու պայքարին, և տառապում ու դեգերում յուսահատութեան, թախիծի ճանկերում։ Գոգոլի համար ասողներ կան, որ „Нос"-ի կամ „Вій"-ի նման պատմուածքները գրում էր իր մաղձը ցրուելու համար։ Երևի Պօն էլ այդպիսի ինքնամոռացութեան միջոց էր ճանաչում իր երկերը։ Ի հարկէ այսպիսի խճճուած հիւսուածք ունեցող երկերի հեղինակը ամբողջապէս կլանուելու էր իր գրուածքներով։ Մենք, սոսկ ընթերցողներս նոյն իսկ տարւում ենք Պօին կարդալիս. վերցրէք պատանեկական «Ոսկի բզէզը», վերցրէք «սպանութիւնը» և կը տեսնէք՝ ինչպիսի կարևոր մանրամասնութիւններ, վարպետօրէն իրար շաղկապուած։ Այս բարդութեան կողմից մարդ յիշում է «Խոլմսի արկածները», չնայած որ վերջիններս զուրկ են գաղափարականութիւնից և չունեն առանձին գեղարուեստական արժէք։

Պօի որ գրուածքն էլ որ վերցնես, կը գտնես մի ընդհանուր մոտիւ. սարսափ, անխուսափելի մահ, քայքայում։ Բրազոլինկոի ասածի պէս Պօի պօէզիան յանդուգն է ու յանցագործ, որովհետև նա խլում է ընթերցողներից մէկի հաւատը, միւսի յոյսը. երրորդից յուսահատութեան բողոք է դուրս կորզում, չորրորդից

սարսափի ու ցաւի մի ճիչ։ Ոչ մի սրբութիւն չի թողնում, ամենինչ քայքայում, քանդում, ոտնատակ է տալիս։ Բայց եթէ սրբութիւնները ոտնահարողին մենք նենգ սրբապիղծ ենք անուանում, այդպէս չենք անուանիլ Պօին, քանի որ նա ինքը խորապէս տանջւում ու տառապում էր այս դատարկութիւնից ու անհաւատութիւնից։ Իսկ սարսափները, ինչ ծանր գնով էր նկարագրում դրանց. «Կարմիր մահուան դիմակը» կարդացողի մէջ սարսափը աճում է հետզհետէ և հասնում է սոսկումի երբ ժամացոյցը խփում է 12. մօտենում է ժանտախտի ուրուականը, պրինց Պրոսպէրօն չի ուզում յանձնուել նրան, թափահարում է սուրը, բայց իզուր, մահը անխուսափելի է, նրան էլ է ճանկում։ Եթէ ուզում էք ճանաչել մահուան ու թախծի կամ մոռացութեան անխուսափելութիւնը, կարդացէք Պօի «Ագռաւը». ահա այդ պօէմից մի պատկեր Բալմօնտի խօսքերով.

„Удались-же духъ упорный! Быть хочу одинъ всегда!
„Вынь свой жесткій клювъ изъ сердца моего, гдѣ скорбь-
всегда!“
Каркнулъ Воронъ: „Никогда!“

Երբէք! (Never more) այս յուսահատական կանչն է, որ շարունակ լսում է սև-ագռաւից, երբ ինչպէս ինքն է գրում՝

«Երբ էր մի օր կէս գիշերուայ սև ժամերին հոգեստանջհին փոշեպատ հատորները քրքրում էի կիսարթուն ..

Ներկայ սիմբոլիզմի ամենափայլուն արտայայտութիւնն է «Ագռաւը» պօէման. մի քնքոյշ թախծով ու յուսահատութեամբ է ճարակւում ընթերցողի սիրտը, երբ համոզւում է, որ հիասքանչ գեղեցկութեան հակադրւում է անողոք մահը, երբ մտածում է, որ ամենինչ վաղաժամ քայքայւում, ոչնչանում է. հէնց սկզբի տողերը տրամադրում են ընթերցողին մի վատ բան գուշակելու, երբ սև գիշերուայ խորհրդաւոր լռութիւնից յետոյ, մենաւոր սգաւորը-վանելով իր խօլ մտքերը, իսկոյն բացում է փեղկերը

(և ահա ինչ է տեսնում)

Հին օրերի սև ժառանգը, սև-ագռաւը երևաց.
Ասես լորդի հպարտութեամբ, և թևերի դանդաղ շարժմամբ
Անցաւ դատարկ խցիս միջով՝ դռան վերև ամրացրած
Պալլադայի գեղ կիսանդրին իրեն կայան էր ընտրած.
Այնտեղ բազմեց վեհապանծ։

Սև ագռաւը—դատարկ խցում, Պալլադայի հրաշագեղ ձիւնափայլ արձանի վրայ. ինչպիսի կօնտրաստներ... ինչ-լաւ բան կարելի էր սպասել այս պարագաներում. Սև մարգարէի երևոյթը

միայն բաւական է, որ մարի ամեն մի յոյս և բացարձակ ժըխտումը տիրէ։

«Ագռաւը», իբրև սիմբոլիզմի կատարեալ տիպար, մի սքանչելի կողմ էլ ունի. հնչիւնների և գոյների զուգադրութեամբ, արտաքին, նոյն իսկ պրոզայիկ առարկաների նկարագրութեամբ նատալիս է ընթերցողին հեղինակի բուռն զգացմունքները, զօրեղ տրամադրութիւնները.

Ясно помню... ожиданья... поздней осени рыданья...
И в каминѣ очертанья тускло тлѣющих углей...

կամ՝

И завѣс пурпурных трепет, издавал как будто лепет
Трепет, лепет, наполнявшій темным чувством сердце мнѣ

կամ վերջապէս՝

И сидит, сидит зловѣщій ворон черный, Ворон Вѣщій,
С бюста блѣднаго Паллады не умчится
Никогда...

Այսպիսի բնաւորութեամբ կտորներ կան և ուրիշ գրուածքների մէջ. ահա և մի ուրիշ հատուած, որտեղ Պօն բառերի միջոցով արտայայտում է զանգերի հնչիւնը, մերթ մեղմ ղողանջիւնը, մերթ ահեղ և գոռացող, մերթ կաշկանդող և կանչող, մերթ մռայլ ու խորհրդաւոր.

Факел траурный горит,
С колокольни кто-то крикнул, кто-то громко говорит,
Кто-то черныи там стоит,
И хохочет и гремит,
И гудит, гудит, гудит.
К колокольнѣ припадает,
Гулкій колокол качает,—
Гулкій колокол рыдает,
Стонет в воздухѣ нѣмом—
И протяжено возвѣщает о покоѣ гробовом.

Ինչպիսի երաժշտութիւն, ներդաշնակութիւն, ինչպէս զգուշութեամբ և տեղին են գործածած բառերը. գուցէ թարգմանութիւնով չի կարելի ճիշտ գնահատել այդ կողմերը. Պօի վերաբերմամբ այդ ճիշտ է, միայն յօգուտ դարձեալ Պօի. անգլիերէն իմացողները վկայում են որ Պօին չի կարելի թարգմանել. թարգմանութիւնը միշտ ճապաղ է թւում ընագրի մօտ։ Անգլիական լեզուի ժլատ ձևերով Պօն հրաշալիքներ է արտադրել։ Պօի կտրուկ, սեղմ ոճը, առնական կորովը և որոշութիւնը միմիայն իսկականում է

երևում։ Պօն մի հսկայ նկարիչ է, որի կարող վրձինի մի քանի գծերը մի քանի գոյների միաւորութիւնը դուրս էն բերում մի վսեմ պատկեր։ Եւ Պօի գործերում քիչ չեն այն հրաշակապ կտորները, որոնք կարդալով զգում ես, որ գործ ունես մի մեծ բանաստեղծի, մեծ մարգարէի և վերջապէս մի մեծ առեղծուածի հետ, որի առջև սովորական հոգեբանութեան տէր մարդիկս միայն խոնարհուել կարող ենք։

Կարս, **Մարգս**

Դաւնօր. Շօպէնի և Պօի մասին գրելիս օգտուել եմ Ստասովի, Սակկետի-ի, ակադեմիկ Մեզերի, Բրազոլենկօի, Բրիւկների աշխատութիւններից և Բրօկհազուզի «Մեծ հանրագիտարանից»։

ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԻՒՆ [1]

ՀԻՆԳ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԼ ԼԱՄՊՐԵԽՏԻ

IV

ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մի անգամ էլ համառօտ գծերով առաջ բերենք այն հոգեկան ընթացքը, որի մասին նախկին ժամում խօսեցինք մանրամասնօրէն, յատկապէս անցման ժամանակների մասին մինչև գերմանական կուլտուրայի նորագոյն ծաղկած ժամանակը։

Տեսանք ինչպէս 1850-ից մինչև 1880 թ-ը ապրող սերունդների համար անծանօթ կամ առնուազն անսովոր զրգիռների ահագին խումբ առաջ եկաւ, տեսանք, թէ ինչպէս սրբանց հոգիների համար դժուար էր այս նոր պահանջներին իրենց գոյութեան ընթացքում տէր դառնալ։ Սկսուեց մի աստիճան, երբ նորի ոչ այնքան էլ մեծ թափը կարելի էր հնի հետ հաշտեցնել. առնուազն միայն մի խումբ աչքի ընկնող անձինք կարողացան այս անել։ Սրա հետ միասին ընդարձակ շրջաններում արժէք են ստանում խառն զգացումները. տարածւում է որոշ զգայնութիւն. բազմանում են յոռետեսական և միաժամանակ հումօրիստական տրամադրութիւնները։ Զարգացման երկրորդ շրջանը առաջ բերեց նոր տպաւորութիւնների այնպիսի մի ոյժ, որ այս խառն դրութիւնը անյայտացաւ։ Տեղի ունեցան խիստ յարձակումներ, բնութեան մէջ կորաւ մարդը. սովորական մտապատկերների մէջ առաջ եկաւ աններդաշնակութիւն, ծգտումների, կամեցողութեան և ընդհանրապէս զգացումների մէջ անապահով դրութիւն անձնաւորութեան համար գերիշխող

---

[1]) Լումայ № 4

ոյժը կորաւ. հոգիները անծնատուր զգացումների, մտապատկերների, զուգորդութիւնների և սրանց ամբողջ դրութիւնը մինչև այժմ անծանօթ ձևերին։ Այս անծանօթ ձևերը մինչև այժմ ունեցածների համեմատութեամբ շերտաւորուած էին և մասամբ հոգեկան գոյութեան այնպիսի շրջան յայտնագործեցին, որը մինչև այժմ գիտակցութեան սահմաններից դուրս էր մնացել։ Խիստ գրգռման ժամանակ էր, երբ սկզբում ազգի միայն մի մասը տարուեց դրանով և նկատուեց իրրև հիւանդագին, նեարդային մի դրութիւն։ Սակայն շուտով այս դրութիւնը ընդհանուր դարձաւ, որքան վերջինս տնտեսական հաղորդակցութիւն ու սոցիալական կեանքից առաջ եկած գրգիռների ընդհանրութեամբ էր պայմանաւորուած և վերջապէս նկատուեց իրրև զարգացման անհրաժեշտ ընթացք։ Նեարդային խօսքի տեղ բռնեց մի նոր յատուկ դրութիւն, որի համար կազմուեց գրգռուող խօսքը։ Այս անցման և սրա գիտակցութեան մէջ պարզ արտայայտուեց, որ ժամանակի սոցիալական ոգուն առաջնորդող հոգիները արամադիր չէին նաև այդ գրգռող դրութեան ինչպէս նա կար իւր բնական, քայքայող ազդեցութեամբ, ենթարկուել։ Երբ ըմբռնեցին այս դրութիւնը պարզ թէ միայն բնազդաբար, պատրաստութիւն յայտնեցին դիմադրել։ Հոգեկան մի նոր միջուկի կազմուելը, անծնաւորութեան համար մի նոր գերակշռող ոյժի կազմուելը, առաջ եկաւ նոր, գոյութիւն ունեցող գրգիռների զուգորդութիւնների, ձգտումների ու զգացմունքների ազդեցութեան տակ։ Մարդը նորից բարձրացաւ իրրև իւր համար եղած յանկարծակիների իշխանաւոր. հոգեկան նոր ժամանակի իդիալիստական շրջանն սկսուեց։

Ըստ ինքեան ինկատի ունենալ այս դէպքը, սրա անհատական ընթացքը, ամեն մի աստիճանը շատ հետաքրքիր է։ Սակայն սրա հիմնական հոգեկան պատճառները, հոգեկան մկանների ու ջղերի ցանցը բացատրեցինք ոչ այդ նպատակով. աւելի հետաքրքիր է այն, որ աւելի լաւ դիտելու դէպքում, այս մկանների ու ջղերի ցանցի մէջ նկատւում է մի որոշակի ընթացք, որով կուլտուրական ժամանակաշրջանների անցումները գնացել են. պարզուեց ուրեմն, որ այս է ընդհանրապէս կուլտու-

բական ժամանակաշրջանի անցման հոգեկան մեխանիկան։

Անշուշտ չպէտք է հասկանալ այն մտքով, որ 19-րդ դարու երկրորդ կիսի անցման ամեն մի երևոյթ նախկին անցումներին իւր ամենայն մանրամասնութեամբ նման է։ Աւելի մանրամասն ուսումնասիրութիւնը ցոյց է տալի ընդհակառակը որ անցման ժամանակի երևոյթներից մի ամբողջ շարք կրճատւում է, կամ առնուազն աւելի թոյլ է հանդէս գալի։ Բացի այս, երբ մենք համեմատութեան համար ի նկատի ենք ունենում ոչ միայն գերմանական պատմութիւնը, այլև ուրիշ ազգերինը՝ արևմտեան ու միջին Եւրոպայի ժողովրդներինը, ինչպէս և ուրիշ ժողովուրդներինը, օրինակ ճապոնացոցը, ստանում ենք որոշ տարբերութիւններ, որոնք մեծ մասամբ առաջ են գալի այն բանից, թէ որքան մի ազգային տիպ միւսից բանական, այլ և զգացողական տեսակէտից տարբերւում է։ Ի նկատի չունենալով այս ամենը տեսնում ենք, որ այնուամենայնիւ հոգեկան անցման ժամանակի մեխանիկայի նման երևոյթները ամեն տեղ կրկնւում են։

Հետազօտենք այս երևոյթը գերմանական պատմութեան մէջ աւելի որոշակի մի քանի խօսքով։

Այս դէպքում 16-րդից մինչև 18-րդ դարը եղող անհատական սերունդներից նոր ժամանակի 1750-ից յետոյ եղող անձնականութեան անցման ժամանակը շատ ուսանելի է։ Այս ժամանակում նկատում ենք վերին աստիճանի բազմացումն գրգիռներ ու զուգորդութիւններ առաջ բերող առիթների։ Նախ առաջ է գալի մարդկանց համար հանգստանալու մի նոր եղանակ 30-ամեայ պատերազմների ժամանակ, կուլտուրայի ամբողջապէս տակն ու վրայ լինելուց յետոյ լրագիրները 1725 թուից սկսած ընդհանրապէս բազմանում են. ժողովրդագիտութեան և ճանապարհորդութեան վերաբերեալ գրականութիւնը շատ մեծ չափեր է ընդունում և հազարաւոր այլ խորարմատ ունեցող դէպքեր հոգեկանի արթնանալուն նպաստում են։ Այս դէպքերը կատարւում էին շնորհիւ նախկին փորձերի, մի խումբ հին ու նոր աչքի ընկնող մարդկանցից, Հէնդէլ, Բախ, Ֆոն Հալլէռ. հոգեկան կուլտուրայի ժամանակաւոր փորձառութեան խառն զգացումներն են այժմ զգայնութիւնը և կեղծ բարե-

պաշտուԹիւնը. նորը յանկարծ ժայԹքում է, յոյզերի ու որոնումների ժամանակ է. զրկւում են բոլոր հրամայականներից։ Այս քաօսից աչքի ընկնող անձինք ազատւում են շնորհիւ իրենց ուժեղ անձնաւորուԹիւն լինելուն, այլ և մասամբ շնորհիւ հկլենիզմի՝ նախկին իշխանական կուլտուրայի հետ սերտ առընչուԹիւն պահելուն. սրանք են՝ Կանտը, Շիլլերը, ԳեոԹէն, ԲէԹհովէնը։ Ցայտնի է, որ հէնց սրանք էլ իրենց ժամանակի տէր լինել չկարողացան։ Զարգացման իսկական ճանապարհը աւելի շուտ յառաջադիմող աններդաշնակուԹեան ուղին է եղել, որը երևում է և ռոմանտիզմի առաջին աստիճանում. յետագայ ռոմանտիզմում երևում է փոփոխուԹիւն. սկսում են փնտրել մի նոր հրամայական. իդեալիզմի փիլիսոփայուԹիւնը նորից երևում է Նապոլէոնի դէմ մղած կռիւը լարում է կամքի ոյժը. հանդէս է գալի 19-րդ դարու առաջին կիսի անձնաւորուԹիւնը։

Մի հոգեկան ժամանակից միւսին անցնելու անցման դէպքը այսպէս վերջանում է, սակայն այստեղ, բացի ներկայի մասին եղած դիտողուԹիւնները, կայ և միայլ շարունակուող ընԹացք։ Սա բնորոշւում է բանականուԹեան և իսկական կամքի ոյժի ուժեղ, գերակշռող դիրք ստանալու հանդէս գալովը. 30-ական Թուականներին երևում է ռէալիզմը, 40-ականին՝ քաղաքական ձգտումները։ Այս վերջանում է նախորդների գաղափարները կատարելագործողների առաջ գալով, որոնք հիանում են մեծ արժէքներով և աշխատում են նմանուել կամ կատարելագործել. մի բան, որ մինչև այդ եղած ժամանակաշրջանը իւր նախկին ընԹացքով, որքան և եղակի արտայայտուԹիւններում հրամայականներ է արտադրել, այնուամենայնիւ սրան ետև է Թողնում։ Այսպիսով նախ գերակշռում են զուտ բանականուԹիւնը ու ուժեղ կամքի համապատասխանող հակումները համեմատած նախկին ժամանակի ոգևորուած զգայուն ու անորոշ ձգտմանը, ապա զարգանում է անկասկած նոր հրամայական ոյժը, իբրև ուղեկից երևոյԹ. այնուհետև սկսւում է նոր կարգաւորուած դրուԹեան անպտղաբերուԹիւնը և քարացման դանդաղ սկզբնաւորուԹիւնը։

ԵԹէ աւելի խորը Թափանցենք գերմանական պատմու-

թիւնը ամեն տեղ էլ կգտնենք ոչ միայն անցումների, այլ և եզակի կուլտուրական ժամանակների ընթացքի հոգեկան մեխանիկայի նման հիմնական գծեր։

Այս երևոյթները մօտից դիտելու համար պէտք է անցնենք բարենորոգութիւնների ժամանակը, ընդհանուր պատմութեան լեզուով ասած անհատականութեան դարերը. (15-ից-18-րդ դար)։ Այս դէպքում իրօք մի քանի սրամիտ խօսքեր մէջ բերելը բաւական է էութեամբ նման հոգեկան մեխանիկայի երևոյթը իսկոյն յիշելու. առաջ է գալի դրամատնտեսութիւն և սրա հետ միասին 14-րդ դարուց սկսած մի չլսուած, մինչև 16-ր դարը շարունակուող ընդարձակումն տարածութեան և վերջն էլ ժամանակի հորիզոնների, այլև զուգորդութիւնների ու դրգիռների անհատնելի հարստութիւն. 15-րդ դարում միջնադարեան աշխարհի հրամայականների վերաբերմամբ անհանգստանում են և վերջն էլ նրանց կործանում։ Հազարաւոր մասնակի քաղաքական և սոցիալական յեղափոխութիւններ են տեղի ունենում. երևակայութեան գործունէութեան մէջ նկատւում է մինչև այդ չլսուած նատուրալիզմը, զգացմունքի կեանքը գնալով անվստահելի է դառնում, մանաւանդ կրօնական զգացումների մէջ։ Բարենորոգութեան դէպքում նկատւում է այժմ անցումն դէպի նորը և նոր հրամայականի գիւտ. վերակազմւում է կամքի և մտաւանդ բանականութեան կեանքը, որը միացած է այս հրամայականի հետ. այլև կրօնը, գեղարուեստը և բանաստեղծութիւնը վերածւում են բնական իրաւունքի և բանականութեան վարդապետութեան։

Եթէ աւելի ետ գնանք, հասնենք իսկական միջնադարին և դեռ աւելի վաղ ժամանակների, կտեսնենք հոգեկան մեխանիկայի նոյն պատկերը։ Այն մանրամասն դիտողութիւնը, որ մինչև այժմ քննած ժամանակների համար հնարաւոր էր, երկու կերպ է երևան գալի. նախ որ սոցիալական հոգում գերիշխողը կրօնականն է. արդէն անհատականութեան ժամանակում այս երևոյթը ի նկատի առնուեցաւ. կարիք չկայ աւելի ևս հիմքեր որոնելու այն բանի համար, որ իւրաքանչիւր ազգի միջնադարում և նախաժամանակում նոյն բանն է երևում։ Սրա հետե-

ւանքը լինում է այն, որ պատմութեան աղբիւրները շատ միակողմանի են լինում և մենք կարողանում ենք միայն կրօնական շարժումը հիմնաւորապէս հասկանալ. այս սխալը կարելի է միայն այն չափով ուղղել, որ պէտք է ասել, թէ հոգեկան զարգացման կեդրոնը իսկապէս կրօնականն է կազմում: Սրան աւելանում է երկրորդը: Ամեն մի համեմատական հոգեբանութեան հիմքն այն է, որ համեմատւում է օտարի հոգեկան կեանքը իւրի հետ. հետևանքը այն է լինում, որ համեմատութիւնից առաջ եկած սխալները ընդհանրապէս այնքան աւելի քիչ են լինում, որքան օտարի հոգեկան կեանքը սեփական հոգու կեանքին որոշ չափով նմանում է. որքան այս բանը պակասում է, այնքան սխալների թիւը շատանում է. միայն խիստ փորձուած վարպետներ կարողանում են կոպիտ սխալներից զերծ մնալ: Մեծ սխալներ առաջ բերող գայթակղութեան շրջաններին են պատկանում հետազօտութեան դէպքում գերմանական միջնադարը և ի հարկէ աւելի ևս գերմանական նախաժամանակը:

Հակառակ այս կրկնակի դժուարութիւններին, առնուազն միջնադարի հոգեկան գործերը այնպիսի պարզ լեզուով են խօսում, որ մենք մխիթարուած կարող ենք նրանց վկայ կանչել: Նրանց վկայութիւնը հաստատում է միայն, որ 9 և 10-րդ դարերում ազգի և պետութեան միութեան առաջ գալու հետ սկսում է ազգերի բազմանալը և զուգորդութիւնների ուժեղացումը. 10-րդ դարի բարեպաշտութեան զարգացման ժամանակ երևում են կոպիտ տեսակի խառն զգացումներ և աններդաշնակութիւններ. Լօտրինգիայի ասկէտականութիւնն է առաջ գալի, Կլիւնիական և ընդհանրապէս բարենորոգչական շարժումներ են տեղի ունենում. Գրիգոր Է-ի ժամանակ եկեղեցում և բարոյականութեան մէջ ծեռք են բերում կրօնական-բարոյական, մտաւոր գերիշխող ոյժեր. վերակազմութիւն այս համակարգութեան մտաւորի և կամեցողականի տեսակէտից միջնադարեան եկեղեցու սարսափելի ժամանակում (Իննովկենտիոս Գ.). անմխիթար, բծախնդիր բանականութեան հասնող ժառանգներ են երևում 14 և 15-րդ դարերում:

Ինչպէս նախկին դաստիարակութեան մէջ նկարագրեցի անց-

ման ժամանակի երևոյթները, այս դասախօսութեան մէջ էլ լրացրի նոյնը. այսպիսով արդէն տուի կուլտուրական ժամանակի ընթացքի ընդհանուր հոգեկան մեխանիզմի նկարագիրը:

Այս հետևանքը ըստ ինքեան նոր բան է. մենք շարունակ կտեսնենք, թէ պատմագիտութեան զարգացման ժամանակ ինչպիսի ծանրակշիռ նշանակութիւն ունեցող եզրակացութիւնների է առնելու: Արդեօք այս բանը նրանց համար, որոնք նորագոյն հոգեբանութեանը մօտիկից ծանօթ են կամ առնուազն ընդհանուրի կողմից ճանաչուած հիմքերը գիտեն, իրօք անսպասելի է: Կարծում եմ, որ հազիւ թէ. տպաւորութիւնը այն պիտի լինի, որ հազիւ թէ այլ կերպ էլ լիներ: Այն ընթացքը, որի հետ ծանօթացանք եզակի հանճարի հոգեկան մեխանիկային այնպէս նման է, ինչպէս որ սոցիալ հոգեկան օրէնքները, անհատական հոգեկան օրէնքների գործադրութեան օրինակներ են միայն *):

Երբ սոցիալ-հոգեկան մեխանիզմի գործօնները եզակի կուլտուրական ժամանակների ընթացքում էապէս նոյնն են մնում, այդ դէպքում հարց է ծագում, թէ ո՞րտեղ է գտնւում ժամանակաշրջանի տարբերութիւնը: Այս տեսակէտով քննելով, կրտեսնենք երկու տեսակի գրգիռներ. նախ այսպէս կոչուող հոգեկան հրամայական ոյժը և երկրորդ այն, ինչ որ հոգեկանընդլայնում է կոչւում. եզակիի և սրա հետ միասին ընդհանուրի հոգեկան կեանքում հնարաւոր երևոյթների ընդդրկումը:

Նախ զբաղուենք հոգեկանի ընդարձակմամբ խնդրով:

Այստեղ հանդիպում ենք նախ գիտակից և անգիտակից հոգեկան կեանքի մէջ եղած տարբերութեանը: Ակներև է, որ հոգում զգացումներից ու մտածողութիւնից առաջ եկած դէպքերի ահագին քանակութիւն կայ, թէև պարզ կամ ընդհանրա-

*) Իբրև ծանօթութիւն պէտք է աւելացնել, որ մասնաւոր, ընդհանուր կուլտուրայի որոշ տարբերի համար արժէք ունեցող հոգեկան աննիրդաշնակութիւնները ու խառնակութիւնը իսկապէս կուլտուրայի պատմութեան մէջ միանման երևոյթների հետ այնպէս են հանդէս գալիս, ինչպէս նման անցքեր անհատի կանոնաւոր հոգեկան կենսաբանութեան կողքին հազուագիւտ չեն:

պէս գիտակցութեան որևէ բովանդակութիւն դրանց չի համապատասխանում։ Մենք նրանց գոյութեան և նշանակութեան մասին էապէս միայն զգացումներից ենք իմանում, որոնք նրանց ուղեկից են. զգացումների այս խիստ խառնիճաղանճ դրրութիւնից, ինչպէս և այլ զուգորդութիւններից կարող ենք եզրակացնել, որ անգիտակից հոգեկան կեանքի այս դէպքերի քանակը շատ աւելի մեծ է. քան գիտակից դէպքերի քանակը։

Արդեօք գիտակից և անգիտակից հոգեկան կեանքի միջամուր և անփոփոխ սահմաններ կան։ Ամեն մէկին էլ փորձը ասում է, որ ոչ։ Ամենաշատը կարելի է այս սահմանները ուժեղ ուշադրութեան շնորհիւ, այսինքն հոգեկան մեծ ոյժի հետզհետէ աւելի մեծ գործադրութեան շնորհիւ, առաջ մղել. սրա համապատասխան մեծանում է թիւը, այլ և տպաւորութիւնների, երևակայութեան, զուգորդութիւնների գումարը, ծրդումների և զգացումների որակը փոխւում է։ Այս փորձը ճրշտում է եթէ ի նկատի ենք ունենում եղակի անհատին իւր գոյութեան ընթացքում և անհատներին միմեանցից տարբերելու դէպքում, այնպէս և մարդկային հասարակութիւնները, այսինքն սոցիալ-հոգեկան անհատներին, ի նկատի ունենալով սրանց սեփական փոխոխութիւնները, այլ և նրանց յարաբերութիւնները դէպի միւս հասարակութիւնները։

Որովհետև իւրաքանչիւր բնական ճանապարհով զարգացած հոգեկան էակում գիտակցական կեանքի մօտենար հետզհետէ աճում է, ուստի հնարաւոր է այս կեանքը երկու. շրջանի բաժանել՝ մի նեղի և մի լայնի։ Ընդարձակ շրջանը ընդգրկում է գիտակցութեան այն բովանդակութիւնները, որոնք շատ յաճախ երևան են գալի գիտակցութեան մէջ, ուստի համապատասխան դրգիռների ազդեցութեան տակ բնազդաբար կրրկին վերադառնում են իրենց տեղը. նեղ շրջանը ընդգրկում է այն բովանդակութիւնները, որոնք միայն յատուկ ուշադրութիւն դարձնելու դէպքում գիտակցւում են, որոնց կարելի է նաև ուշադրութեան բովանդակութիւն անուանել։

Երկու խմբի՝ գիտակցութեան և ուշադրութեան բովանդակութեան վերաբերմամբ ևս որոշ է, որ սրանք անհատական,

այլ և սոցիալ-հոգեկան կեանքի զարգացման հետ իրենք էլ զարգանում են, կամ այլկերպ ասած, պարզ է, որ սրանց զարգացման մէջ մի ուժեղ հոգեկան ոյժ է ազդում: Հոգեկան կեանքի ընդարձակ տարածութիւնից միշտ աւելի ու աւելի մեծ, ամեն տեսակ կտորներ են անցնում ուշադրութեան, ապա գիտակցութեան կեդրոնները:

Սակայն այլ մտքով էլ կարելի է հոգեկան կեանքի ընդարձակութեան մասին խօսել:

Հոգեկան երևոյթների հիմնական օրէնքների մի ահագին թիւ կայ, ուր որ ամեն մի օրէնք եթէ բացարձակապէս գործադրենք, միւսին պէտք է բացասէ, այսինքն իւր հիմքով տրամաբանօրէն միւսին կհակասէ: Այս նրանից է առաջ գալի, որ հոգին վերջի վերջոյ միշտ երկու կողմից է շարժման մէջ դրուում, նախ դրսի երևոյթների աշխարհից և երկրորդ իւր իսկ ներսի կեանքից: Նատ յաճախ, եթէ ոչ միշտ, այս շարժումների մէջ մի տարբերութիւն լինում է. այս զուգորդութիւններում, ուր մի բաղմազանութիւն կայ, նոյն կերպ միաւորութիւն է տեղի ունենում, ինչպէս որ տարբերութիւն և առանձին առանձին ըմռնումն, այսպէս և կամքի արտայայտութիւններում, ուր երևում են հնարաւորութիւններ և սրանց հակառակները, ուր որ մի մղում մեզ ստիպում է հասկանալ մի բան, որը մեր բնութեան հակառակ է. վերջապէս զգացումների մէջ ևս, ուր որ դրականի և բացասականի պայքարը ամենից առաջ է նկատուում: Այստեղից հասկանալի է, որ ամեն հոգեկան դէպք, թէ անհատի, թէ մարդկային հասարակութեան մէջ բևեռային հակադրութիւններով է տեղի ունենում: Այսպիսով անհատական և սոցիալական հոգու դրութիւնը տարուբերուող է. գործօնների հաւասարակշռութեան մի բևեռից միւսին կարող է անցնել:

Տեսնում ենք, որ այս մտքով էլ գոյութիւն ունի հոգեկանի ընդլայնումը. կուզէի այս ընդլայնմանը, հակառակ նախկին ընդլայնման, որին անուանեցինք գիտակցութեան ընդլայնում, հոգու գործօնների ընդլայնում անուանել:

Պատմական զարգացման տեսակէտից ի՞նչ յարաբերութեան

մէջ են գտնուում գործոնները և գիտակցութեան ընդլայնումները։ Պարզ երևում է, որ գործոնների ընդլայնումը կախուած է գիտակցութեան ընդլայնումից, որովհետև որքան վերջինս մեծանում է, այնքան առաջ են մղուում այն ծայրերը, որոնց միջև գործոնները կարող են հանդէս գալ։ Սրանով ի հարկէ չեմ ասում, որ երբ գիտակցութիւնը ընդլայնուում, մեծանում է, գործոնները աւելի ևս մեծ հակադրութեամբ պէտք է գործեն. աւելի շուտ գիտակցութեան նոր ընդլայնմանը գործոնների համապատասխանող գործոնների ընդլայնումը նոր պէտք է ծեռք բերել. այն պրոցէսը, ուր որ այս բանը տեղի է ունենում, սոցիալ-հոգեկան յարաբերութիւններում է գտնուում, մի բան, որ կարելի է շուտով դուշակել. այսինքն մի կուլտուրական ժամանակից միւսին անցնելու անցման պրոցէսն է այս։

Երևում է ուրեմն, որ մարդկային անհատի, ինչպէս և հասարակութեան հոգեկան կեանքի փոփոխութեան ունակութիւնը մեծ մասամբ գիտակցութեան ընդլայնումից է կախուած. այլ և միաժամանակ պարզուում է, որ զրգիռների ու զուգորդութիւնների փոփոխութիւններն իբրև հոգեկան փոփոխութիւնների համար ամենանշանակալիները, մեծ կարևորութիւն ունին։ Ամենադլխաւոր հարցը այս դէպքում սակայն ուրիշ է։ Երբ անհատական կամ հասարակական հոգեկան գիտակցութեան ընդլայնումների փոփոխութիւններ են առաջ գալի, ի՞նչ սկզբունքով են առաջնորդուում։ Այս պրոբլեմի լուծումը մեզ պատմագիտական տեսակէտից առաջ կտանէ։

Pessimist

(Կը շարունակուի)

ԱՔՍՈՐԱԿԱՆՆԵՐԸ

I

Այս հեռաւոր վայրում նրանք միայն երկու հոգի էին և ապրում էին միասին մի փոքրիկ սենեակի մէջ։

Ապրիլ ամսի մի գեղեցիկ պայծառ օր էր. արեգակը նոր բարձրացել էր ջինջ հորիզոնի երեսը և իր փայլուն, շլացուցիչ ճառագայթների տարափով ողողել ողջ Տ... քաղաքը իր սիրուն շրջականերով։ Այդպիսի մի օր այս երեք ամսուայ ընթացքում նրանք գրեթէ չէին տեսել։ Առաջին անգամն էր. որքան ուրախ էին, որ վերջապէս արժանացան մի լաւ օր տեսնելու։

Թեթև քամին սլսլալով անցնում էին նրանց սենեակի բաց լուսամուտի առաջից և երբեմն մտնում սենեակը՝ քնքշաբար դիպչում, հպւում խոնաւ պատերին ու կրկին դուրս գնում։

Բաց լուսամուտից երևում էին ծաղկափթիթ մեծ ու փոքր ծառեր, որոնք, ինչպէս ահագին ծաղկէփնջեր՝ օրօրւում էին փչող բարակ հովից և անդադար մեղմութեամբ՝ ինչպէս ձիւնի թեփուկներ իրանց շուրջը շաղ էին տալիս սպիտակ ծաղկաթերթեր, որոնք տատանուելով, ոլոր-մոլոր պտոյտներ գործելով օդի մէջ՝ թափւում, ծածկում էին գետինը ու կանաչները։ Նրանց ծաղկազարդ ճիւղերի շուրջը թռչկոտում էին ժրաջան մեղուները և իրանց միակերպ բզզոցով լցնում օդը։ Իսկ ներքև կանաչների վրայ խաղում էին երեք մատաղահաս երեխաներ։ Հեռուն, մի խնձորենու վրայ թառած, կռաւում էր մի սև ագռաւ, որը իր անախորժ կոնչոցի ձայնով խռովում էր դրսի հանդիսաւորութիւնը։

Աւագ հինգշաբթի օրն էր. տօնի պատճառով նրանք ազատ էին իրանց մասնաւոր, հասարակ զբաղումներից։ Երկուսով էլ սենեակումն էին։—Ուսուցիչ Միհրանը, մօտ քսան և հինգ տարեկան, առողջակազմ, բարեհամբոյր դէմքով մի երիտասարդ էր։ Իսկ գիւղացի Սիմոնը մռայլ, կնճռոտ դէմքով, ոսկրոտ, բարձրահասակ կմախքացած մարդ էր. նա քառասուն հազիւ կար, բայց արտաքինը յիսունից աւել տարիք ունեցողի տպաւորութիւն էր թողնում, որովհետև երեք ամսուայ մէջ նա այնպէս էր մաշուել ու

հալից ընկել, որ առաջուայ տեսնողը եթէ հիմի տեսնէր—էլ չէր ճանաչի։ Առաջ նրա մազերի մէջ մի հատիկ սպիտակ մազ անգամ չկար. բայց այժմ գլխի և երեսի մազերը բոլորը սպիտակել էին. նոյնիսկ յօնքերի մէջ երևում էին սպիտակ մազեր, որ այնպէս աչքի էին ընկնում ու փայլում։ Նրա խիտ յօնքերի տակից նայում էին զոյգ սևորակ, խոհուն, շիջած փայլով, խոր ընկած աչքեր, որոնք մի ինչ որ բանի վրայ ասես միշտ երազում, միշտ խորհում էին։ Նրա դէմքին ժպիտի հետք անգամ չկար. ժպիտը վաղուց մարել էր՝ ծիծաղը լռել... այժմ թախիծն էր նստել նրա չոր-չոր, զունատ երեսին։

Ուսուցիչը—ընդհակառակը. նա զուարթ էր, միշտ ասում, խօսում ծիծաղում էր, և երբէք տխուր չէր մնում։

—Ի՞նչ արած, կեանք է, շատ ժամանակ ասում էր նա,—պէտքէ յարմարուել, բայց երբէք չպէտք է ընկճուել...

Եւ այդ նա ասում էր հեշտութեամբ, որովհետև տանը կին, երեխաներ չունէր։ Բայց Սիմոնը ոչնց անէր։ Անդրկովկասի մի հեռաւոր անկիւնի յետ ընկած գիւղում կինը և հինգ երեխան տառապում ու գալարուում էին ամեն տեսակ զրկանքի առաջ։

Առաջինը աքսորուած էր իր «փնասակար վարքի» համար, իսկ Սիմոնը իբրև նրան մեղսակից։ Երկուսն էլ Ն. գիւղիցն էին աքսորուել միևնոյն օրը միասին։ Գալով Տ... քաղաքը նրանք միասին էլ բնակուեցին։

Ուսուցիչը կանգնած բաց լուսամուտի առաջ՝ հիացած նայում էր ծաղկած ծառերին, մանուկների ուրախ խաղին և հողը քչչող փոքրիկ ճուտերով շրջատատուած թխսին, որը անդադար խառնում էր հողը ու թաւալուում։

Միհրանը շարունակ նայում էր. և սակայն ի՞նչ խոհեր էին ծնուում նրա գլխի մէջ, ի՞նչ դառն մտքեր յուզում նրա կուրծքը... Բայց նա արտաքուստ ցոյց չէր տալիս այդ, այլ յափշտակուած նայում էր և ուզում էր վանել այն մտքերը, որ անհանգիստ կերպով պաշարում էին իրան։

Նրանից մի քիչ հեռու՝ գլուխը յենած աջ ձեռքին, խոհուն աչքերը յառած դէպի դուրս—հեռուները, սեղանի մօտ նստած էր Սիմոնը։ Նա մտածում էր. նրա մտածումները դառն էին, ծանր և ճնշող։

—Լաւ օր է, այսօր, Սիմոն բիձա. հետ դառնալով ասաց ուսուցիչը։

Սիմոնը գլուխը շարժելով նայեց ուսուցչին և ոչինչ չխօսեց։ Ինչ էր ասում—չհասկացաւ. միայն լսեց, որ խօսեցին, ձայն դիպաւ ականջին և ուրիշ ոչինչ։ Նա այդ ժամանակ գտնուում էր

իր տանը, երեխաները հաւաքուել էին շուրջը և թրւրոալով խօսում ու կարօտագին մօտենում էին իրան՝ ժպտերես. ինքը փայփայում էր նրանց գանգրահեր գլուխները, համբուրում և ժպտում ամենքին...

—Գեղեցիկ օր է, կրկնեց ուսուցիչը և հրճուանքից նրա բարակ շրթունքները յետ գնալով բացեցին սպիտակ ատամները։

Սիմոնն այս անգամ պարզ լսեց նրա խօսքերը. բայց կրկին չը հասկացաւ։

—Ի՞նչ ասիր, վարժապետ, հարցրեց նա մտազբաղ։

—Ասում եմ՝ հրաշալի օր է, պատասխանեց ուսուցիչը և հիասքանչ հայեացքով շարունակեց նայել դուրս։

—Լաւ, հա լաւ օր է, հոգոց քաշելով խօսեց Սիմոնը. բայց ինչքան լաւ լինի, հօ մեր օրերին չի հասնի...

Նա կրկին խորասուզուեց մտքերի անյատակ ծովը. գլուխը կախ ընկաւ կրծքին և մի փոքր թեքուեց դէպի աջ։ Այդ դիրքը նրան տուեց մի խղճալի կերպարանք։

Ուսուցիչը մի ակնարկով նայեց նրան և ինքն իրան տխուր շշնջաց.

—Խեղճ մարդ...

Լռութիւն տիրեց. ոչոք չէր խօսում. լսում էին միմիայն միմեանց շնչառութեան ձայները, դրսից ժեղունների միակերպ, տաղտկալի բզզոցը և ճնճղուկների ուրախ ճուողիւնը...

Լռութեան մէջ ժամանակը սահում էր աննկատելի կերպով։ Արեգակը կամաց-կամաց բարձրանում էր հորիզոնի երեսը. նրա շողերը այժմ աւելի ջերմ էին ու փայփայիչ։

Յանկարծ մի բան մտաբերելով՝ ուսուցիչը ցնցուեց։

—Ա՜, բացականչեց նա. ես պիտի գնամ պոստ նամակ ուղարկելու։ Այստեղ կաց, Սիմոն քիձա, շուտով կգամ։

Ասաց և գլխարկը ծածկելով դուրս գնաց։

—Վարժապետ, տես ինձ էլ նամակ կա՞յ, ձայնեց Սիմոնը ուսուցչի ետևից և ձեռքը ճակատին դնելով՝ մօտեցաւ բաց լուսամուտին։ Քամին քնքշօրէն շոյեց նրա տաք երեսը և միրուքը։ Նա նայում էր ծառերին, որոնց տակ խաղում էին երեխաները և ուրախ, զուարթ կանչերով լցնում օդը. նրա առաջ տարածւում էր ընդարձակ, կապոյտ հորիզոնը, որի երեսին տեղ-տեղ լողում էին ծւատուած, ցանցառ ամպիկներ։ Հեռուն բլուրները ծածկուած էին մուգ կանաչով... Այդ բոլորը նրա հոգում զարթեցնում էին հանդարտ, տխուր մտորմունք։

Նա յենուեց լուսամուտի փեղկին, ձեռքով բռնեց ծնօտը և խոր մտածմունքի մէջ ընկաւ։

Նրա մտքերը սլանում էին հեռու... այնտեղ ուր իր տունն էր՝ մենաւոր ու աղքատիկ, կծկուած այն սև, մամռապատ ժայռի տակ... այնտեղ էլ հիմի պայծառ օր է. բլուրները ծածկուած են կանաչով և անտառը խիտ սաղարթով. արօտների մէջ արածում է տաւարի հօտը. հովիւը նուագում է սրինգը և նրա ուրախ դայլայլի ելևէջները տարածւում են շրջակայքի վրայ։

Երբեմն կարծես նա ուշքի է գալիս ու տարակուսում։ Տեսնում է անծանօթ վայրեր... շինութիւններ... սենեակ... Մի վայրկեան յիշում է իրականութիւնը և տխրում, երեսը ծածկւում է կնճիռներով։ Բայց ահա երեխաների ուրախ խաղը նրա առաջ հանդէս է բերում մի բան, որ թարմ կերպով պատկերանում է առաջը.

... Կիրակի օր է. ինքն ու կինը նստած են տան շէմքում մի քիչ հեռու ծառերի տակ՝ կիսաստերկ, բոբիկ ոտներով խաղում են իր երեխաները։ Սաղարթախիտ, ստուերաշատ ծառերը խշշալով օրօրւում են նրանց գլխաւերևը, իսկ նրանք խայտալով, ուրախ. անհոգ ծիծաղով վազում են մէկմէկու ետևից ու թաքնւում հեռուում։ Ինքն ու կինը միասին նայում են նրանց և հրճւում...

—Երեխան լաւ բան է, Նունօ, ասում է կնոջը։

—Ի հարկէ լաւ բան է, հաւանութիւն է տալի կինը։

Եւ դարձեալ նայում են երեխաներին ու ժպտում...

Նա ուշքի եկաւ և աչքերը գցեց հեռուն՝ դէպի կանաչոտ բլուրները։

—Բայց հիմա ինչպէս կլինեն երեխաները, անցաւ նրա մտքով։—Ի՞նչպէս... ի հարկէ հիմի խեղճ երեխաները տխուր ու տրտում, որբերի նման, արցունքն աչքներին՝ լուռ ու անխօս նստում են պատերի տակ ու նայում ուրիշների խաղերին... իրանք էլ չեն խաղայ... այժմ նրանց սիրտը կոտրուած է. նրանք որբերի են նման... Եւ նրա առաջ պատկերացան երեխաները։

—Ա՜խ, բալէք, խոր հառաչեց նա և ուղղուեց։ Նրա շիջած աչքերում արցունքը փայլեց. երկու կաթիլ դուրս թափուելով՝ գլորուեցին նոր աւելի խոշոր կաթիլներ... Եւ նա երեխայի նման սկսեց հեկեկալ...

II

Երկար ժամանակ նա լալիս էր, տաք արցունքը առատաբար դուրս էր հոսում նրա սև աչքերի աղբերակներից ու կորչում միրուքի մէջ։ Բայց նա չէր հովանում. սիրտը միանգամից փուլ էր եկել և ուզում էր այնքան լալ, որ կուրծքը թեթևանայ...

Այդպէս խորասուզուած հեծկլտում ու լալիս էր նա, երբ յանկարծ դուռը բացուեց շառաչելով, և ուսուցիչը շտապով, ուրախ, ժպտերես ներս մտաւ՝ մի նամակ և մի փաթեթ ձեռքին բռնած։

Սիմոնը ծանրաբար բարձրացրեց գլուխը, թաց աչքերով նայեց ուսուցչին և հարցրեց.

—Ինձ նամակ կա՞յ, վարժապետ։

—Ո՛չ, պատասխանեց ուսուցիչը։—Միայն ինձ վրայ մի նամակ է և այս կապոցը, կարծեմ գրքեր են...

—Գրքե՞ր...

—Այո, գրել էի ընկերներիս, որ մի քանի կտոր գիրք ուղարկեն...

Նա ծանրոցը դրեց սեղանի վրայ, զգուշութեամբ բաց արաւ, պատռեց փաթաթած թուղթը, գցեց յատակին և սրտատրոփ բարձր ձայնով սկսեց կարդալ գրքերի վերնագրերը.

—Ը՛մմ... Աւ. Ահարոնեան՝ «Ազատութեան ճանապարհին»։ Մ. Գորկի՝ «պատմուածքներ», Կամիլ Ֆլամարիոն «Ուրանիա», Леонидъ Андреевъ: „Разсказы IV томъ“...

Մնացածները մանր-մունը մօտ քսան կտոր զրոյցներ ու պատմուածքներ էին։ Կար նաև Վ. Փափազեանի զրոյցներն ու պատկերները, որոնք միասին կազմուած էին մի շքեղ կազմով։

Մի առ մի մէկիկ-մէկիկ նայեց բոլոր գրքերին և կրկին դարսեց իրանց տեղը։

Սիմոնը, որ մինչ այդ ուշադրութեամբ լսում էր, յանկարծ հետաքրքրուած հարցրեց.

—Իսկ նամակում ի՞նչ են գրում, վարժապետ, նամակում...

Ու նստած տեղից ելնելով՝ մօտեցաւ ուսուցչին։

—Նամակո՞ւմ. այս րոպէիս կարդամ, ա՛յ։

Եւ գրքերը մի կողմ դնելով, նա բաց արաւ նամակը ու սկսեց կարդալ։

Նամակում մի քանի հոգի միասին գրում էին իրանց ընկերոջը, որ ուղարկում են 30 կտոր գիրք և շուտով էլի կուղարկեն. մխիթարում էին ուսուցչին, որ երբէք չմտածի, չտանջի իրան—ուրիշ ոչինչ։

—Ո՜հ... հառաչեց Սիմոնը հոգու խորքից։—Մերոնք մի նամակ էլ չեն ուղարկում, որ իմանանք՝ սաղ են, թէ մեռած... Ասա, ո՞վ ղարկի, ո՞ւմ գրել տայ խեղճը... խօսեց նա ինքն իրան և գլուխը առնելով ափերի մէջ՝ վերստին նստեց առաջուայ տեղը։

Ուսուցիչը գլուխն օրօրելով՝ ցաւակցաբար նայեց նրան։

—Դարդ մի անի, Սիմոն բիձա, ասաց նա։—Ինչ արած, կեանք է, պէտք է յարմարուել...

—Ախը, վարժապետ, դու էլ լաւ գիտես... ախը ինչի տէր եմ է... ինչ եմ...

—Գիտեմ, գիտեմ, Սիմոն բիձա՝ գիտեմ որ դուք... բայց պէտք է ուժեղ մնալ. թէ չէ մտածելով՝ ինչ կշինենք... Անիծուած կեանք է, չպէտք է ընկճուել դրա հարուածների տակ...

—Ախը, վարժապետ, հեշտ չէ... հինգ-վեց երեխայ՝ մի կին... ինչ անի... Իսկ արտերս, տաւարս... ով պիտի գլուխ քաշի դրանց... էլ ոնց չմտածեմ է...

—Ոչինչ, Սիմոն բիձա, ոչինչ. մի մտածի։ Մտածելը վատ է։ Այս գրքերից մէկը կարդամ, լսիր...

Այս ասելով նա վերցրեց մի փոքրիկ գիրք, բաց արաւ, թերթեց և սկսեց կարդալ.

«Մի անգամ աշնանը ես ընկայ...

Ու շարունակեց այդպէս։

Սիմոնը տխուր, ձեռքերը ծալած կրծքին, գլուխը թեքած մի կողմի վրայ՝ ականջ էր դնում։

Դրսևից դեռ նրա ականջին էր հասնում քամու մեղմ սլսլոցը, մեղրաճանճերի միակերպ երգը, երեխաների ուրախ կանչերը և քաղաքի միջով սլացող ֆուրգոնների բարձր, կոպիտ աղմուկը։

Այդ բոլորը նրան շշնչում էին մի տեսակ քաղցր նիրհ և ինքնամոռացութեան մէջ դնում։ Նրա ականջները խլում են, էլ չի լսում ընթերցանութիւնը։ Թւում էր նրան, որ ինքը իր տանն է, իսկ կարդացողը իր դպրոց յաճախող որդին, որ սերտում է դասերը վաղը դպրոց գնալու համար... Եւ նրա առաջ հանդէս է գալիս գիւղը իր գետնափոր խրճիթներով ու նեղ փողոցներով... Վար ու ցանքի ժամանակն է... ամենքն էլ աշխատում են։ Առաւօտ է. բոլոր գիւղացիները ճռնչան անիւներով սայլերը լծած՝ շտապում են հանդը։ Ինքն էլ իր արօտը պատրաստել է, ճաշի խոտը կապել և եզները լծում է, որ գնայ Վանաց-Ձորի արտը վարի... Նախ Ծաղիկի ականջը բռնում է լծում, յետոյ Աւանին։ Արօրը դնում է լծան վրայ, խոտը շալակում, եզներն առաջ անում և ճանապարհ ընկնում... բայց մի բան մոռացել է, հետ է դառնում։

—Կնիկ, հացը բեր... ձայնում է կնոջը—շուտ, եզնիքը գնացին...

Կինը հացը տալիս է և նա նորից ճանապարհ է ընկնում... Երկինքը ամպած է, չլի՞ թէ անձրև գայ, մտածում է նա, եզներին ճիպտում և թռչում բարակ առուի վրայից... հասնում է արտը. հենց մի քանի ակօս վարում է՝ անձրևը սկսում է կաթկթել. գընալով զալնում է ու յորդանում. էլ աշխատել չի լինում, հողը դառնում է ցեխ... Եզները կանգնեցնում է ու սպասում, որ անձ-

րևը կտրուի. իզո՞ւր։ Վարար անձրևը թափւում է, անընդհատ թափւում... Էլ ճար չկայ, վերադառնում է տուն։ Թրջուած շորերը հանում—չորացնում... յետոյ նորից հագնւում ու դուրս գալի տնից... Անձրևը կտրել է. արևը փայլում է կրկին. հեռւում տեսնւում է ծիածանը...

Նա սթափուեց ուսուցչի բարձրացած ձայնից, որ ոգևորուած կարդում էր.

«... Անձրևն անդադար կաթկթում էր նաւակի տախտակին և նրա ձայնը զարթեցնում էր տխուր մտածմունք...

Ու շարունակում էր։

Սիմոնը զարմացաւ. որտեղ էր և ինչ էր տեսնում... Նա աշխատեց վանել նոր առաջ եկող մտքերը. սակայն ի զո՞ւր. նրանք գալիս պատկերանում էին առաջը և ուշադրութիւնը գրաւում...

Նա երկու ձեռքով բռնեց գլուխը, որ նոր սկսել էլ տաքանալ ու բորբոքուել, քունքերը ուռել էին մտածմունքից. աչքերը մի տեսակ մթնում էին, սևանում։ Ցանկարծ մարմնով տաքութիւն անցաւ և սառը քրտինքը ծածկեց ամեն տեղ... Նա բարձրացաւ աթոռից, կանգնեց մի վայրկենաչափ և ուզեց առաջ քայլել՝ աչքերը նորից սևացան, գլուխը պտտուեց և ծնկները դողացին... թուաց թէ սենեակն էլ շարժուեց ու պտտուեց... Նա կրկին նստեց աթոռի վրայ՝ թուլացած, ուժասպառ...

Ուսուցիչը, որ մինչ այդ հետաքրքիր կարդում էր, զարմացած նայեց նրան և դողալով, անհանգստօրէն հարցրեց.

—Ի՞նչ եղաւ, Սիմոն բիձա։

—Ը՞հ, ոչինչ... հառաչելով, գլուխը կախ դցած պատասխանեց Սիմոնը.—գլուխս պտտուեց... ոչինչ...

—Ի՞նչպէս, գլուխդ ցաւո՞ւմ է... հարցրեց ուսուցիչը և վեր կացաւ, ձեռքը դրեց նրա այրուող ճակատին։

—Ճակատդ այրուում է, ասաց նա ձեռքը վերցնելով։

—Հա, վարժապետ, հա, ջանս էլ է այրուում։...

—Ասում ես՝ մարմինդ էլ։

—Հա, վարժապետ, հա...

Ուսուցիչը հնչակացաւ բանի էութիւնը. անմիջապէս շորերը հանել տուեց, պարկեցրեց անկողնում, լաւ ծածկեց, գլուխը փաթաթեց մի մեծ սպիտակ թաշկինակով և, գլխարկը դնելով, շտապով վազեց բժշկի ետևից։

Սիմոնը մնաց մենակ. նրա մարմինը շուտ-շուտ ծածկւում էր սառը քրտինքով։ Գլուխը տրաքում էր սաստիկ ցաւից. աչքերը ասես ուզում էին դուրս դալ իրանց խորշերից...

Բ. Ա. Ա.

Վերջը միւս անգամ

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

1. 606 ԿԱՄ ՀԱՏՍ

Ամեն երկիրների հասարակութիւնների մէջ մեծ իրարանցում է առաջ բերել գիտական աշխարհում նորերս կատարուած մի նշանաւոր գիւտ, որ կոչուած է բժշկելու աշխարհիս ամենատարածուած և իր բարդութիւններով ամենից վտանգաւոր հիւանդութիւն, այն է սիֆիլիսի բոլոր տեսակները։ Գիւտը արուած է Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում պրոֆ. Էրլիխի և նրա օգնական եապօնացի բժշկապետ Հատաի ձեռքով և անուանել են 606 կամ Հատա՝ վերջնիս անունով, իբրև դեղի ներդործութեան առաջին դիտողի։ 606 կոչուում է այն պատճառով, որովհետև Էրլիխի լաբորատորիայում կատարած փորձերի 606 անգամն է դտնուած այդ դեղը, որ մկնապեղային («արսէնոբէնզոլ») մի խառնուրդ է և լոկ մի անգամի սրսկումով բժշկում է սիֆիլիսի յամառ ձևերը։

Հեռագիրները հաղորդեցին, որ մի պրոֆէսոր այսօրերս բժշկական համաժողովում կարդացած մի զեկուցման մէջ յայտարարեց, որ 4000 կատարուած իր փորձերից միայն 4 մահուան դէպք է տեղի ունեցել, այն էլ յօրինուածքի ընդհանուր թուլութիւնից պատճառած, իսկ մնացեալ բոլոր փորձերը պրսակուել են լիուլի յաջողութեամբ։ Սակայն նորագիւտ դեղը, թիւրիմացութիւնների չբաղխելու պատճառով, առայժմս ինքը Էրլիխն է միայն պատրաստում իր լաբորատորիայում և ձրի բաժանում որոշ բժիշկներին իր հրահանգների հետ միասին և դեռ ոչոքի իրաւունք չէ տալիս շիճուկը պատրաստել, մինչև վերջնականապէս համոզուելը կատարեալ ներդործութեան մասին։

Լրագիրները լիքն են բաղմաթիւ նկարագրութիւններով, թէ ինչպէս աշխարհիս բոլոր ծայրերից օգնութեան կոչ են ա-

նում նշանաւոր յայտնագործողին, ուղարկելու իրանց նորահնար դեղից, որ 'ի դէպ նա չէ հասցնում պատրաստել ամենքի համար, այլ և անհամար մարդիկ ամեն օր շրջապատում են նորա բնակարանը իրանց ևս մատակարարելու դեղից և աղատելու ծանր հիւանդութիւնից։

Բայց այդ գիւտի նշանակութիւնը մեծանում է նրանով մանաւանդ, որ «արսէնօբէնզոլով» սկսել են փորձեր անել բժշկել և մի շարք ուրիշ հիւանդութիւններ, այն է ճահճատենդը, հարինքը և այլն. և այս նպատակով նոյն իսկ այս օրերս Կովկաս է դալու Պետերբուրգի յայտնի բժիշկներից մէկը՝ փորձեր անելու համար։

Եւ ով գիտէ, թէ Էրլիխի նշանաւոր գիւտը դեռ քանի տեսակ ուրիշ հիւանդութիւններ բուժելու է կոչուած...

---

2. ԴՐ. ԴՈՒԱՅԷՆԻ ՀՐԱՇԱԳՈՐԾ ԷԼԻՔՍԻՐԸ

Մենք արդէն տպեցինք մեր Վիեննայի թղթակցի հեռագիրը, թէ ինչպիսի անվստահութեամբ վերաբերուեց բժշկական աշխարհը Պարիզի վիրաբոյժ Դուայէնի յայտնագործութեան։ Այժմ Matin լրագրում կարդում ենք իրա, դր. Դուայէնի աւելի մանրամասն հաղորդագրութիւնը այդ գիւտի մասին։ Դր. Դուայէնի յօդուածը խիստ հետաքրքրական կերպով է առաջ բերում այն զեկուցումների բովանդակութիւնը, որ հեղինակն արել է Բուդապէշտի վերջին բժշկական կօնգրէսում և այժմ ընդգիտական միջազգային կօնգրէսում։ Այդ յօդուածի վերնագիրն է «Կեանքի երկարութիւնը։ Շնչառութեան գործարանների, որկորի և կաշուի խլիրդի (ракъ) վերջնական ոչնչացումը»։ Դուայէնի գիւտը, ինչպէս ինքն է գրում, 25 տարուայ աշխատանքի պտուղն է։ Վիրաբուժութեամբ պարապելը նրան տարել է դէպի մանրէների պատճառած հիւանդութիւնների ուսումնասիրութիւնը։ Իր աշխատանքների սկզբում նա դիմեց Պաստէորին խնդրելով ընդունել իրան իր ինստիտուտը։ Սակայն նա պահանջեց իրանից, որ վիրաբուժութիւնը թողնէ և այս բանին Դուայէնը չհամաձայնեց, որովհետև գտնում էր, որ աւելի արդիւնաբեր կլինի հիւանդ մարդուն ուսումնասիրելը, քան լաբորատորիական փորձերը։ Նա գնաց իր ճանապարհով և այժմ յայտնում է իր գտած մի նիւթի մասին, որը նա անուանում է «միկոլիզին» և որ, նորա խօսքով, ընդունակ է նախապաշտպանել

և բժշկել մեզ յայտնի գրեթէ բոլոր վարակիչ հիւանդութիւնները։

«Միկոլիզինը» բաղկացած է ֆէրմէնտներից հանած կոլլոիդներից։ Նա ընդունակ է գրգռել ֆագոցիտներին՝ արագութեամբ ոչնչացնելու միկրոբներն ու տոկսինները։ Միկոլիզին կուլ տալն ու սրսկելը, ասում է Դուայէնը, վերջապէս բժշկում է շնչառութեան գործարանների, որկորի և կաշուի հիւանդութեանց մեծ մասը։ Առանձնապէս էլէքտրաբուժութեան հետ միասին միկոլիզին սրսկելը ոչնչացնում է խլիրդը։ (Բ. Բ.)

Dr. Ն. Աղասեան

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Բ. Իշխանեան. Հասարակական գաղափարները Ռ. Պատկանեանի և Ս. Շահազիզի բանաստեղծութիւնների մէջ. ընդարձակ ներածութեամբ. Ռուսահայ վերածնիչների սոցիալական դաւանանքի բնոյթը. սոցիոլոգիական վերլուծութիւն. Թիֆլիս 1910—1 ռ։

Արշ. Շահնազարեան. խաւար աշխարհում. պատմուածքներ. Երևան 1910—1 ռ։

Հրաչեայ Աճառեան. պատմութիւն Հայոց նոր գրականութեան. պրակ Ա. Ն. Նախիջևան 1910—30 կ.

Էդմոնդո դէ-Ամիչիս. Հիւանդապահ որդին. թարգման. տ. Բիւրեղ, Հրատ. Աղբիւր-Տարազի 1910 Թիֆլիս 7 կ.

Սաք. Սահակեանց. սրբազան պատմութիւն հին ուխտի. 1910 Թիֆլիս.

Ուղեցոյց գիւղացի կոոպերատորին. Հրատ. բժ. Ա. Բուդուղեանի, Թիֆլիս 1910 25 կ. (Դիւղատնտեսի խմբագրութիւնից)

Յ. Մալխասեան. մեր բարեկամները. Թիֆլիս 1910. 15 կ.

Ս. Թառայեան-ընտանիք բ. հրատ. Թիֆլիս 1910. 10 կ.

Դպիր Ս. Քամալեանց, կրօն առաջին բաժ. աշակ. համար, Թիֆլիս 1910 գ. 20 կ.—նոյն երկրորդ բաժ. 15 կ.

Սիոն վ. տէր Մանուէլեան. Եգիտի կուրմանժ. Ախալցիա 1910 40 կ.

Ժամանակաւոր հրահանգ թեմական ժողովի. Վաղարշապատ 1910.

B. Lucifer. աշխատանքի և աշխատաւորի գաղափարը Ադա—Նեգրիի, Յ. Յակոբեանի և Շ. Կուրղինեանի բանաստ. մէջ. 1909 Ն. Նախիջևան 20 կ.

Յ. Կոստանեան. ուղտն ու էշը. 1910 Բագու. 25 կ.

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՆ

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԽՆԴԻՐ։—ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԹԻՒՐԹԻԱՑՈՒՄ ԵՒ ՄԻՏՏԻՆԳՆԵՐ։—ԴԱՐՁԵԱԼ ՕՐՄԱՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ։

Ռուսահայոց կեանքում վերջին ամիսներն առանձին կենսունակ խնդիրներ չեն եռում. մի հատիկ էական խնդիրը դպրոցական խնդիրն է։

Ներկայումս հայ լրագրութեան մէջ ահագին բանակռիւ է մղւում հայոց ուսումնարանների հոգաբարձութիւնների, ուսուցիչների և դպրոցական խնդրով շահագրգռուածների մէջ. բանակռիւի առիթ է տուել այն հանգամանքը, որ Յովհաննեան ուսումնարանի նոր հոգաբարձութիւնը միանգամից հեռացրեց դպրոցից տեսուչ Տ. Ռաշմաճեանին և ամբողջ ուսուցչական խումբը և տեսուչ նշանակեց Ներսիսեան դպրոցի ուսուցիչ Ա. Մալխասեանցին։ Այս դէպքը առիթ տուաւ բազմաթիւ բողոքների, որ ուսուցչական պատիւը ոտնակոխ է արուած, որ ուսուցիչները անկայուն և անապահով վիճակ ունեն և որ նոցա բաղդը կախուած է հոգաբարձուների և հոգևոր իշխանութեան քմահաճոյքից։

Շատ ճիշտ են ի հարկէ այդ բողոքները և մի անգամ ևս գալիս են ապացուցանելու, որ մենք, հայերս, անընդունակ ենք մեր հաստատութիւնները կառավարելու։ Բայց նշանակալից է այն, որ այս խնդիրը ծագեց այն դէպքից, երբ մի կուսակցութիւն հեռացրեց միւս կուսակցութեան մարդկանցը. մի հանգամանք, որ միշտ և ամեն ժամանակ կատարուել է առանց բողոքի և բողոքողի ձայներն էլ խեղդուել են իշխող կուսակցութեան ճնշման ներքոյ։ Ինչու՞ են մոռացուել այն ժամանակները, երբ մի կուսակցութիւն արձակելով Ներսիսեան դպրոցի տեսչին պաշտօնից և հրաւիրելով իր արբանեակ Բէգնազարեանցին տեսուչ, միանգամից արձակեց դպրոցի բոլոր ուսուցիչներին և յետ ընդունեց նոցանից միայն իր հաշիւներին ձեռնտու մի քանի անձանց. ինչու՞ են մոռացուել նման բազմաթիւ դէպքեր վերջին երեսուն տարուայ ըն-

թացքում, երբ նոյն դպրոցում տասնեակ անգամ կրկնուել է նոյն երևոյթը աւելի կամ նուազ չափով և բազմաթիւ ուսուցիչներ ու ծառայողներ փողոց են շպրտուել առանց որև է պատճառի ու թողնուել բաղտի կամքին։ Ինչո՞ւ են մոռացուել այն դէպքերը, երբ մի հոգաբարձութիւն իր մարդկանց պաշտօն տալու համար ինքնակամ կերպով դպրոցի ծրագիրն է փոխել և մէկ՝ հնախօսութիւն է մտցրել, մէկ՝ հաշուապահութիւն, մէկ՝ մարմնամարզութիւն և այդ մարդկանց հեռանալու հետ միասին ծրագրից դարձեալ հանել նորաստեղծ առարկաները։ Ինչո՞ւ չեն մտաբերում մարդիկ, որ հայ դպրոցի հոգաբարձութիւնները միշտ այն լիակատար ինքնավարական ազատութիւնն են վայելել իրանց գործողութիւնների մէջ, որպիսին չէ վայելում այդ հաստատութիւնը ոչ մի բարեկիրթ երկրում. հոգաբարձութիւնները թոյլ են տուել, որ դպրոցի ուսուցչական կազմը հիւրանոցներում ժողովներով դատապարտեն այնպիսի մասնագէտ հանճարներին, ինչպիսին Մակար Եքմալեանն էր, թոյլ են տուել, որ Եքմալեանը իբրև ուսուցիչ տարիներով դպրոցի ծառայի սենեակում անցկացնէ դասամիջոցների ազատ ժամերը, այդպիսով հոգեպէս տանջուի և վերջի վերջոյ խելագարուելով գերեզման իջնէ իսկ դոցա հեղինակները խրախուսուին. հոգաբարձութիւնները թոյլ են տուել, որ ապաշնորհ տեսուչներ և ծառայողներ հազար հազարներով աւելորդ վարձատրութիւն ստանան դպրոցական դրամարկղից, թոյլ են տուել, որ 4—5 տարիներ ծառայողներին ահագին կենսաթոշակներ սահմանեն և քսանական տարիներ ծառայողներին առանց թոշակի ճանապարհ դնեն, թոյլ են տուել դպրոցական խոշոր գումարների գոյութիւնը վրտանգի ենթարկել. և թոյլ են տուել շատ և շատ ուրիշ բաներ. և այս ամենի մասին մամուլը խորհրդաւոր լռութիւն է պահպանել. բայց եթէ մամուլը լռէ, Ներսիսեան դպրոցի գաղտնապահ «արխիւ»ը կաղաղակէ...

Ա՞յժմ էք, պարոններ, տեսնում հոգաբարձական շահատակութիւնները, երբ Ձեր կաշուին է դիպչում նոցա ներգործութիւնը. հապա ո՞ւր էիք այն ժամանակ։

Խնդրին այդ ձևակերպութեամբ մերձենալը շատ գծուծ բան է։ Նախ և առաջ բացէք թանձր քօղը մեր դպրոցների պատմութեան վրայից և ապա խօսեցէք։

Դալով մեր թիւրքահայ եղբայրներին, նոցա մէջ չարաչար պայքար է մղուում ներկայումս յեղափոխական կուսակցութիւնների մէկ կողմից և խաղաղ յառաջադիմական կուսակցութիւնների մէջ միւս կողմից։ Այդ պայքարը վերջերս արտայայտուել է միտինգային խնդրով, որ գաւառների եկեղեցիներում նոյն իսկ մի քանի զոհեր է տուել։

Միտինգը, յայտնի է, այն քաղաքական ցոյցն է կամ հրապարակական բողոքը, որ ամբոխի կողմից արտայայտւում է հրապարակի վրայ և որին ներկայ են լինում շահագրգռուած ժողովուրդները ինչ ազգին էլ որ պատկանելիս լինին, և միտինգներում ճառելու լեզուն էլ ըստ այնմ տարբեր է լինում։

Այստեղից հետևում է, որ միտինգներ կարող են կազմուել չեզոք տեղերում կամ բաց հրապարակի վրայ, որ ոչ մի ազգի սեպհականութիւնը չէ կազմում. բայց Տաճկաստանում Հայ յեղափոխականները ցանկանում են, որ այդ միտինգները գումարուին անպատճառ հայ եկեղեցիներում։

Ազգիս վեհափառ կաթողիկոսն իմանալով այդ, մօտերս մի կոնդակ ուղղեց Կ. Պոլսի հայոց պատրիարքին, որով արգելում էր հայոց եկեղեցիներում միտինգներ գումարելը։

Սակայն յեղափոխականները բողոքեցին հայրապետական այդ կարգադրութեան դէմ և բռնի կերպով միտինգներ գումարեցին հայ եկեղեցիներում, բայց այդտեղ արդէն դէմ կանգնեց խաղաղութեան սիրահար ժողովուրդը և ընդհարումներ տեղի ունեցան երկու կողմերի մէջ, որի ժամանակ եկեղեցիներում սպանուեցան մի քանի հոգի։

Հայոց եկեղեցին երբէք չէ արգելել ժողովներ կազմելը եկեղեցիներում՝ իր սպասաւորների ընտրութեան համար, սկսած կաթողիկոսից մինչև վերջին տիրացուն, եկեղեցական—տնտեսական և դպրոցական խնդիրների համար և այլն. և եթէ կուզէք, չէ արգելում նոյնպէս և միտինգներ գումարելը ազգային որևէ աղէտի ժամանակ ձայն բարձրացնելու եկեղեցու և ժողովրդի իրաւանց պաշտպանութեան համար. բայց միայն ազգայիններին և ոչ թէ ամեն ազգի խաժամուժ ամբոխին, որով եկեղեցին կորցնում է իւր ազգային նշանակութիւնը։

Օրինակներ շատ կան այս մասին անցեալ պատմութեան մէջ։

Մենք դէմ չենք նոյն իսկ, որ հայերը, եթէ ցանկանում են, միտինգներ գումարեն ամեն ազգութիւնների հետ միասին, միայն հայ եկեղեցուց դուրս։ Փառք Աստուծոյ, Տաճկաստանում ազատ տեղեր շատ կան դորա համար։

Պակաս յուզմունք չէ առաջ բերել երկու կողմերի հայերի մէջ և մի այլ դէպք, որ տեղի ունեցաւ Կ Պոլսի մայր եկեղեցու մէջ։—Կ. Պոլսի պատրիարքը, անշուշտ ժողովրդի ցանկութեամբ, թոյլ էր տուել Օրմանեան սրբազանին պատարագել Կ. Պոլսի Գումգաբուի եկեղեցում. նա արդէն առաւօտեան պաշտամունքի կարգը կատարել՝ պատրաստւում էր պատարագ սկսելու, երբ յանուն յեղափոխութեան՝ մի քանի հոգի ստիպում են նորան դադարացնել պատարագը. և իմաստուն եպիսկոպոսը խոհեմութիւն է համարում տեղի տալ բռնութեան առաջ. փոխարէնը պատարագում է մի քահանայ։

Այս տմարդի արարմունքի վրայ վրդոված է ազգի լուրջ և խոհուն դասը և սպասում է Կ. Պոլսի ամեն. պատրիարքի հրապարակական բացատրութեան։

ԼՈՒՐԵՐ

Ամսաթերթիս կանոնաւոր հրատարակութիւնը խանգարուեց այն հանգամանքով, որ թերթիս մայիս ամսի համարի համար շարուած նիւթերի մի մասի սրբագրութիւնն ու ձեռագրերը գտնւում էին մեր մի աշխատակցի մօտ, որ մի թիւրիմացութեան պատճառով բանտարկուեց անակնկալ կերպով և նորա հետ գրաւուեցան յիշեալ նիւթերը. այդ մասին խմբագրութիւնս յայտարարեց մամուլի միջոցով։ Այժմ, մեզ յաջողեց յետ ստանալ այն ամենը և խմբագրութիւնս կաշխատէ հասցնել պակաս համարները և նախկին կանոնաւորութեամբ հրատարակել «Լումայ» ամսագիրը։

Ազգիս վեհափառ Հայրապետը ս. Էջմիածնից բարեհաճեց այցելել Թիֆլիս. տեսակցեցաւ երկրիս իշխան կոմս փոխարքայի հետ և խօսակցութիւն ունեցաւ նորա հետ հայոց դպրոցական խնդրի առիթով և յուսադրուած մեկնեցաւ դարձեալ ս. Էջմիածին. Տայ Աստուած, որ այդ յոյսերն իրականութիւն ստանան մօտ ապագայում։

Առաջիկայ Սեպտեմբերի 12-ին ս. Էջմիածնում կատարուելու է մեռոնի օրհնութիւն, որի մասին «Արարատ» ամսագիրը պաշտօնապէս յայտարարել է՝ի գիտութիւն հայոց ազգի։

— Պետերբուրգի հայ գեղարուեստաբերների ու մասնագէտների մի խումբ կազմակերպում է մի նոր ընկերութիւն «Հայ գեղարուեստական ընկերութիւն» անունով, որի նպատակը պիտի լինի սէր և հետաքրքրութիւն զարթեցնել դէպի գեղարուեստը հայ հասարակութեան զանազան խաւերում։ Ծրագիրն արդէն յանձնուած է կառավարութեան 'ի հաստատութիւն։ Մշակ

— Յուլիսի 30-ին և 31-ին Մեծ Մասիս բարձրացան բնագիտութեան մագիստրոս պ. Բոգենտալ, մեքենայագէտ Վէյս, դոկտոր ֆոն-Դեցկ Պոստ, պ. Վեյֆելբախ, դոկտոր Նիւտոն, պ. Սէյյան և Պաղուայի անգլիական գեներալ կոնսուլ պ. Լինտոմ։ Հորիզոն

— Նախարարութիւնից հարց է ուղղուած ս. Էջմիածնի սինոդի դատախազին, թէ հայոց ինչ թեմական խորհուրդներ են կազմակերպուած, որ մինչև այժմ յայտնի չեն կառավարութեան և ինչ հիման վրայ. Նոյնպէս և պետական սենատը անվաւեր է համարել հարուստ կալուածատէր Միք. Արամեանցի ամուսնալուծութիւնը, որ կատարուած էր Էջմիածնի սինոդի վճռով։

— Մամուլի մէջ երևեցան մի քանի յօդուածներ, որոնցով առաջարկում են իբրև ամենաարժանաւորը և ձեռնհաս Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսչութեան (Սուրհ.) և Ներսիսեան Դպրոցի հայկաբանութեան համար հայագէտ պ. Կարապետ Կոստանեանցին։ Յայտնի է, որ պ. Կոստանեանը երկար տարիներ վարել է Ներսիսեան դպրոցի և Էջմիածնի ճեմարանի պաշտօնները և այժմ մամուլի մէջ նորան առաջարկում են նոյն իսկ այն անձինք, որոնք նորա տեսչութեան օրոք համարուում էին պ. Կոստանեանի հակառակորդները։

— Երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանուեց Թիֆլիսի քաղաքագլուխ իշխ. Զերբեզով, որի թաղումը կատարուեց մեծ շքով և քաղաքիս գրեթէ բոլոր հաստատութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Թերթիս խմբագիրը զրկուած լինելով հնարաւորութիւնից անձամբ մասնակցելու յուղարկաւորութեան, իր ցաւակցութիւնը յայտնեց քաղաքագլխի պաշտօնակատար պ. Ա. Խատիսեանին հետևեալ հեռագրով.— խորին յարգանքի արժանի իշխան Վասիլ Ի. Զերբեզովի տխուր յուղարկաւորութեան օրը Հայոց «Լումայ» ամսագրի խմբագրութիւնը յայտնում է իւր խորին ցաւակցութիւնը հայրենի երկրի ազնիւ աշխատաւորի մահուան առիթով։

Ն. Աղանեան տպարանը Բերլինում Բէրտհոլդի նշանաւոր ձուլարանում պատրաստել է տալիս նոր տեսակ հայերէն տառերի մայրեր «Աղանեան—Լիսիցեան» տիպի, որ կլինի սեպհականութիւն նոյն տպարանի։ Նոր տառերը պահպանում են իրանց հայկական ընոյթը, բայց յարմարեցրած են եւրոպական տառերի նորագոյն ձեւերին։ Մայրերը պատրաստ կլինին սեպտեմբերին և տառերը գործադրութեան մէջ կըմտնեն առաջիկայ աշնանից։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր բաժանորդներից ոմանք նամակներով հարցնում են, թէ ե՞րբ պէտք է ուղարկուի իրանց «Լումայ» ամսագրի ձրի յաւելուած «Եղիշէի Վարդանանց պատմութեան» նոր հրատարակութիւնը։ Հարկաւոր ենք համարում յայտնել, որ մեր պրէմիան ուղարկուելու է դեկտեմբերի համարի հետ և այն՝ միայն վճարող բաժանորդներին։

Խմբագիր-հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՊՈՒՄԻ Է
ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿՏԵՍՆԷ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Լատիներէն – հայերէն
Յաւելեալ համառօտ բերականութիւնով և բացատրութիւնով
կազմեց Կ. Ա.

Բացուած է 1910 *թ. բաժանորդագրութիւնը*

v *տարի* **ՀԱՍԿԵՐ** v *տարի*

մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնում մշտական աշխատակցութեամբ
ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ և ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

1910 *թ-ին* «ՀԱՍԿԵՐԻ ՑԱՒԵԼԻԱԾՆԵՐԸ» *լինելու են՝*

2 ԴՈՒՆԱՏԻՊ ՀԵՔԻԱԹ, 2 ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄՈՒԱԾՔ, 1 ՄԱՆԿ. ՊԻԵՍ, 1 ԲՆԱԳԻՏ. ԶՐՈՅՑ, 1 ՀԱՄԱՇԽԱՐՀ. ԺՈՂՈՎՐԴ. ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ, 3 ՎԷՊԻԿ, ՊԱՏՄՈՒԱԾՔ, ԵՐԳԻՇԱԲ. ԶՐՈՅՑ, 2 պրակ «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ԸՆՏԱՆԵԿԱՆ կրթութեան հարցերին նուիրուած

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՒՆՆ Է ՀԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ.

Տարեկան . . . . . **4** *ռ. առանց յաւելուածների* . . . . **3** *ռ.*
Պարսկաստանում . . . . . 4 *ռ.* 50 *կ.* . . . . . 3 *ռ.* 50 *կ.*
Արտասահմանում . . . . . 12 *ֆր.* . . . . . 9 *ֆր.*
Սկզբից (1905 թ. սեպտ. մինչև 1910 վերջը) 16 *ռ.* . . . . 2 *ռ.* 50 *կ.*

*Խմբագրատան հասցէն՝ Թիֆլիս, Բեհբութեան փող. 25—(*Тифлисъ, Редакція журнала „АСКЕРЪ“ Tiflis *(Caucase)* Rédaction du journ. «Hasker»

Խմբագիր—Հրատարակիչ Կաս. Լիսիցեան

Թիֆլիսում կարելի է դրեալ նաև «Գուտենբերգ», Բագուում Сотрудникъ, *գրախանութ։*

ՏՊԽՈՒՄ Է

ԴԻՒԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԻՐՔ Թ.

Յովսէփ Արղուբեան

Շարունակւում է 1910 թ. բաժանորդագրութիւն

ԴՐԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ **„ԼՈՅՍ“** ՇԱՐՈՒԹԱԹԵՐԹԻ

«ԼՈՅՍԻ» ՆՊԱՏԱԿՆ Է՝ կապ հաստատել Նոր-Նախիջևանի, Հիւսիսային Կովկասի, Խրիմի և ընդհանրապէս Ռուսաստանում ցրուած հայ գաղութների միջև, մասնակից անելով նրանց ընդհանուր հայկական կեանքին։

«ԼՈՅՍԻ» ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ.—Ն. Նախիջևանի, Ռոստովի ու շրջակայ հայ գիւղերի համար տարեկան՝ 3 ր., կէս տարին՝ 2 ր., 3 միսը՝ 1 ր.։ Ռուսաստանի այլ տեղերի—տարեկան 4 ր., կէս տարին՝ 2 50 կ.և ամիսը 1 ր. 50 կոպ.։ Արտասահմանի համար— տարեկան՝ 6 ր. կէս տարին՝ 3 ր.։ Համարն ամեն տեղ արժէ 10 կոպ.։

Ընդունում են յայտարարութիւններ ձեռնտու պայմաններով բոլոր լեզուներով.—տողատեղին I երեսում 20 կ., վերջին երեսներում՝ 10 կոպ.։

Հասցէն Нахичевань на Дону, редакція армянскаго журнала „ЛУЙСЪ“ Խմբագիր-հրատարակիչ՝ Բժ. ԳԷՈՐԳ ՌԷԻԶԵԱՆ։

15-Դ ՏԱՐԻ

1910

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1910 թուին Լուման լոյս է տեսնում իւր այժմեան դիրքով, բաղկացած 64—80 երեսներից, մեր մշտական աշխատակիցների գործակցութեամբ։ Ինչպէս միշտ, հարկաւոր դէպքերում, կտրուեն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

1910 թուի «ԼՈՒՄԱՅ»ի ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՂ բաժանորդները կստանան իբրև ՊՐԷՄԻԱ

ԵՂԻՇԷԻ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

աշխարհաբար նոր թարգմանութիւնը։

ԲԱԺԱՆԷԳԻՆՆ է տարեկան 6 *ռ., կէս տ.* 4*ռ.*
Արտասահման „ 8 „ „ 5 „

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՒ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԼՈՒՄԱՅ»-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆԷԳԻՆՆ է 4 ՌՈՒԲԼԻ

ԱՊԱՌԻԿ ՈՂՈՔԻ ՉԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizeiskaja, 7.